ԷՋՄԻԱԾԻՆ

1977

Ե

ՄԱ 146



ԼԴ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ամսագիր

1977



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի ապրիլի 20-ին, չորեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետի հրավերով, ուխտավորաբար Մայր Աթոռ ս. Էջմիածին ժամանեցին Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը և Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը՝ Նորին Սրբության հետ խորհրդակցելու համար այս աշնանը Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքում գումարվելիք եպիսկոպոսաց ժողովի կազմակերպման և եկեղեցական բնույթի այլ հարցերի շուրջ:

Ապրիլի 22-ին Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ խորհրդակցական ժողով՝ վերոհիշյալ հարցերի կապակցությամբ:

Ժողովից առաջ Նորին Սրբությունը ջերմորեն ողջունեց ներկայությունը սրբազան պատրիարք հոր և տ. Սերովբե արքեպիսկոպոսի՝ հայտնելով Իր ջերմ ուրախությունը նրանց Մայր Աթոռ ժամանման առթիվ:

Ապրիլի 24-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Մեծ եղեռնի 62-րդ տարելիցի առիթով Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը մեծ շքախմբով բարձրացան Ծիծեռնակաբերդ, Հայ նահատակաց հուշարձանի առաջ ծաղկեպսակ դրեցին և հավերժական կրակի շուրջ կատարեցին հոգեհանգստյան պաշտոն Ապրիլյան եղեռնի զոհերի հիշատակին:

Այնուհետև, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հայրը, տ. Սերովբե արքեպիսկոպոսը և Մայր Աթոռի միաբանությունը Մայր տաճարում ներկա եղան Հայ նահատակաց հիշատակին մատուցված սուրբ պատարագին և հոգեհանգստյան արարողությանը:

Ապրիլի 27-ին, չորեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը մասնավոր առաքելությամբ տ. Սերովբե արքեպիսկոպոսին գործուղեց Անթիլիաս (Լիբանան)՝ անձամբ հանձնելու Իր 26 ապրիլ թվակիր պաշտոնական գրությունը՝ ուղղված Մեծի Տանն Կիլիկիո Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսին, ի պատասխան նրա 1977 թ. հունվար 23-ի նամակի, որով հրավեր էր ուղղվում Մայր Աթոռին՝ մասնակցելու սույն թվականի մայիսի 22-ին Անթիլիասում գումարվելիք պատգամավորական ժողովին Տանն Կիլիկիո աթոռակից-կա-

թողիկոսի ընտրությանը՝ երկու պատգամավորներով:

Մայիսի 5-ին, չորեքշաբթի օրը, տ. Սերովբե արքեպիսկոպոսը Անթիլիասից վերադարձավ Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետին բերելով Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսի մայիս 2 թվակիր պատասխան նամակը:

Նույն օրը ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեց Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Երուսաղեմի հայոց պատրիարքական Աթոռի դիվանապետ, Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի վերատեսուչ տ. Շահե արքեպիսկոպոս Անեմյանը:

Մայիսի 8-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հայրը, տ. Սերովբե և տ. Շահե արքեպիսկոպոսները Մայր տաճարում ներկա եղան սուրբ պատարագին:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը տրվեց ողջերթի պաշտոնական ճաշկերույթ՝ ի պատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի, տ. Սերովբե և տ. Շահե արքեպիսկոպոսների:

Ճաշկերույթին ներկա էին ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Սարգիս Գասպարյանը, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, ճարտարապետ Վարազդատ Հարությունյանը, նկարիչ Գրիգոր Խանջյանը, ինչպես նաև Գերագույն հոգևոր խորհրդի անդամները և ուրիշներ:

Մայիսի 9-ին, երկուշաբթի օրը, երեկոյան, Երևանի հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի նիստ, ուր, ի շարս այլ հարցերի, քննարկվեց նաև Տանն Կիլիկիո աթոռակից-կաթողիկոսի ընտրության և օծման առթիվ Մայր Աթոռիս կողմից Անթիլիաս երկու պատգամավորներ ուղարկելու հարցը:

Ամենայն Հայոց կաթողիկոսի և Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսի միջև փոխանակված նամակների բովանդակությանց լույսի տակ Գերագույն հոգևոր խորհուրդը, Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո, որոշեց վերոհիշյալ առիթով Անթիլիաս ուղարկել, իբրև Մայր Աթոռ ս. Էջմիածնի ներկայացուցիչներ, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանին և Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ տ. Ներսես եպիսկոպոս Պոզապալյանին: Նիստին ներկա եղավ տ. Եղիշե սրբազան պատրիարք հայրը, ինչպես նաև՝ տ. Սերովբե և տ. Շահե արքեպիսկոպոսները՝ որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ:

Մայիսի 12-ին, հինգշաբթի օրը, տ. Եղիշե սրբազան պատրիարքը, տ. Սերովբե և տ. Շահե արքեպիսկոպոսները հրաժեշտ տվեցին Վեհափառ Հայրապետին, Մայր Աթոռին ու մեկնեցին լավագույն տպավորություններով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
12 մայիս 1977 թ.



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 22-ին, կիրակի. Երկրորդ Ծաղկազարդ.—Այսօր Վեհափառ Հայրապետը ս. պատարագ է մատուցում Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում և «Բանին կենաց» քարոզությամբ մխիթարում հավատացյալներին:

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը ժամանում է ս. Սարգիս և զանգերի ավետավոր ղողանջի տակ, «Հրաշափառ»-ով և եկեղեցական թափորով առաջնորդվում եկեղեցի՝ հավատացյալների խանդավառ ծափողջույնների և որդիական ջերմ արտահայտությունների ներքո:

Ժամը 11.30-ին սկսվում է հայրապետական հանդիսավոր պատարագը: Ս. Սեղանին սպասարկում են Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը, Մայր Աթոռի վարդապետներն ու սարկավագաց դասը: Մայր տաճարը լիքն է աղոթավոր բազմությամբ:

«Հայր մեր»-ից առաջ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը, հանուն Արարատյան թեմի թեմական իշխանության և հավատացյալ ժողովրդի, ջերմորեն ողջունում է Վեհափառ Հայրապետի շնորհաբեր ներկայությունը ս. Սարգիս եկեղեցու կամարների տակ հովվապետական այս այցելության ուրախ առիթով և խնդրում Ն. Ս. Օծությանը հայրական Իր օրհնությունը բաշխելու և կրոնաբույր ու հայրենաշունչ պատգամով ոգևորելու Իր հոգևոր զավակներին:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ԵՐԵՎԱՆԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Այնուհետև խոսք է առնում Հայոց Հայրապետը և օրվա մեծահրաշ կիրակիի տպավորության տակ խոսում հետևյալ բովանդակալից և հայրենաշունչ քարոզը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ
(1977 թ. մայիսի 22)

«Յաւել ի մեզ Տէր ամենակալ՝ զհաւատ, զյոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան»:

Սիրելի հավատացյալներ, մենք հայցում ենք երկնքից, Աստծուց, որ շատանա ու հետզհետե աճի մեր հոգիների մեջ՝ հավատը, հույսը և սերը: Հավատք ասելով նախ պետք է հասկանանք, հավատք առ Աստված, որ, այո՛, այս հոյակապ և անհունորեն կատարյալ և գեղեցիկ տիեզերքը մի հեղինակ ունի, որ չէր կարող մի պատահական երևույթ եղած լիներ: Ուրեմն նախ հավատք՝ դեպի Արարիչը տիեզերքի, մեր աշխարհի և մարդկանց: Հետո հույս. հույսը քրիստոնեական որ մեր կյանքը նույնպես պատահական երևույթ չէ այս երկրի վրա: Թեև այս կյանքը անցավոր է, սակայն մարդը կոչված է ուրիշ աշխարհի մեջ շարունակելու իր գոյությունը, այսինքն՝ հույսը հավիտենական կյանքի: Մարդկային արարածը իր ստեղծումի օրերից մինչև մեր օրերը, հազար-հազարամյակներ երբեք չի կարողացել ապրել մարդկայնորեն՝ առանց հավիտենական կյանքի հույսի:

Երրորդ գաղափարը սերն է. սեր դեպի մեր նմանները հիմնականում. սեր դեպի մեր մերձավորները, մեր ընտանիքի անդամները. սեր դեպի մեր բարեկամները, ազգականները, ծանոթները, ընկերները, բայց նա՛և սեր ավելի լայն իմաստով որ տարածվում է բոլոր նրանց վրա, որոնք մեր ազգի, մեր եկեղեցու զավակներն են, մեր գործակիցներն են այս կամ այն կերպով այս հայրենի տան մեջ: Միշտ կա և պետք է լինի զորավոր մի միասնականություն և եղբայրակցություն ազգային և հոգևոր իմաստով, միևնույն ժողովրդի զավակների միջև:

Ահա այս սերն է, որ խնդրում և աղերսում ենք երկնքից, որ ավելանա մեր մեջ, մեր ընտանեկան և ազգային-եկեղեցական կյանքում: Եվ կուզեինք ավելացնել նաև, թե սերը դեպի մարդիկ, սերը դեպի մեր նմանները պայմանավորված է մեր քրիստոնեական հավատքի և հույսի գաղափարներով: Ինչքան մենք զորավոր լինենք առ Աստված մեր հավատքի մեջ, ինչքան պայծառ լինի մեր գիտակցության մեջ, հույսը հավիտենական կյանքի, այնքան ավելի ճշմարիտ սեր կունենանք դեպի մեր նմանները, դեպի մեր եղբայրները: Եղբայրսիրությունը և մարդասիրությունը քրիստոնեական գիտակցության մեջ պայմանավորված են անքակտելի կերպով հավատքով և հույսով: Պատմության փորձն էլ պայծառ կերպով ցույց է տալիս այս խրոությունը: Միայն այն մարդիկ, որոնք կառչած են միայն նյութականության ու արծաթասիրության, միայն նրանք չեն կարող սիրել իրենց նմաններին. նրանք զուրկ են սիրո անարատ անշահախնդիր զգացումից: Ահա թե ինչու մենք կհավատանք թե մարդկային բարոյական կյանքի մեջ, նաև ազգային կյանքի մեջ, փրկարար դերն ունեն քրիստոնեական այս երեք առաքինությունները՝ հավատք, հույս և սեր, որոնք մկրտության պահին կնքահայրը քահանայի հարցումին պատասխանելով հայցում է այս շնորհները, այս առաքինությունները նորածին երեխայի համար:

Մենք մաղթում ենք, որ այս առաքինությունները և այլ առաքինություններ, որոնք բոլորն էլ բխում են նույն այս երեք հիմնական առաքինություններից, հզորապես մնան անսասան ու անբաժան կերպով՝ արմատացած հայ ժողովրդի հոգիների մեջ, մանավանդ նոր սերնդի գիտակցության մեջ, որպեսզի մեր ազգը ինչպես դարեր շարունակ եղել է ստեղծարար և շինա-

ՔԱՐՈԶԻ ՊԱՀ. ԵՐԵՎԱՆ, Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ. 1977 Թ. ՄԱՅԻՍԻ 22

բար, շարունակի նաև հետ այսու լինել այդպիսին. որովհետև այդ շնորհներն էլ պայմանավորված են հիմնականում նույն այս երեք առաքինություններով: Առանց սիրո, առանց մարդասիրական զգացմունքի այս աշխարհի վրա ոչինչ կարելի չէ ստեղծել՝ տնական, բարոյական և գեղեցիկ:

Մեր ազգն էլ, հակառակ իր բազում դժբախտություններին, տակավին ս. Մեսրոպի օրերից մինչև մեր օրերը միշտ իր հոգու մեջ վառ է պահել այս սիրո կրակը և դրանով կարողացել է ստեղծագործել մարդկային կյանքի բոլոր բնագավառներում:

Սիրո գաղափարի մասին խոսելիս քիչ առաջ ասացինք, որ տարածվում է նաև մեր բոլոր ազգակիցների վրա, մեր ժողովրդի զավակների վրա: Այդ նշանակում է, որ նա տարածվում է նաև այն տանը վրա, այն հողամասի վրա, որտեղ ապրում են նույն ազգի զավակները: Մեր խոսքը վերաբերվում է հայրենիքի սիրուն: Հայրենասիրությունն էլ սիրո ամենագեղեցիկ արտահայտություններից մեկն է, որով միշտ ժողովուրդները հպարտացել են:

Մեր ժողովուրդը իր ողջ պատմության ընթացքին բազում դժվար օրեր է ապրել: Դուք գիտեք: Բայց այս վերջին հիսուն-վաթսուն տարիների ընթացքում հայրենասիրական նոր պոռթկումով հայ ժողովուրդը կարողացել է ձեռք բերել այն, ինչ որ մենք ունենք այսօր իբրև ժողովուրդ. դա այսօրվա կենդանի, ապրող ու շնչող ու ծաղկող մայր հայրենիքն է, մեր Սովետական Հայաստանը, միակ և գերագույն մխիթարությունը բոլոր հայերի, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի: Եվ այդ հնարավոր եղավ մանավանդ 1918 թվականի Մայիսյան հաղթանակով, Սարդարապատի, Ապարանի և Ղարաքիլիսեի հաղթական ճակատամարտերի հետևանքով:

Հազար և ավելի տարիներե ի վեր մենք այսպիսի հաղթանակ չէինք ունեցել: Մեր ազգը համարյա ոչնչացվելու և պատմության թանգարանին հանձնվելու վիճակի մեջ էր գտնվում, երբ 1915-ի սև թվականին Օսմանյան կայսրության հրահանգով բնաջնջվեց մեր ժողովրդի ավելի քան կեսը: Ամբողջ Արևմտյան Հայաստանը անապատ և ամայի դարձավ, և ժողովուրդը կոտորվեց: Մենք հայերս այդ չենք մոռանում և երբեք չպիտի՛ մոռանանք: Եվ ահա, նույն սուլթանների և փաշաների կառավարությունը փորձեց բնաջնջումը շարունակել նաև Արևելյան Հայաստանի վրա, օգտվելով պատմական որոշ իրադրություններից, երբ գրեթե անտեր էր մնացել այս հողամասը: Բայց կատարվեց հրաշքը, գրեթե անսպասելի կերպով: Մենք լսել ենք այդ կռիվներին մասնակցող անձնավորություններից, ղեկավար անձնավորություններից, որ իրենք էլ չէին հավատացել, թե պիտի կարողանան հաղթել: Այնքան տկար էին. ոչ կարգին հագուստ ունեին, ոչ ուտելիք, ոչ անհրաժեշտ զինամթերք: Նույնիսկ երեխաներ և կիներ մասնակցեցին այդ մահու և կենաց կռվին: Եվ սակայն նրանք փայլուն հաղթանակ տարան: Փրկվեց Արևելյան Հայաստանը բնաջնջումից: Այդ հիմքերի վրա հաստատվեց 1920-ին Սովետական Հայաստանը ու սկսավ զարգանալ՝ շնորհիվ ռուս ժողովրդի անմիջական օգնության: Վերջնական խաղաղության, հարատև վերաշինության և ազգային մշակույթի զարգացման մի դարաշրջան բացվեց հայ ժողովրդի պատմության գրկին մեջ:

Սիրելի ժողովուրդ, այսօր մենք նախ պարտ ենք, ինչպես ամեն մայիսի 22-ին, աղոթելու բոլոր նրանց հոգիների համար, ովքեր հերոսաբար ընկան, իրենց կյանքը զոհեցին հայրենիքի փրկության համար Սարդարապատի հերոսամարտում: Ու չմոռանանք, որ աշխարհականների ու զորականների կողքին գտնվեցին նաև հայ հոգևորականներ՝ իրենց գլուխն ունենալով՝ հայրե-

նասեր Գևորգ Ե կաթողիկոսի կարգադրությամբ դեպի կրակի գծերը մեկնող Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանցը, որ խաչը ձեռին մինչև խրամատները գնաց կռվողների մոտ, որպեսզի նրանց հաղթանակի հավատք և հույս ներշնչի: Բայց մենակ չեղավ նա: Հիշվում են նաև բազմաթիվ հայ հոգևորականների անուններ՝ եպիսկոպոսներ և վարդապետներ և քահանաներ: Օրինակի համար՝ Հովհաննես քահանա Տեր-Մկրտչյանը՝ Գրամբա գյուղից, Զաքար քահանան՝ Կոտայքի Դազա գյուղից, որոնք իրենց սեփական նախաձեռնությամբ կամավորների գունդեր էին կազմակերպել և իրենք էլ նրանց գլուխ անցած մեկնել էին դեպի մահ, այսինքն դեպի հաղթանակ: Իսկապես համազգային մի ճակատամարտ էր: Հայ ժողովուրդը այն օրերին գիտակցում էր, թե ինչո՞ւ է կռվում և ինչո՞ւ է մահանում: Մահանում էին հերոսները, որպեսզի ժողովուրդը փրկվի, որպեսզի հազար տարուց ի վեր կործանված Հայաստանը վերականգնվի: Այսպես է, որ մենք ունենք այսօրվա ապրող ու ծաղկող հայրենիքը՝ Սովետական Հայաստանը:

1918—20 թվականներին ձեր քաղաքը՝ Երևանը, հազիվ քսան հազար հայ բնակչություն ուներ: Այսօր մեր մայրաքաղաքը մոտ մեկ միլիոն բնակչություն ունի, իսկ մեր երկիրը՝ մոտ երեք միլիոն: Այս հայրենիքի վերածննդյան և վերաշինության օրերին մենք միայն երախտագիտական զգացումներ ենք տածում դեպի մեր պետական իշխանությունները և մեր շինարար ժողովրդի զավակները: Մեր օրերի հայրենի վերածննդի ու լուսավոր առաջընթացքի ճանապարհին ունենք սակայն նաև որոշ հուսախաբություններ: Մեր խոսքը վերաբերում է այն մի շարք հայաստանաբնակ հայերին, որոնք մեկնում են մեր երկրից, որոնք լքում են մայր հայրենիքը: Խոր վիշտ է հաստատել, որ գտնվում են այնպիսի հայեր, որոնք մոռանում են ամեն բան, մոռանում են Եղեռնը, մոռանում են մեր նահատակների հիշատակը, մոռանում են Սարդարապատը, մոռանում են մեր ապագան և գնում են ո՞ւր՝ չգիտենք: Համենայն դեպս՝ դեպի կորուստ: Երբեմն արտասահմանից օտարազգի հյուրեր այցելում են Մեզ, Էջմիածնում: Երբեմն դրանցից ոմանք հարցնում են Մեզ, թե ճի՞շտ է, որ Հայաստանից մեկնող հայեր կան: Մենք պարզապես ամաչում ենք պատասխան գտնել: Անշուշտ պետք է ասել նաև անկեղծորեն, թե այնքան էլ պետք չէ կարևորություն ընծայել այդ տխուր երևույթին: Պարզապես բարոյական իմաստով, հայրենասիրական իմաստով դա մեր ժողովրդի այսօրվա կյանքի վրա մի սև բիծ է: Այլապես մենք ոչ մի պատճառ չունենք մտահոգվելու առհասարակ: Փառք Աստուծո, մեր ժողովրդի ամբողջ մայր զանգվածը այստեղ է: Արտասահմանի ամբողջ հայ ժողովրդի հայացքը ուղղված է դեպի մայր հայրենիք, առանց բացառության: Որոշ չափով շարունակվում է նաև ներգաղթը և վերջապես ամեն տարի 60.000 երեխա է ծնվում Հայաստանի հողի վրա: Մենք երջանիկ ենք այս իրադրությամբ և աղոթում առ Աստված, որպեսզի Տերը խաղաղության, անվտանգության ու ծաղկումի մեջ պահի մեր երկիրը, ուժ և եռանդ շնորհի մեր բանվորների, մեր գյուղացիների բազուկներին, հանճարի ճառագայթը շատացնի մեր մտավորականության, մեր գիտնականների և բոլոր նրանց, ովքեր ծառայում են այս հայրենիքին, բոլոր նրանց, ովքեր տիվ ու գիշեր աշխատում են, իրենց լավագույնն են մատուցում, որպեսզի ամենայն հայոց Մայր Հայաստանը հետզհետե առավել զորանա, աճի, ուռճանա, մեր եղբայրական բոլոր ժողովուրդների շարքին:

Մաղթում ենք, որ ձեր մեջ միշտ վառ մնա նաև սերը դեպի մեր մայր եկեղեցին և միշտ այսպես խուռներամ այցելեք մեր սուրբ տաճարները՝ ձեր

հոգիների մխիթարության, ձեր հոգիների խաղաղության և առաքինի գործոց լիակատար հաջողության համար:

«Յաւել ի մեզ Տէր ամենակալ՝ զհաւատ, զյոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան». ամեն:

Իր քարոզի ավարտին Հայոց Հայրապետն Իր այցելության առիթով հայրապետական Իր բարձր գնահատությանն է արժանացնում Արարատյան թեմում կատարված եկեղեցաշեն բոլոր աշխատանքները և նվերներ բաշխում:

Այդօր տարեդարձն էր նաև Սարդարապատի հերոսամարտի. «Յիշատակ աշխարհազօրաց և զօրավարացն հայոց որք կատարեցան ի հերոսամարտին Սարդարապատի 1918 ամի, վասն հաւատոյ և հայրենեաց»:

Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվում է հոգեհանգստյան պաշտոն Սարդարապատի հերոսամարտում ընկած հայ մարտիկների հիշատակին:

Ժամը 14.30-ին Վեհափառ Հայրապետը, հոգեպես մխիթարված Արարատյան թեմին տված Իր հայրապետական այցելությունից, վերադառնում է Մայր Աթոռ:



ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՀԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Եվ երբ այս ասաց, մինչ նրանք դեռ նայում էին, վերացավ, և ամպը նրան ծածկեց նրանց աչքերից: Եվ մինչդեռ ակնապիշ նայում էին նրա երկինք գնալուն, ահա նրանց երևացին սպիտակ զգեստների մեջ երկու մարդիկ, որոնք և ասացին. «Ո՛վ գալիլիացիներ, ինչո՞ւ կանգնել նայում եք երկնքին. այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք վերացավ, պիտի գա նույն ձևով, ինչպես տեսաք նրան երկինք գնալիս»:

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Երբ Պենտեկոստեի օրերը լրացան, բոլորը միասիրտ, միատեղ էին: Եվ հանկարծակի երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկածի նման. և լցրեց ամբողջ այն տունը, ուր նստած էին: Եվ նրանց երևացին բաժանված լեզուներ, նման բոցեղեն լեզուների, որոնք և նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: Եվ բոլորը լցվեցին սուրբ Հոգով ու սկսեցին խոսել այլ լեզուներով, ինչպես որ սուրբ Հոգին նրանց արտասանել էր տալիս: Եվ կային Երուսաղեմում բնակվող հրեաներ՝ ավելի երկյուղած մարդիկ, քան երկնքի տակ գտնվող բոլոր ազգերի մեջ: Եվ երբ այս ձայնը լսվեց, բազմությունը հավաքվեց ու խռնվեց, որովհետև լսում էին, որ իրենցից յուրաքանչյուրի լեզվով էին նրանք խոսում: Ամենքը հիանում էին և զարմանում. ու միմյանց ասում էին. «Չէ՞ որ սրանք բոլորը, որ խոսում են, գալիլիացիներ են. բայց ինչպե՞ս է, որ մենք նրանց լսում ենք մեր յուրաքանչյուրի բարբառով, որ ծնված օրից խոսել ենք: Պարթևներ, մարեր և իլամացիներ, և նրանք, որ բնակվում են Միջագետքում, Հրեաստանում և Գամիրքում, Պոնտոսում և Ասիայում, Փյուգիայում և Պամփյուլիայում, Եգիպտոսում և Կյուրենիայի հարևան Լիբեայի շրջաններում, և հռոմեացի եկվորներ՝ թե՛ հրեաներ և թե՛ հրեության դարձածներ, կրետացիներ և արաբներ,—լսում ենք, որ նրանք խոսում են մեր լեզուներով Աստուծո մեծագործությունների մասին»: Բոլորը զարմանում էին և միմյանց ասում. «Ի՞նչ ա:ետք է լինի սա»: Իսկ ուրիշներ, ծաղրելով, ասում էին. «Քաղցր գինուց հարբած կլինեն»:

ՊԵՏՐՈՍԻ ՃԱՌԸ ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ ՕՐԸ

Պետրոսը, Տասնմեկի հետ վեր կենալով, բարձրացրեց իր ձայնը և խոսեց նրանց. «Ո՛վ հրեաստանցիներ, և դուք ամենքդ, որ Երուսաղեմում եք բնակվում, այս ձեզ հայտնի թող լինի, և իմ խոսքերին ակա՛նջ դրեք. սրանք հարբած չեն, ինչպես որ դուք եք կարծում, քանի որ դեռ օրվա երրորդ ժամն է. այլ՝ այս ա՛յն է, որ ասվեց Հոլել մարգարեի բերանով. «Եվ պիտի լինի սրանից հետո, վերջին օրերին,—ասում է Աստված,—որ իմ Հոգուց պիտի թափեմ ամենայն մարմնի վրա, և ձեր որդիներն ու ձեր դուստրերը պիտի մարգարեանան. ձեր երիտասարդները տեսիլներ պիտի տեսնեն, և ձեր ծերերը երազներ երազեն. և իմ ծառաների ու իմ աղախինների վրա այն օրերին իմ Հոգուց պիտի թափեմ, և նրանք պիտի մարգարեանան: Եվ վերը, երկնքում զարմանալի գործեր պիտի ցույց տամ, իսկ ներքևում, երկրի վրա՝ նշաններ. արյուն և

հուր և ծխի մրրիկ. արեգակը խավար պիտի դառնա, և լուսինը՝ արյուն, մինչդեռ չի եկել Տիրոջ մեծ և երևելի օրը: Եվ պիտի լինի այնպես, որ ամեն ոք, որ Տիրոջ անունը կանչի, պիտի փրկվի»:

Ո՛վ իսրայելացիներ, լսեցե՛ք այս խոսքերը. Հիսուս Նազովրեցուն՝ այն մարդուն, որին Աստված ձեզ ներկայացրեց զորությամբ, նշաններով և զարմանալի գործերով, որ Աստված նրա միջոցով արեց ձեր մեջ, ինչպես դուք իսկ գիտեք, նրան, Աստուծո սահմանած խորհրդով և կանխագիտությամբ անօրենների ձեռքը մատնելով՝ փայտի վրա գամեցիք և սպանեցիք. նրան Աստված հարություն տվեց՝ քանդելով մահվան կապանքները, քանի որ հնարավոր չէր, որ նա բռնվեր դրանով: Ինքը Դավիթը նրա մասին ասում է. «Նախապես Տիրոջը ամեն ժամ տեսնում էի իմ առաջ, որովհետև իմ աջում է, որպեսզի չտատանվեմ. դրա համար իմ սիրտը ուրախ եղավ, և իմ լեզուն ցնծաց, և իմ մարմինն էլ պիտի ապրի հույսով, որովհետև իմ հոգին մահվան վայրում չես թողնի և ոչ էլ թույլ կտաս, որ քո սուրբը ապականություն տեսնի. ինձ ճանաչեցրիր կյանքի ճանապարհները, քաղցրորեն լցրեցիր ինձ քո ներկայության ուրախությամբ»: Ո՛վ եղբայրներ, պետք է համարձակությամբ ասել Դավիթ նահապետի մասին, որ և՛ մեռավ, և՛ թաղվեց, ու նրա գերեզմանը կա մեր մեջ մինչև այսօր. բայց որովհետև նա մարգարե էր և գիտեր, որ Աստված նրան երդվելով երդվեց նրա որովայնի պտղից մեկին նստեցնել իր աթոռի վրա, ուստի կանխօրոք իմանալով՝ խոսեց Քրիստոսի հարության մասին, թե նրա հոգին դժոխքում չթողնվեց, և ոչ էլ նրա մարմինը ապականություն տեսավ: Այս Հիսուսին է, որ Աստված հարություն տվեց, որին մենք ամենքս վկա ենք. Աստուծո աջով բարձրանալով, սուրբ Հոգու ավետիսը ընդունելով Հորից՝ սփռեց այս, որ դուք այժմ տեսնում եք ու լսում. որովհետև Դավիթը, որ երկինք չէր ելել, ինքն իսկ ասում է. «Տերն ասաց իմ Տիրոջը՝ նստի՛ր իմ աջ կողմը, մինչև որ քո թշնամիներին ոտքերիդ իբրև պատվանդան դնեմ»: Արդ, Իսրայելի ամբողջ տունը վստահորեն թող իմանա, որ նրան և՛ Տեր, և՛ օծյալ՝ Աստված է, որ արեց. այն Հիսուսին, որին դուք խաչեցիք»:

ԱՌԱՋԻՆ ՆՈՐԱԴԱՐՁՆԵՐԸ

Այս լսելով՝ զղջացին իրենց սրտում և ասացին Պետրոսին և մյուս առաքյալներին. «Ի՞նչ պիտի անենք, եղբայրնե՛ր»: Պետրոսը նրանց ասաց. «Ապաշխարեցե՛ք, և ձեզնից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և պիտի ընդունեք սուրբ Հոգու պարգևը. որովհետև ավետիսը ձեզ համար է, ձեր որդիների և բոլոր հեռավորների համար, որոնց կկանչի մեր Տեր Աստվածը»: Եվ ուրիշ շատ խոսքերով վկայություն էր բերում, մխիթարում նրանց ու ասում. «Ազատվեցե՛ք այն խոտորյալ սերընդից»: Ոմանք հոժարությամբ ընդունելով նրա խոսքը՝ մկրտվեցին. և այն օրը նրանք մոտ երեք հազար հոգով ավելացան:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Եվ նրանք հարատևում էին առաքյալների ուսուցման, հաղորդության, հացի բեկման և աղոթքների մեջ: Յուրաքանչյուրի անձի վրա ընկնել էր ահ և երկյուղ, և առաքյալների ձեռքով բազում նշաններ և զարմանալի գործեր էին կատարվում: Հավատացյալներն ամենքը միասին էին, և ամեն ինչ, որ ունեին, ընդհանուր էր. նրանք վաճառում էին իրենց կալվածքներն ու ինչքերը և բաժանում էին բոլորին՝ ում ինչ որ պետք լիներ: Ամեն օր միասիրտ՝ վաղ հաճախում էին տաճար, տներում էին հացը կտրում և ուրախությամբ ու սրտի պարզությամբ էին կերակուր ուտում: Օրհնում էին Աստծուն և ամբողջ ժողովրդի մեջ հարգանք էին վայելում: Եվ Տերը օրեցօր փրկվածներին նրանց վրա ավելացնում էր:

(Նոր Կտակարան, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1975 թ., էջ 318, 319—323)

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ
(ԵՂԻՎԱՐԴ)

ԲԱՐԻ ԼՈՒՐԸ

ՅՈԹ ՇԱԲԱԹՆԵՐ անցեր էին հավիտենական Վարդապետի խաչելութենեն և հարութենեն ի վեր, սակայն մեծ զոհին հիշատակը դեռ կմնար թարմ հոգիներուն խորը: Աշակերտներն ու հետևորդները ցավեն ընկճված և հալածվելե զգուշավոր, կմնային ծածկված աչքերե:

Հիսուսի հարութենեն հիսուն օրեր հետո, Երուսաղեմի մեջ կհանդիսավորվեր հունձքերու երախայրիքի տոնը, որուն կը ծորդվեր նաև օրենքի տվչության հիշատակը:

Հրեաստանի բոլոր անկյուններեն եկող ուխտավորները տաճարին ընծա բերեր էին իրենց հունձքերու առաջին պտուղները, բեռցած սայլերու և գրաստներու, իսկ զոհվելիք կենդանիներու եղջյուրները զարդարեր էին ցույնզգույն նարոտներով և ձիթենիի ոստերով: Նվիրաբեր յուրաքանչյուր խումբը ներս կմտներ պարիսպի արևելյան դուռեն, սրինգներու և ծնծղաներու նվագով և սաղմոսներու երգեցողությամբ:

Տաճարին հրապարակը կծփար ուխտավորներու երանգավոր բազմութենեն, որոնք երկյուղածորեն կիսնարհեին սրբարանեն հոսող լույսին՝ և խունկերու ծուխին՝ ճենճերազոհներու բույրով հագեցած, լսելով արծաթ փողերու ձայնը և սաղմոսներու երգեցողությունը բոկոտ Ղևտացիներուն:

Պենտեկոստեի այդ հանդեսին, գավթին մեկ անկյունը, իրենց զգուշավոր կերպարանքներով կկենային խումբ մը մարդեր ևս, ուխտավորներու հետաքրքրության առարկա: Իրենց ինքնությունը չէր որ կտպավորեր դիտողները, որովհետև Գալիլիացիներ էին և ընտանի բոլորին: Ուշագրավը իրենց կեցվածքն էր, որոնք գերագույն զգացումի մը մեջ ըղձակաթ ու պրկված՝ պատգամե մը լուսավորված հոն էին եկեր, հագնելու երկնքի զորությունը, համաձայն իրենց եղած խոստումին: Բոլորը վերացած երկնքին կնայեին, անհուն դողե մը բռնված: Բոլորի աչքերուն մեջ՝ լույսեր և դեմքերուն վրա՝ անսովոր անձկություն մը կար: Անոնք աստղերուն հասնելու ճիգին մեջ էին կարծես, անջատված ամբողջովին այս աշխարհեն:

Հետո հանկարծ ուժգին հով մը, բարձունքե մը իջած՝ կլեցներ տաճարին հրապարակը, խիտ՝ բայց զովաշունչ ալիքներով: Ամենքը քարացած՝ երկնքի խոնարհող կամարին կնայեին, ուրկե կայծակներ կտեղային վար, լեզուներու ձևով: Տաճարեն

ներս լուած էին սաղմոսները և բազմությունը զարհուրած, Գալիլիացիներուն կնայեր, որոնք բոցերով շրջապատված կաղոթեին բարձրաձայն: Բոլորի մտքին մեջ անգամ մը ևս կշինվեր հնոց նետվող մանուկներուն պատկերը, Դանիելի գրքին մեջ նկարագրված:

Բազմությունը երկյուղալից ակնածանքով տակավ կշատնար Գալիլիացիներու այս խմբակին շուրջը: Գլխավոր խոսողը միջին տարիքով, բարձրահասակ, խիտ ու գորշ մորուքով և մազերով մեկն էր: Ջերմեռանդ իր դեմքը և մանկունակ իր նայվածքը խորապես անկեղծ մարդու մը տպավորությունը կթողուր ամենուն վրա: Խոսողին ձայնը հակառակ իր մեղմ և անարվեստ շեշտին, կհնչեր ներշնչումով և տիրական, տարբեր աշխարհե եկող պատգամավորի նման, որ մոռցած էր ինքզինքը կարծես սրբազան իր պատգամին մեջ: Կզրուցեր դժվար հավատալի բաներու մասին, խստությամբ ու հավատքով, գրավելով ուշադրությունը խրմբված ունկնդիրներուն:

«Հիսուս որ խաչվեցավ Պիղատոսի հրամանով, Պասեքի նախօրյակին, ուրիշ մեկը չէր՝ բայց խոստացված Մեսիան: Խաչվողը հարություն առավ մեռելներեն և հայտնվեցավ մեզի բոլորիս, իր աշակերտներուն և հետևորդներուն: Անոր դեմքը նման էր մարդու մը՝ որ անցած էր մահեն, բայց կմնար կենդանի: Անմարմին մտածում մը կամ տեսիլք մը չէր ան, ծնունդ մեր երևակայության, որպեսզի անոր տալ ուզեինք մարմին ու ձայն, վերածելու զինքը սեփական գոյացության մը: Երեք տարիներ իրեն հետ եղանք, լսեցինք իր խոսքերը և վկաներ եղանք իր հրաշալի գործերուն: Ան գերագույն իրողությունն է բոլոր ժամանակներուն, բոցավառ լեռը գիշերվան մեջ, գարունը մեր օրերու խստումին, երջանկության ավետաբերը, որ մարդոց հանդիպեցավ անոնց վշտի ճամբաներուն վրա՝ իր տառապանքի բարձունքեն, խաչեն, բանալով ճամբան մեր փրկության: Սիրեց բոլոր մարդերը անխտիր և հրավիրեց զանոնք խմելու իր հոգիի հնձանեն երկնքի զմայլեցուցիչ գինին: Անիկա մեզի հետ էր, բայց նաև մեզմե անդին, երկրի վրա և երկնքի մեջ»: Ի զարմանս բոլորին, իր ըսածները հաստատելու համար մեջբերումներ կրներ սաղմոսներեն և մարգարեներեն, որոնք կնախաձայնեին Մեսիային գալուստը: Ունկնդիրներուն մեջ կային Երուսաղեմացիներ և արտասահմանեն եկողներ, որոնցմե շատեր տակավին կհիշեին Գալիլիացի Վարդապետին ողբերգությունը, որ Պասեքի տոնը վերածեր էր արյունոտ հանդեսի մը:

— Բնավ լսա՞ծ է որ մարդ մը մեռելներեն հարություն առած ըլլա», հեգնախառն կքրթմնջեին Սադուկեցիները, արհամարհանքով դիտելե վերջ խոսողն ու իր շուրջինները: «Այս անմիտները պետք է վտարվին տաճարի հրապարակեն, չպղտորելու համար ժողովուրդին մաքուր հավատքը»:

— Իրենց հարության հավատքին համար չէ որ պետք է քշվին այս սրբազան վայրեն», կհարեին Փարիսեցիները, «այլ անոր համար որ խաչված մը իբրև Մեսիա կդավանին. որովհետև գրված է, անիծյալ ըլլա ան՝ որ փայտեն կկախվի»:

Ամբոխին մեջ կեցած էր նաև երիտասարդ մը, արծվեքիթ, շողարձակ նայվածքով, կարճահասակ բայց հաստապինդ, որ կեռար իր զայրույթեն: «Հրեաներ», կգոռար ան, «այս մարդերը մոլորեցուցիչներ են, և հայհոյող ճշմարտության, որովհետև Աստուծո օծյալ կդավանին մեկը որ խաչին վրա մեռած է»: Բոլորը այս վերջինին կնայեին: «Սողոս Տարսոնացին է», կըսեր քովի Փարիսեցին իր ընկերոջը, «հոս աշակերտելու եկած է նշանավոր Ռաբի Գամաղիելին»:

Տպավորությունը սակայն սահմռկեցուցիչ էր, ունկնդիրներու մտքի և հոգիի ածուխներուն վրա կթափեին կայծեր, կրակե լեզուներու ձևով: Խոսողն ու իր շուրջինները կթվեին ըլլալ կարծես խորհրդավոր էակներ, որոնց վրա հանգչած էր Աստուծո հոգին: Դուրսեն եկող Հրեաները մանավանդ, ճնշումի տակն էին եղած հայտնության: Ուրիշներ, երազուն և մտախոհ, կզգային թե երկինքը նորեն կբացվեր իրենց գլուխներուն վերև, և Մեսիան, որուն մասին կխոսեր Գալիլիացի ձկնորսը, կեցած երկնքի մուտքին՝ կհրավիրեր բոլորը իր նոր արքայության:

— Մեսիա մը որ խաչվելե և թաղվելե հետո, հարություն առեր է մեռելներեն» կըքրթմնջեր Սողոս: «Ո՞ւր սորված են ասոնք այս բոլորը. հավանաբար հեթանոսներեն, որովհետև Քանանացիներուն Ատոնիսը և Բաբելացիներուն Բել Մարդուկը մեռնելեն վերջ կյանքի վերադարձած կնկատվին զիրենք պաշտողներեն: Մյուս կողմե սակայն այս եղկելիները իրենց ըսածը կհաստատեին մարգարեներու նախաձայնություններով: Եսայիին բառերը կարծես իրենց մեռած Մեսիային համար գրված ըլլային: Իսրայելի հույսը, Օծյալ Մեսիան, ան որ պիտի գա ամպերու վրայեն, շրջապատված երկնային ուժերով, որ պիտի հնձե բոլոր ազգերը և որաներու նման պիտի սփռե իր ոտքերուն առջև, ընտրյալը, որ Աստուծո հետ էր ստեղծագործութենեն առաջ, խաչվի՞ հեթանոսներեն, առանց իրեն օգնության կանչելու երկնային զորքերը: Սակայն որ-

քա՞ն կպատշաճեին Մարգարեին խոսքերը ըսվածներուն, ի՞նչ հրեշային զուգադիպություն» կխորհրդածեր Սողոս, ու չէր կրնար լուծում մը գտնել այս տհաճ հանելուկին:

Սողոս այս մտածումներուն մեջ էր, երբ ուսին զգաց հպումը իր երիտասարդ Բարնաբաս բարեկամին: Այս վերջինը բարձրահասակ էր և վայելչագեղ, թարմ մորուքով և գանգուր մազերով, որոնք կնորհնեին պսակը իր դեմքին:

— Սողոս», ըսավ ան քաղցրորեն, «ուշ պիտի մնանք առտվան դասախոսութենեն»:

— Իրավունք ունիս, սիրելի բարեկամ, Գալիլիացի այս ճամարտակները գողցան մեր ժամանակը»: Երկու բարեկամները ուղղվեցան դեպի ժողովատեղին, որ կգրտնըվեր Դավթի բերդին բովը:

2

Սողոս Տարսոնեն Երուսաղեմ եկած էր ուսանելու օրենքը, ճշմարիտ ճամբան բարեպաշտության: Իսկ Բարնաբաս կիպրոսաբնակ հարուստ ընտանիքի մը զավակն էր, նույն նպատակով ս. Քաղաք եկած: Երկուքն էլ ծնած էին հեթանոս աշխարհի և միջավայրի մեջ, սակայն հարտ՝ որ կաշակերտեին մեծահռչակ Գամաղիելի:

Դասախոսության նյութը, այդ օրվան, նվիրված էր մարդոց վարք ու բարքին, լաղված Ռաբիի մեծ հայր Հիլելի խոսքերեն, որոնց վրա ուսուցչապետը իրեն հատուկ մեկնություններ և լուսաբանություններ ավելցուցած էր:

Գամաղիել թեթև կազմվածքով սակայն պատկառելի երևույթով մարդ մըն էր: Գլխուն ուներ սև ապարոշ, որուն ճոթերը կիջնեին ուսերեն վար. իսկ խնամված մորուքը կերկարեր մինչև գոտին: Իբրև տիպար Իսրայելացի, իր ցեղին երազներով և հույսերով կօրորվեր: Օրենքը և լավագույն ապագայի մը երազը ամեն բան էին իրեն համար: Իր նախահայրերու եփած հացը և պատրաստած գինին գերագույն հաղորդությունն էր անցյալին:

Դասավանդութենեն հետո երկու բարեկամները իրենց վերադարձի ճամբուն վրա հանդիպեցան խմբված Հրեաներու, որոնք զարմանքով կխոսեին տաճարի գավիթին մեջ իրենց լսածներուն մասին: Գալիլիացիները մտածումներու իրական հեղափոխություն մը հարուցեր էին սիրտերու մեջ. կայծ մը պիտի բավեր որ Երուսաղեմը բռնկեր նոր բոցե մը:

— Կլսե՞ս» ըսավ Սողոսը իր ընկերոջ, «ահա՛ ինչ որ այդ թշվառականները կփորձեն ընել, անոնք ապականություն կցանեն Իսրայելի այգիին մեջ. պետք է արմատախիլ ընել այդ չարագործները»:

— Սակայն Գալիլիացի այդ ձկնորսները իրենց ըսածները կհիմնեին մեր մարգարեներու ուսուցումին վրա», հարց Բարնաբաս: «Անոնք չեն մերժեր Իսրայելի Աստվածը, ընդհակառակն՝ կհրավիրեին ժողովուրդը ապաշխարանքի, պատրաստվելու գալիք մեծ օրվան: Իրենց ըսածները իրականություններ ըլլային կարծես Եսայի Մարգարեին՝ Մեսիայի համար ըսված»:

— Իսրայելի հույսը, Օծյալ Մեսիան, ըլլա մեկը որ նախատվի և խաչվի՞, առանց ցույց տալու իր ուժը», պոռթկաց Սողոս, շեշտակի նայելով իր ընկերոջ դեմքին:

— Եթե ըսվածները Տիրոջ իմաստությամբ են», հարց Բարնաբաս, «մենք շուտով վկաներ կրնանք ըլլալ կարևոր դեպքերու. սակայն եթե Աստված չէ շինողը տունին, ի զուր կճգնին գործավորները»:

Սողոսին համար անընմբռնելի էին այս խոսքերը: Երկու անձեր կային իր մեջ, տիրապետելու մնայուն պայքարով՝ նման Հակոբին և Եսավին, իրենց մորը արգանդին մեջ: Իր մանկությունն ու պատանությունը անցած էր Տարսոն, շալագործ հորը համեստ հարկին տակ: Իր գիտակցության առաջին օրեն, կզգար թե ինքը կոզիաբնակ մըն էր ապականություն հորդող հեթանոս օվկիանոսին մեջ: Սինակոկին կից եղող դպրոցեն ստացավ իր նախնական կրթությունը, ծանոթացավ իր ժողովուրդի պատմության, օրենքին, Հնգամատյանին, և մարգարեական գրքերուն:

Սողոսի դյուրին բռնկող միտքը՝ խորապես ազդված էր մարգարեական հայտնություններեն և իր մտածումը, իրականութենեն անդին, կծփար գեղեցիկ մտապատկերներու ջուրերուն վրա, որոնց ալիքները իրեն կբերեին տեսիլներ քաղցր և հաղթական, իրենց փառքին ցոլքը սփռելով իր դեմքին: Կզգար թե մոտ էր օրը իր ցեղի հոգնաղետ ազատության, և Մեսիայի գալըստյան:

3

Տարսոնը սովորական քաղաք մը չէր այդ օրերուն, այլ Հռոմեական կայսրության բարգավաճ ոստաններեն մին, շողշողուն գոհարի մը պես նստած Տավրոսյան լեռներու շուքին: Կյութենս գետին ջուրերը, ձյուներեն գոյացած, կկապեին Փոքր Ասիո այս քաղաքը Միջերկրականին: Առևտուր Եգիպտոսեն, Ասորիքեն և հունական կղզիներեն, արհեստներ, լեզուներ, կրոնքներ, այլազան և խայտաբղետ, իմաստասիրական դրպրոցներ, Հռոմեական լեգեոններ և աշխարհի բոլոր անկյուններեն եկող օտարականներ կվերածեին զայն միջազգային ոստանի մը, հավասար Անտիոքի և Աղեքսանդրիոյ: Հա-

րըստության, հաճույքի և մտքի կեդրոն մը ըլլալեն զատ, Տարսոն կվայելեր պաշտպանությունը Հռոմի, և իր առանձնաշնորհյալ բնակիչները, Պոմպեոսի և Կեսարի օրերեն սկսյալ, ունեին քաղաքացիության իրավունքը: Սակայն անվաճելի ցոփությունը Արևելքի, լուծված հույն նուրբ ապականության, կվերածեին Տարսոնը անբարոյության մեծ կեդրոնի մը:

Հելլեններ, որոնց արյունը խառնված էր տեղացի ժողովուրդներու արյունին, կտիրապետեին: Անոնցմե վերջ իրենց թիվովն ու ազդեցությամբ կուգային Հրեաները, բերված հոն, մեծավ մասամբ, Անտիոքոս Եպիփանի օրերեն: Սողոսի ազգատոհմը վերջեն եկածներեն էր, ըստ ավանդության՝ Գալիլիայեն: Ան ինքզինքը կնկատեր Բենիամինի ցեղեն և իր Սողոս անունը կապանցեր Իսրայելի առաջին թագավոր Սավուղի անունեն, որ Բենիամինի ցեղեն էր: Սողոսի հայրը ծանոթ անձնավորություն մըն էր Տարսոնի մեջ և ուներ քաղաքացիության առանձնաշնորհումը, որ կտրվեր միայն անոնց, որոնք ազդեցիկ էին կամ հարուստ: Սողոս իր ծնունդեն ուներ այդ իրավունքը, որ շատ օգտակար պիտի ըլլար իրեն իր առաքելության ընթացքին: Հունարենը իր երկրորդ լեզուն էր, որուն շնորհիվ հաղորդ եղավ Հելլեն գրականության և ժամանակի տիրող գաղափարներուն:

Մեծ իղձ մը ուներ Երուսաղեմ երթալու, խմելու հրեական մշակույթը իր մաքուր աղբյուրեն, առ ոտս Հիլելի դպրոցին պետ՝ մեծանուն Ռաբի Գամաղիելի: Իր այդ փափաքը շուտով իրականացավ: Իրեն համար Երուսաղեմ ապրիլը դժվար չէր որովհետև հոն ուներ ամուսնացած քույր մը և ազգականներ:

Աստուծո սերը և Իսրայելի փրկության հավատքը զույգ խարույկներու նման կայրեին իր ներսը: Հավատքը ամեն օր ապրող իրականություն մըն էր իրեն համար: Ապառողջ էր ֆիզիքապես, ենթակա քանի մը հիվանդություններու. հակառակ այս իրողության խստակյաց էր: «Աստված սիրածները կտառապեցնե», կըսեր, «ենդուությունները Տիրոջ պարգևներն են սուրբերու տրված»: Կուզեր իր գոյության բուրգին հիմերը երկնքին մեջ հաստատել, զայն բարձրացնելու բաղձանքը կոչնչացներ իր մեջ աշխարհիկ բոլոր տենչերը: «Սուրբերը կատարյալ են», կըսեր, «որովհետև ճիգ ըրած են մեռնելու երկրավոր ամեն բաղձանքի համար, կեդրոնացնելով իրենց բովանդակ էությունը Աստուծո մեջ»: Հիլելի դպրոցը կհրահանգեր հոգ տանիլ առողջության, և ծանր ուխտերով չխաղալ սուրբերուն նմանելու խաղը, որ կրնար առաջնորդել ենթական հպարտության. իսկ հպարտությունը սուրբին համար նման էր խնձորին մեջ հնկող որդին: Գամաղիելի խրատն էր իր աշակերտներուն, երիտասարդ ամուսնանալ և ունենալ արհեստ մը, որպեսզի ծերության՝ կողովին մեջ հաց ունենային: Սողոս ուներ իր զբաղումը, իսկ իր կինը հավիտենական կույսն էր՝ Աստուծո Օրենքը:

Իր արհեստին բերումով, իբրև վրանագործ, հարաբերության մեջ էր հասարակ ժողովուրդին հետ: Կյանքը կճանչնար ոչ թե տեսություններեն, այլ մարդոց հետ ունեցած շփումներեն: Իր աչքին առջև էին ամեն օր խեղճ մարդեր և կիներ, նույնիսկ երեխաներ, որոնք կբաշխեին իրենց ժամանակը, անձը և ուժը՝ կտոր մը հացի փոխարեն, և շատ հաճախ չէին գտներ զայն: Այդ խեղճերուն միակ հույսը Մեսիան էր, որ օր մը պիտի կանչեր զիրենք հատուցման:

(«Հեթանոսաց Առաքյալը», Երուսաղեմ, տպարան ս. Հակոբյանց, 1975 թ., էջ 7—13)



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 1-ին, կիրակի.— Կարմիր կիրակի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Անանիա վրդ. Արաքաջյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ ի ձեզ և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոգի» (Մատթ. ԺԱ 29—30) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի Նորին Ս. Օծության նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ վերջերս Նյու Յորքում 103 տարեկան հասակում վախճանված Մայր Աթոռի հարազատ զավակ և ազգային բարերար Հայկ Գավուքճյանի մահվան առիթով:

Արարողությունից առաջ Վեհափառ Հայրապետը խոսք է առնում Իր և Մայր Աթոռի ցավակցությունը հայտնելու հանգուցյալի ընտանիքին՝ կնոջը՝ տիկին Ալիս Գավուքճյանին, բոլոր հարազատներին և ապա «Մեծանալ գործովք բարութեան» (Ա Տիմոթ. Զ 18) բնաբանով հանգամանորեն խոսում հանգուցյալի եկեղեցաշեն և կրթանվեր բարի ծառայությունների մասին, ծառայություններ, որոնք կատարվել էին ԱՄՆ-ի հայոց թեմում և ապա՝ Մայր Աթոռում: Նորին Սրբությունն Իր խոսքի ավարտին հավիտենական խաղաղություն է ցանկանում հանգուցյալին և «Հոգւոց» արտասանում Գավուքճյան գերդաստանի հին ու նոր ննջեցյալների հիշատակին:

*
* *

Մայիսի 8-ին, կիրակի.—Տօն երևման ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Խաչն կենարար որ եղեւ մեզ փրկութիւն, սովաւ ամենեքեան զքեզ բարեբանեմք» (Շարական) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը քարոզում է «Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա և զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղու-

թեան» (Շարական) բնաբանով: Վեհափառ Հայրապետը ջերմ սիրով ողջունում է Երուսաղեմի հայոց Նորին Ամենապատվություն տ. Եղիշե պատրիարքի, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե և Երուսաղեմի հայոց ս. Հակոբյանց վանքի դիվանապետ տ. Շահե արքեպիսկոպոսների ներկայությունը ս. պատարագին:

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհարանի սեղանատանը, ի պատիվ մեծահարգ հյուրերի, տրվում է ողջերթի ճաշկերույթ, որին ներկա էին նաև տ. Կոմիտաս, տ. Հուսիկ, տ. Արսեն սրբազանները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, մայրավանքի պատասխանատու ղեկավար աշխատողները, տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը, տ. Անանիա, տ. Եզնիկ տ. Մոմիկ վարդապետները, տ. Հակոբ աբեղան, հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավ. քհն. Մարուքյանը:

Հրավիրյալների թվում էին սիրված բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Վարազդատ Հարությունյանը, նույն հանձնաժողովի անդամ, ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը:

Ճաշկերույթին ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը:

Ընդունելության ժամանակ գեղեցիկ և հուզումնալից ճառեր են փոխանակում Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը: Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը հայրական Իր բարձր ուշադրությանն է արժանացնում Ռումինիայի հայոց առաջնորդական փոխանորդ տ. Զարեհ ծ. վարդապետի հոգևոր, քարոզչական ու վարչական գործունեությունը Բուխարեստի հայոց համայնքի ծոցում և նրա կուրծքը զարդարում վարդապետական ականակուռ լանջախաչով:

Տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը Հայոց Հայրապետին ուղղյալ որդիական իր երախտագիտության և շնորհակալության ջերմ խոսքն է ասում հայրապետական այս բարձր ուշադրությանն արժանանալու համար:

*
* *

Մայիսի 9-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 17-ին, Երևանի հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի լիագումար հերթական նիստը: Սույն նիստին հրավիրված էր նաև Երուսաղեմի հայոց տ. Եղիշե սրբազան պատրիարքը: Ժողովին մասնակցեցին նաև տ. Սերովբե և տ. Շահե արքեպիսկոպոսները՝ որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ:

Ժողովի բացումից անմիջապես հետո Վեհափառ Հայրապետը ջերմորեն ողջունում է ներկայությունը Մայր Աթոռի թանկագին հյուրերի և Իր գոհունակությունը հայտնում, որ սույն լիագումար նիստին ներկա են տ. Եղիշե սրբազան պատրիարքը, տ. Սերովբե և տ. Շահե արքեպիսկոպոսները:

Այնուհետև ժողովը զբաղվում է օրակարգում դրված մի շարք կարևոր հարցերի քննությամբ և ընդունում համապատասխան որոշումներ:

*
* *

Մայիսի 11-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20-ին, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաք, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը ողջերթի հայրական խոսք է ասում Ռումինիայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանին, որը շուրջ երեք շաբաթ ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում, և տ. Եզնիկ վրդ. Պետրոսյանին, որ մեկնելու է Աթենք՝ շարունակելու իր համալսարանական ուսումը:

Ապա «Փիլիսոփայության զարգացումը հելլենիստական շրջանից սկսած մինչև Թովմա Ագվինացի և ապա մինչև 18-րդ դարի իմաստասիրությունը» թեմայով զեկուցում է կարդում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող աթենաբնակ Ստեփան Զաթալյանը: Դասախոսությունն ունկնդրվում է հետաքրքրությամբ:

Դասախոսությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մայիսի 15-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ աբեղ. Գոլոնճյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ հայր սուրբը քարոզում է «Լոյս տուր Տէր աչաց իմոց, զի մի երբեք ննջեցից ի մահ» (Սաղմոս ԺԲ 4) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էին նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող «Նոր Հաճըն» ամսագրի տնօրեն Կարապետ Թուր Սարգիսյանը, Հաճընի Մերձավոր Արևելքի

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

կենտրոնական վարչության անդամ տեր և տիկին Կարապետ Բարահեքյանները, Լիբանանի հայ հասարակական գործիչ տեր և տիկին Փանոս Թիթիզյանները:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի նախագահությամբ հոգեհանգստյան պաշտոն է կատարվում լիբանանահայ հասարակական գործիչ Հարություն Ջերեջյանի մահվան տարելիցի առիթով:

* * *

Մայիսի 18-ին, չորեքշաբթի.—Այսօր Բյուրականի հայրապետական վիլլայում տեղի է ունենում միաբանական հերթական հավաք: Վեհափառ Հայրապետը այս առթիվ բարի ճանապարհ է մաղթում Միքայել սարկավագ Զևյանին, որը շուրջ մեկ տարի սովորում էր հոգևոր ճեմարանում և մի քանի ամսով արձակուրդ էր մեկնում Ամերիկա՝ ծնողների մոտ, և Մայր Աթոռի միաբան տ. Հակոբ աբդ. Գալլենճյանին, որը շուտով մեկնելու է Գերմանիա, Մայնի Ֆրանկֆուրտ, հետևելու աստվածաբանական դասընթացներին:

* * *

Մայիսի 19-ին, հինգշաբթի.—Համբարձումն Քրիստոսի. Ցիշատակ փոխադրութեան Հայրապետական Աթոռոյն հայոց ի Սսոյ ի ս. Էջմիածին, յամի Տեառն 1441: Տօն ազգային. հանդէս և մաղթանք յեկեղեցիս Հայաստանեայց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Անանիա վրդ. Արաբաջյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի Իջման ս. սեղանի առաջ կատարվում է Հայրապետական մաղթանք: Այս առթիվ քարոզում է պատարագիչ հայր սուրբը. «Եւ եղև յորհնելն նորա զնոսա՝ մեկնեցաւ ի նոցանէ և վերանայր յերկինս» (Ղուկ. ԻԴ 51) բնաբանով:

Համբարձման տոնը միաժամանակ Հայրապետական Աթոռի Սսից դեպի ս. Էջմիածին փոխադրության տարեդարձի հիշատակի օրն է: Քարոզիչ վարդապետը իր խոսքի մեջ վեր է հանում հոգևոր, եկեղեցական և հայրենասիրական նշանակությունը այդ մեծ իրադարձության մեր եկեղեցու և ժողովրդի կյանքի պատմության մեջ:

Այնուհետև Հայոց Հայրապետի հանդիսադրությամբ կատարվում է Հայրապետական մաղթանք:

* * *

Մայիսի 22-ին, կիրակի.—Երկրորդ Մաղկազարդ.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը: «Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է տ. Արսեն եպս. Բերբերյանը՝ «Խաղաղութեամբ քով Քրիստոս Փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս և զբանս, ամրացո զմեզ և աներկիւղ պահեա յամենայն չարէ» ս. պատարագի Խորհրդատեղի պատարագիչ քահանայի «Ի ձայն» աղոթքի բնաբանով:

Այսօր նաև է «Ցիշատակ աշխարհազօրաց և զօրավարացն հայոց, որք կատարեցան ի հերոսամարտին Սարդարապատի 1918 ամի, վասն հաւատոյ և հայրենեաց»: Քարոզիչ սրբազանն իր հայրենաշունչ քարոզում ոգեկոչում է նաև հիշատակը Սարդարապատի հերոսամարտի և զոհված հերոսների, որոնք ընկան անձնուրացորեն, մարտի դաշտում, անհավասար մարտում, «վասն Ցիսուսի և վասն հայրենեաց»:

Հավարտ ս. պատարագի տ. Արսեն եպիսկոպոսի նախագահությամբ կատարվում է հոգեհանգիստ՝ Սարդարապատի նահատակների հիշատակին:

* * *

Մայիսի 25-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20-ին, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հերթական հավաք՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, որից հետո նաև՝ դասախոսություն, որին ներկա եղան հոգևոր ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը և լսարանների ուսանողությունը:

Օրվա դասախոսն էր ֆրանսիացի երիտասարդ հայագետ, Երևանի պետական համալսարանի ֆրանսերեն լեզվի և քաղաքակրթության ու մշակույթի դասախոս Ժան-Պիեռ Մահեն:

Դասախոսը ներկաներին խոսեց այն հիմնական ազդակների մասին, որոնք նրան մղել էին զբաղվելու հայոց լեզվի և մշակույթի ուսումնասիրությամբ, ծանոթացրեց հայագիտության բնագավառում ցարդ իր կատարած հետազոտություններին, իր աշխատանքի արդյունքներին և ապագա ծրագրերին:

Դասախոսությունը լսվեց մեծ հետաքրքրությամբ: Հարցերի դասախոսը պատասխանեց նաև ներկաներից ոմանց հարցերին:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց հարգելի դասախոսին, Իր և բոլոր ներկաների կողմից, նրա շահեկան և բովանդակալից դասախոսության համար:

*
* *

Նույն օրը Մայր Աթոռ ժամանեցին Պրո-Օրիենտե կաթոլիկական կազմակերպության ներկայացուցիչները՝ դոկտոր Թեոդոր Պիֆլ-Պերչևիչը՝ Ավստրիայի հասարակական և մշակութային գործերի նախկին մինիստր, և Պրո-Օրիենտեի նախագահ Ալֆրեդ Ծտիրման՝ նույն կազմակերպության վարիչ քարտուղարը:

Մայր տաճար այցելելուց հետո, Վեհափառ Հայրապետը ընդունեց հարգարժան հյուրերին Վեհարանում, որոնք և Հայոց Հայրապետին հանձնեցին Վիեննայի կարդինալ արքեպիսկոպոս Ֆրանց Կյոնիգի նամակը:

Հայոց Հայրապետի և Պրո-Օրիենտե կաթոլիկական կազմակերպության հարգելի ներկայացուցիչների միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ էկումենիկ ոգով, միջեկեղեցական մի շարք կարևոր հարցերի շուրջ:

Հարգելի հյուրերը Մայր Աթոռում գտնըված օրերին այցելեցին ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան, Ծիծեռնակաբերդի Հայ նահատակաց հուշարձան և ուխտագնացության մեկնեցին ս. Գեղարդ վանք:

Մայիսի 27-ին Պրո-Օրիենտե կազմակերպության ներկայացուցիչները հրաժեշտ տվեցին Վեհափառ Հայրապետին և մեկնեցին լավագույն տպավորություններով:





ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ
(Դերենիկ Դեմիրճյանի ծննդյան հարյուրամյակի առթիվ)

Լրացավ հայ գրականության մեծ դասականներից մեկի՝ Դերենիկ Դեմիրճյանի ծննդյան հարյուրամյակը: Ողջ հայ ժողովուրդը, թե՛ մայր հայրենիքում և թե՛ սփյուռքում, արժանավայել շուքով և հանդիսավորությամբ նշեց այդ տարեդարձը: Մեր հանրապետությունում այդ առթիվ կազմակերպվեցին գիտաժողովներ, մեծ գրողի կյանքին ու գրական վաստակին նվիրված հոբելյանական հանդեսներ, հավաքույթներ, զեկուցումներ և գեղարվեստական բազմաթիվ այլ միջոցառումներ, որոնք պանծացրին հայ ժողովրդի երախտաշատ զավակի հիշատակը՝ նրա ծննդյան հարյուրամյակը վերածելով հայ մշակույթի իսկական տոնի:

Մայիսի 18-ին Երևանի օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ Դերենիկ Դեմիրճյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված կառավարական հոբելյանական հանդիսավոր նիստ, որին մասնակցեցին ականավոր գրողներ, գրականագետներ, գրաքննադատներ, մշակույթի գործիչներ, ինչպես նաև եղբայրական հանրապետություններից ժամանած պատվիրակություններ:

Հիշարժան տարեդարձի առթիվ մեծարանքի հանդիսավոր երեկոներ տեղի ունեցան նաև Սովետական Միության մայրաքաղաք Մոսկվայում և միութենական մյուս հանրապետություններում:

Հայ գրականության պատմության մեջ իր պատվավոր և հաստատուն տեղն ունի Դերենիկ Դեմիրճյանը: Նա գրական ասպարեզ իջավ քաղաքական բարդ իրադարձություններով, ազգային ու սոցիալական տագնապ-

ներով հղի մի ժամանակաշրջանում: Այդ իրադարձությունների ծանր պայմաններում հասակ առած գրողի՝ դառնություններով և վերիվայրումներով լի կյանքը, երիտասարդ տարիքում նրա ցուցաբերած բազմազան հետաքրքրությունները գրականության, փիլիսոփայության, երաժշտության, մանկավարժության նկատմամբ, կանխահասորեն ձևավորեցին նրա խուզարկու միտքը, ընդարձակեցին նրա մտահորիզոնը:

Դեմիրճյանը կրտսեր սերնդակից էր Աղայանի, Թումանյանի, Իսահակյանի, որոնց հետ նրա ունեցած սերտ բարեկամությունը, հաստատված մտավոր կապերը, խառնը-վածքների փոխներգործությունը հենց ըսկզբից նպաստավոր նախադրյալներ հանդիսացան երիտասարդ գրողի նախասիրությունների, նրա գրական ճաշակի հաստատման համար:

Դեմիրճյանը հայ գրականության մեջ մուտք գործեց բանաստեղծություններով: Նրա առաջին բանաստեղծությունները լույս տեսան «Տարազ» և «Մուրճ» ամսագրերում: Այնուհետև, 1899 թվականին, հրատարակվեց բանաստեղծությունների նրա անդրանիկ ժողովածուն: Այդ նույն շրջանում տպագրվեցին նաև նրա մի քանի պոեմները: Դեմիրճյանի ստեղծագործական կյանքի առաջին տասնամյակում գրված այդ բանաստեղծությունների և պոեմների մեջ արտահայտված են կյանքի կարոտի, անհաս սիրո քնքուշ զգացումներ՝ խառնված անձնական վշտի ու տառապանքի գրավիչ շեշտերով, մարդկային կյանքի և բնության երևույթների մասին փիլիսոփայական մտորումներով: Սակայն այդ բանաստեղծություններն ինքնուրույն խառնվածքի տեր մի գրողի անհատականության կնիքն ունենալով հանդերձ իրենց վրա՝ հեղինակի գրական տաղանդի վավերական արտահայտությունները չեղան: Դեմիրճյանի ստեղծագործական տարերքը զուտ բանաստեղծությունն ու բանաստեղծականը չէր: Նա զգաց, որ հարուստ հույզերով ու խոհերով փոթորկվող իր ներքնաշխարհը չի կարող սպառել բանաստեղծություններով, և անցավ արձակի: Դեռևս իր ուսումնառության տարիներին Թիֆլիսում, Մոսկվայում և ապա Ժնևում Դեմիրճյանը հաղորդակից լինելով մարդկային մշակույթի բարձր արժեքներին և ստեղծագործաբար յուրացնելով համաշխարհային մեծ դասականների երկերը՝ արդեն ձեռք էր բերել մտավոր լուրջ պատրաստություն և սեփական աշխարհայացք: 1900-ական թվականների առաջին տասնամյակից սկսած հաջորդաբար լույս տեսան նրա արձակ և դրամատիկական գործերը՝ «Ավելորդը», «Տերտերը», «Ժպիտը», «Միայն մեկը» պատմվածքները, «Վասակ», «Դատաստան» պատմական ու փիլիսոփայական դրամաները և այլ ստեղծագործությունները, որտեղ կյանքի առավել լայն ու համապարփակ ֆոնի վրա, գեղարվեստական ավելի հղկված ձևերի մեջ թրթռացին և արձագանքեցին մարդկային աշխարհի, բնության, սիրո, գեղեցիկի ու տգեղի, բարու ու չարի մասին գրողի ունեցած մտքերն ու զգացումները: Դեմիրճյանի այս շրջանի ստեղծագործությունների հերոսները կյանքի լուսանցքի վրա նետված, անշուք, դժբախտ, բարձր մղումներից զուրկ մարդիկ են, հասարակական անարդար կարգերի, դժբախտ պայմանների զոհեր: Կյանքի խոր ու համակողմանի իմացությամբ օժտված գրողին հատուկ էր փոքրի մեջ տեսնել մեծը, առանձին փաստի մեջ՝ ընդհանրականը, մարդու ճակատագրի մեջ՝ ժողովրդի ճակատագիրը: Այս տեսակետից բնորոշ են հատկապես Դեմիրճյանի «Ավելորդը», «Տերտերը» և մի քանի այլ պատմվածքներ, որոնք հեղինակի նախասովետական շրջանի ստեղծագործությունների մեջ առանձնանում են որպես հոգեբանական լայն ընդգրկում ունեցող միջազգային չափանիշով մեծարժեք գործեր: Այս պատմվածքների մեջ նուրբ հոգեբանի նրա քննախույզ հայացքն ավելի ու ավելի է իջնում մարդու բարդ ներաշխարհի անհատակ վիհերը, ի խնդիր մարդկային հոգու այն թաքուն, շարժիչ ուժերի բացահայտմանը, որոնցով պայմանավորված են լինում հաճախ մարդու ամենաանհավատալի, առեղծվածային արարքները:

Դեմիրճյանի գրական տաղանդն առավել մեծ ու ներգործուն ուժով դրսևորվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո: Որպես արդեն կազմավորված և մեծ կենսափորձ ունեցող գրող, որպես իր ժողովրդի բախտով ու ապագայով տևապես մտահոգված մարդ և զգաստ ու արթուն քաղաքացի նա խորապես ընմբռնեց իր հայրենիքում տեղի ունեցող քաղաքական, սոցիալական և բարոյական վերափոխությունների նշանակությունը իր ժողովրդի ճակատագրի համար և ստեղծագործական նոր ավյունով ու ոգևորությամբ լծվեց նոր կյանք կառուցող, նոր պատմություն կերտող իր ժողովրդի հավաքական ապրումների, հույզերի, տենչերի, նրա կենցաղի ու հոգեբանության էական գծերի ճշմարտացի պատկերմանը: Այդ տեսակետից նշանակալից ստեղծագործություններ են Դեմիրճյանի «Հանգստի տանը», «Սաթոն», «Մերկե», «Կայարանի Ակոբը», «Նարգիզ» և այլ պատմվածքներն ու վիպակները, որոնց գլխավոր հերոսներն ազնիվ ձգտումներով այրվող, նոր հասարակարգի կառուցման

համար պայքարող անձնուրաց մարդիկ են:

1923 թվականին լույս տեսավ հեղինակի «Քաջ Նազար» կատակերգությունը: Սա մի յուրահատուկ երկ է և բացառիկ տեղ է գրավում Դեմիրճյանի ստեղծագործական ժառանգության մեջ: Հեղինակը յուրովի իմաստավորելով և մշակելով ժողովրդական այս հիասքանչ ստեղծագործությունը՝ նրան տվել է համամարդկային հնչեղություն: Մեծ գրողի գրչի տակ «Քաջ Նազար»-ը դարձել է մարդկային կյանքի արատավոր երևույթները բնութագրող մեծարժեք գեղարվեստական երկ, իսկ նրա հերոսը՝ այդ երևույթների ոլորտում գործող հավերժական կերպար: Սուր դիտողականությամբ և նուրբ երգիծանքի զգացողությամբ օժտված գրողը ժողովրդական հեքիաթում ծավալվող գործողությունների ֆոնի վրա քողազերծել ու խարազանել է հասարակական բազում չարիքների ծնունդ տվող մարդկային թերությունները՝ վախկոտությունը, ծուլությունը, ապիկարությունը, պարծենկոտությունը, արկածախնդրությունը, սնահավատությունը, մեծախոսությունը, տգիտությունն ու հետամնացությունը, ի խնդիր մարդու բարոյական մաքրության ու կատարելագործման:

1939 թվականին Դեմիրճյանը հրատարակեց «Երկիր հայրենի» պատմական դրամա, որի նյութը վերցված է միջնադարյան Հայաստանի պատմության հերոսական մի դրվագից՝ Բագրատունիների մայրաքաղաք Անիի պաշտպանության համար ծավալված պայքարի անցքերից: Հավատարիմ մնալով ժամանակի պատմական իրադարձություններն անշեղորեն ու ճշգրիտ վերարտադրելու պարտադիր սկզբունքին՝ հեղինակը մանրազնին կերպով հետազոտել ու հավաքել է տվյալ պատմական եղելությանը վերաբերող բոլոր հավաստի աղբյուրները և այդ հենքի վրա, գրողի ստեղծագործ երևակայությամբ, պատմական դեպքերի զարգացման ընթացքը որոշող մղիչ գործոնների խոր իմացությամբ, կարողացել է ստեղծել գեղարվեստական կենդանի ու բախտուն թատերական մի երկ, որը շնչում է խոր հայրենասիրությամբ, ժողովրդի ու նրա ստեղծած հոգևոր արժեքների հանդեպ անսահման սիրով ու հավատով:

Հայրենական պատերազմի տարիներին, երբ սովետական բոլոր ժողովուրդների հետ հայ ժողովուրդը ևս կյանքի ու մահվան կռիվ էր մղում համայն մարդկային քաղաքակրթությանն ու ժողովուրդների ազատությանը սպառնացող ընդհանուր թշնամու դեմ, Դեմիրճյանն ստեղծեց իր «Վարդանանք» հերոսական պատմավեպը, որն իրավամբ համարվում է հեղինակի ստեղծագործությունների թագն ու պսակը: Պատերազմի այդ ծանր ու դժնդակ տարիներին Դեմիրճյանի այս երկը եկավ բորբոքելու իրենց երկրի ազատության, հայրենիքի սրբությունների պաշտպանության համար սրբազան կռվի ելած հայ մարտիկների հայրենասիրական ու ազատասիրական զգացումները, սեր նվիրելու պանծալի կյանքի օրինակով ուժ և ոգի ներշնչելու նրանց, որպեսզի ավելի ուժգին սիրեն իրենց հող հայրենին, իրենց դարավոր մշակույթը և ավելի ուժգին ատեն այդ սրբությունները ոչնչացնել փորձող վայրագ թշնամուն: Դեմիրճյանի «Վարդանանք»-ը մի բարձրագոչ ու սրտաբուխ պատգամ է՝ ուղղված նաև իր ժողովրդի գալիք բոլոր սերունդներին, տևապես մաքառելու բռնության և բազմատեսակ փորձությունների դեմ, հանուն ինքնահաստատման, հանուն ազգային դիմագծի անաղարտ պահպանման:

Զարգացնելով մեր դասական պատմավիպագրության ավանդույթները՝ Դեմիրճյանը մի նոր աստիճանի բարձրացրեց ժամանակակից հայ պատմավիպագրությունը՝ հաղորդելով նրան գաղափարական լայն ընդգրկում, փիլիսոփայական խորք, հոգեբանական ճշմարտացիություն: Ինչպես իր նախորդ պատմական դրամայի, այնպես էլ այս ծավալուն ստեղծագործության մեջ Դեմիրճյանը մեծ գիտնականի խորաթափանցությամբ մխրճվելով մեր անցյալի պատմության խորքերը՝ կարողացել է ճիշտ ըմբռնել, գնահատել և իրական ու կենդանի գույներով երևան բերել տվյալ ժամանակաշրջանի մեր ժողովրդի կենցաղային ու հոգեբարոյական դիմապատկերի էական գծերը: Պատմավեպում ժողովուրդն իր բոլոր իմաստներով՝ զինվորական, շինական, հոգևորական, ռամիկ, ազնվական և այլն, հանդես է բերված ոչ միայն իբրև իր հայրենիքը, իր հողը, իր մշակույթը և հոգևոր արժեքները պաշտպանող հզոր ուժ, այլ նաև իբրև պատմություն ստեղծող, պատմությանն ուղղություն և ընթացք տվող վճռական գործոն: Այս հիմքի վրա է, որ հեղինակին հաջողվել է վարպետորեն կերտել ժողովրդի ձայնն ու ոգին հանդիսացող Վարդանի, Եղիշեի, Մեծ Տիկնոջ, Արտակ Մոկացու, Սահակի, Առաքելի, Արծվիկի, Աստղիկի, Անահիտի և այլոց կենդանի, համոզիչ, ապրող ու մշտապես ոգեշնչող ներպարները:

Դեմիրճյանի գրական հարուստ ու բազմաբնույթ ժառանգության մեջ նրա գեղարվեստական տաղանդի ակնառու արտահայտություններից է նաև նրա հմայիչ լեզուն, որը խորապես ինքնատիպ է ու ներգործուն: Նրա լեզվի հիմնական հատկանիշներն են անսեթևեթ պատկերավորությունը, գունա-

գեղությունը, հղկվածությունն ու զսպությունը: Թարմ մակդիրների, տպավորիչ համեմատությունների, ճոխ աֆորիզմների ճարտար կիրառումով նա կարողացել է ստեղծել գեղարվեստական խոսքի փայլուն մի հանդերձանք, որն իր վրա կրում է գրողի անհատականության, նրա նկարագրի ուժեղ դրոշմը:

Դեմիրճյանի ծննդյան հարյուրամյակը երջանիկ մի առիթ հանդիսացավ ողջ հայ ժողովրդի համար՝ մի անգամ ևս արտահայտելու իր երախտագիտությունը, իր անվերապահ հիացումն ու սերը մեծ գրողի հանդեպ, մի գրող, որը միշտ կենդանի, արթուն հետաքրքրությամբ հետևեց և արձագանքեց իր ժողովրդի ցավերին և ուրախություններին, պարզ ու հասարակ մարդկանց ձգտումներին ու ապրումներին, և որի թողած գրական ժառանգությանը բնորոշ եղան բարությունը, մարդասիրությունը, հայրենասիրությունը և հաստատումը բարոյական մնայուն արժեքների:

Համաժողովրդական հարգանքի այս սրտաբուխ արտահայտություններին միանում է նաև Մայր Աթոռ ս. Էջմիածինը՝ իր գրագետ և հայրենասեր Հայրապետի օրհնությամբ բերելով իր ջերմ երախտագիտությունը մեծավաստակ գրողի գրական մեծարժեք ժառանգությանը և նրա անմահ հիշատակին, գրող, որը մեր աքանչելի մայրենին և հայոց հերոսական պատմությունը սովորեց ս. Էջմիածնի ներշնչող մթնոլորտում, Գևորգյան ճեմարանի հովանու ներքո:

ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ



ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՔ
(Հատված)

Հայոց ժողովուրդը գործում էր իր գերագույն ճիգը—փրկում էր իրեն... Դաժան էր այդ ճիգը, անգութ, և դրա մեջ էլ էր նրա գերագույն իմաստությունը: — Փրկությունը: Վարդանի և Վարդանանց արյունը տվեց նրան այդ ելքերը:—Հնարը: Հնարավոր էր, ուրեմն և պետք է փրկվել: «Գազանը խոցված էր կարևեր»:

Ատոմը, Արշավիրը, Համազասպը երբեմն ետ էին նայում անցած ճանապարհին և տխրությամբ հիշում այն քաջերին, որ այս ճանապարհով եկան այս հաղթությունը ձեռք բերելու:

Գյուղացիական զանգվածներն սկսեցին ազդել իրենց թվով: Ջորքն սկսեց սեղմվել նրան, ջերմանալ նրանով:

Սրտապնդիչ էր երկիրը: Ռամկական, ժողովրդական դիմադրությունը ծավալվեց, սկսեց ամեն կողմից հարվածել պարսից զորաբանակին, ցերեկային հարվածներին հաջորդեցին գիշերայինները: Ապա սկսեցին զգզգել թշնամուն, բաժան-բաժան արին, գցեցին իրենց հետևը լեռներն ու կիրները, սկսեցին մաշել ամեն ժամ անդադար:

Գնում էին հայոց ժողովրդի հետևից Նյուսալավուրտը, Դողվրմը, հետևից Միհրներսեհը, Պերոզը, Վախթանգը, մոգպետները: Նաև Վասակը՝ իր դավաճանակիցներով:

«Վիրավոր գազանը» սակայն համառ էր ընկել հայոց ժողովրդի հետևից, մունչում էր, խորդում էր իր փղերով, խրխնջում էր իր բազմահազար նժույգներով, զրնգում, որոտում էր, թեև գնում էր հաղթանակի երթով, բայց չէր կարողանում հաղթահարել: Պատրանք էր այդ հաղթությունը: Բանակը ձեռքից գնացել էր, մաշվում էր:

Հեռու հորիզոնում, հյուսիսային կողմը մի փոշու հրաշեկ սյուն ծայր առավ և սկսեց վեր ոլորվել թաթառի նման: Նա բանի գընում աճում էր:

Սրածայր սվինքներ բաժանվեցին նրանից և սլացան դեպի Վարդանանց կռվող բանակը:

— Վրացինե՞րն են, աղվաննե՞րը,—գոչեցին զինվորները:

Սրատեսները ջոկել էին երկու խառն զորաբանակի դրոշները:

Աննկարագրելի ցնծությունը համակեց երեք եղբայր ժողովուրդների զորքերին: Ցնծություն, որ ծանոթ է նեղ օրերին, երբ վրա է հասնում հույսը:

— Վաշա՜ա՜ա՜... Կեցցե՜ե՜,—գոչյունները խառնվեցին իրար, ինչպես և բանակները և իսկույն ևթ գործի անցան ազատության զենքերը:

Օգնական ուժերը ժամանակին հասան: Սկսվում էր թշնամու մաշման երկարատև, ծանր շրջանը:

Արյունողող հայ զորքը իր մեծ զոհերի գնով հիմք էր դրել հաղթության, զոհեր, որ եղան սև դավաճանության շնորհիվ: Անդրկովկասյան երեք ժողովուրդների միացյալ ուժերը հաղթանակով պսակեցին բրոնակալության դեմ ուղղած՝ պայքարը, մի հերոսական պայքար, որ ավելի ամրապնդեց անկեղծ եղբայրության մեծ գաղափա-

ը, որ հնուց անտի կար այս ժողովուրդների մեջ:

...Կատարվեց կատարվելիքը: Արհավիրքը, որ այնպես դղրդալից եկել էր՝ հիմա փովում էր իր հետապնդած ճանապարհին և սկսում անցնել: Կովում էր Արտակը և շուտ-շուտ ինքն իրեն հարցնում. «ո՞ւր է Անահիտը, Աստղիկը, ո՞ւր են Մամիկոնյան տիկինները, Մեծ Տիկինը, Խանդութը, ո՞ւր են Պողոսը, արտաշատցի երիտասարդները... Արծվի՞ն»,—բարձր ձայնում նա, և նրա սիրտը մղկտում էր:

Վերջացավ անձնական ամեն տենչ ու երազ, վերջացան անձերը, եկավ Մեծ Ընդհանրականը՝ Աշխարհն հայոց: Նա սկսեց ապրել: Հաղթում էր նա: Այս բոլոր կովողների հոգու խորքում արդեն կայծում էր փրկության կրակիկը: Նա պլպլում էր մի փոքրիկ աստղիկի չափ, բայց լուսավորում էր ողջ Աշխարհն հայոց:

Կայծակի պես զարկում էին այստեղ այնտեղ վրաց, հայոց և աղվանից զորամասերը. բռնակալը գալարվում էր հուսահատության մեջ:

Նայում էր Արտակը հեռուն, մոտիկ և նրա աչքովն էին ընկնում նրանք, որոնց համար բախտը գրել էր՝ վերապրել և պատմել թե ինչպես եղավ բանը: Մերթ կովող զորագնդերի մեջ երևում էր Ներշապուհը՝ համառ ու դիմադրող, մերթ Համազասպը՝ ներքուստ ներհակ ու դիմացկուն, երբեմն վշտահար Հազարապետը՝ հինօրյա ուժերը վերակոչած, երբեմն Արշավիրը՝ հուսադիր, լավատես... Ահա՛ Եզնիկը, Ղևոնդ Երեցը, Եղիշեն՝ իմաստուն ու ոգեղից: Արտակ Մոկացին լսում էր Եղիշեին: Եղիշեն պատմաբանում էր.

—...Յազգէն Մամիկոնէից՝ քաջն Վարդան, յազգէն Խոռխոռունեաց՝ Խորէնն կոյրովի, յազգէն Պալունեաց՝ արին Արտակ, յազգէն Գնթունեաց՝ զարմանալին Տաճատ, յազգէն Դիմաքսեանից՝ իմաստունն Հմայակ, յազգէն Քաջբերունեաց՝ հրաշակերտն Ներսեհ, յազգէն Գնունեաց՝ մանուկն Վահան, յազգէն Ընծայնոց՝ արդարն Արսեն, յազգէն Սրվանձտեայ՝ յառաջադէմն Գարեգին...

—...Ե՛վ տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, և՛ գեղջկուհիք քաջակորովք և ...առհասարակ ժողովուրդն հայոց զինվորյալ...

Լսում էր Արտակ Մոկացին, հիշում անձկալիներին, սիրելիներին ծանոթ անծանոթ բյուրավորներին, որ ընկան, և իբրև երազում կովում էր մնացողների շարքում, որ սիրտը ամոքի:

Հայոց աշխարհի ձորերից ու դաշտերից խումբ-խումբ, մենակ, երբեմն և ստվար զանգվածներով գալիս էին գյուղացիներ զինված ամեն ինչով որ կարելի էր, գալիս էին անվերջ, սպառնալիորեն անվերջ, համալրում և զորացնում էին կովող զորամասերը: Քսանի գնում, կոփվում էին մարտիկները, դառնում կատաղի, խոցող, հանդուգն:

Կովում էին հայ, վրացի, աղվան շինականները և զինվորները, կովում էին բռնակալության դեմ ցասումով և տոկունությամբ, կովում էին խաղաղության և արդարության երազով:

Այսպես անցան օրեր, տարիներ, անցան դարեր...

(«Վարդանանք», Երևան, 1951, էջ 717—720)



Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂ ՀԱՅՐԱՊԵՏ ԿԵՍԱՐԱՑԻ (329—379)

ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ, ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դ դարի երկրորդ հիսնամյակում ընդհանրական եկեղեցու պատմության մեջ իրենց եկեղեցական գործունեությամբ և մատենագրական հարուստ ու բազմաժանր վաստակով քաջածանոթ են **երեք մեծ կապադովկիացիներ**՝ որպես աստվածաբան, մատենագիր և սուրբ. Բարսեղ Կեսարացին (329—379), նրա բարեկամ և գործակից Գրիգոր Նազիանզացին (330—390) և Բարսեղի եղբայր Գրիգոր Նյուսացին (335—394):

Ընդհանրական եկեղեցու այս եռամեծ վարդապետների ուսանելի կյանքն ու սուրբ գրական գործունեությունը սերտորեն կապվում են Փոքր Ասիայում արիոսականության դեմ ուղղափառ եկեղեցու մղած աստվածաբանական հակահարձակումների, եկեղեցու ամրապնդման և ներքին խաղաղության ապահովման աշխատանքների հետ, աշխատանքներ, որոնք հստակորեն ցույց են տալիս, թե ինչպիսի՞ վտանգ էր ներկայացնում արիոսականությունը Փոքր Ասիայում եկեղեցիների համար, և ինչքա՞ն էր տարածվել այդ մոլորությունն հռոմեական արքունիքի և տեղական իշխանությունների ակնհայտ պաշտպանության ներքո. «Այս սքանչելի եռյակի մեջ Աթանասի աստվածաբանական գործը գտավ իր շարունակությունը և հասավ իր գագաթնակետին: Երբ մահացան Կապադովկիայի այս երեք մեծ Հայրապետները, արիոսականության ջախջախումը և Նիկիական հավատքի փառավոր հաղթանակը ապահովված էր»[1]: «Ս. Բարսեղի, ս. Գրիգոր Նազիանզացու և ս. Գրիգոր Նյուսացու բերած նպաստը ուղղափառ աստվածաբանության հաղթանակին, «հելլենականության և քրիստոնեության» հարցի լուծմանը, եկեղեցու ծոցում խաղաղության վերահաստատմանը, վանականության տարածման և կազմակերպման գործում եղել է շատ մեծ, այն աստիճան, որ այդ նպաստը տևական ազդեցություն է գործել ընդհանրական եկեղեցու ողջ կյանքի վրա»[2]:

Այս սքանչելի եռյակը «թեև իրար հետ նպարված են մտքի և հոգու ընդհանուր գծերով, ինչպես նաև սերտ բարեկամության անքակտելի կապերով, այնուամենայնիվ նրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է

[1] Արիոսականության ... մասին տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1977, № Բ, էջ 26—27:

[2] Johannes Quasten, Patrology, vol. III, էջ 203

անհատականության տարբեր տիպեր: Այսպես, Բարսեղ Կեսարացին համարվում է որպես **գործնական ուղղության տեր մարդ,** «զորեղ և դրական հոգի»: Գրիգոր Նազիանզացին՝ որպես **հոետորության վարպետ,** իսկ Գրիգոր Նյուսացին՝ որպես **մտածող»**[3]:

Կապադովկիայի այս երեք մեծ Հայրապետներից յուրաքանչյուրի աստվածաբանական մտածողությունն ու գործունեությունը նույնպես ներկայացնում են «ինքնուրույն առանձնահատկություններ, ինչպես ընդհանուր բնավորության, այնպես էլ մանրամասնությունների մեջ. սակայն դրանք իսկապես նույն աստվածաբանության այլաձևություններն են: Այդ աստվածաբանությունը յուր հիմնական սկզբունքներով և էական տարրերով խիստ բարդ ձևով է ներկայանում: Նախ և առաջ նրա վրա ազդեցություն է ունեցել Որոգինեսը... Բարսեղ Մեծը և Գրիգոր Աստվածաբանը, նույնիսկ Որոգինեսի երկերի ամենաընտիր հատվածների ժողովածուն՝ «Ֆիլոկալիա» կազմեցին: Որոգինեսի մեկնաբանական աշխատությունների ուսումնասիրությունը ընդանց համար նախապատրաստություն էր արիոսականության դեմ պայքարելու համար...: Կապադովկիացի Հայրապետների աստվածաբանության «ընդհանուր բնավորությունը և ոգին և էական եզրակացությունները» իրենց հիմք ունեին Նիկիական դավանանքը: Այստեղից բնականաբար ծագում է նրանց կախումը ս. Աթանասի աստվածաբանությունից: Նրանք ս. Աթանասի աշակերտներն էին և դրանով ամրացրին կապը Նոր Ալեքսանդրիայի աստվածաբանության հետ»[4]:

Ս. Բարսեղի, ս. Գրիգոր Նազիանզացու և ս. Գրիգոր Նյուսացու աստվածաբանական վարդապետությունը շատ մեծ կարևորություն և նշանակություն է ունեցել հետագա դարերի աստվածաբանական-քրիստոնեաբանական մտքի զարգացման համար, ընդհանուր եկեղեցու պատմության մեջ:

Կապադովկիայի հայրերի «աստվածաբանական երկասիրությունների մեջ ս. Երրորդության հարցը յուր վերջնական որոշումը ստացավ և նրանց հաստատած եկեղեցական հասկացողությունը, նրանց ստեղծած բանաձևերը դարձան թանկագին սեփականություն ողղափառ աստվածաբանական դավանության: Բայց Կապադովկիայի հայրերը միայն բացատրեցին և բացեցին եկեղեցվո վարդապետությունը, ինչպես որ այդ արտահայտված էր Նիկիական ժողովում, չփոխելով նրա էությունը... Ս. Գրիգոր Աստվածաբանը Նիկիայի հավատի հանգանակը ներկայացրեց յուր ամբողջ պարզությամբ և նրան կատարյալ արտահայտություն տվեց, հավատի ամենաբարձր գաղտնիքները հանրամատչելի դարձնելով: Բարսեղ Մեծը այդ հավատը կյանքի մեջ ներմուծեց, իսկ Գրիգոր Նյուսացին նրան գիտական-փիլիսոփայական հաստատություն տվեց»[5]:

Ընդհանուր եկեղեցու պատմության մեջ Բարսեղ Կեսարացին կոչվել է **Մեծն Բարսեղ** և **երկրորդ Աթանաս:** Կեսարացին «ս. Աթանասից հետո ամենազորեղ ջատագովն է հանդիսացել Նիկիական դավանության և ս. Անտոնից հետո գլխավոր հիմնադիրն ու կանոնագիրը՝ արևելյան վանականության»[6]:

Բարսեղ Կեսարացին ծնվել է 329 թվականին Կապադովկիա գավառի Կեսարիա քաղաքում, քրիստոնեական բարեպաշտությամբ, կենցաղավարությամբ և առաքինությամբ հռչակված մեծահարուստ և ազնվական ընտանիքում. «Ի հօրէ պոնդացի, ի մօրէ կապադովկացի, ոչ յանշնանից ոմանց, այլ ի մեծաց և յերևելեաց և ճշմարտութեան հաւատովն պայծառ»[7]:

«Սերեցալ սուրբերու ընտանիքե մը: Սուրբեր էին հայրն ու մայրը, մայրենի պապը ու մամը, եղբայրը՝ ս. Գրիգոր Նյուսացին, քույրը՝ սուրբ Մաքրինան»[8]: Բարսեղ Կեսարացու «ընտանիքը ծագմամբ Հայաստանեն, երկրին ամենեն ծանոթ ընտանիքներեն մին էր, միևնույն ատեն եկեղեցվո մեջ ամենեն հռչակավորներեն: Իր հայրը, իր մայրը, իր մորենական մեծ հայրը, սրբոց դասը անցած են»[9]: «Կեսարացու հայրական պապը և նրա կինը ջերմեռանդ քրիստոնյաներ են եղել: Քրիստոնեության դեմ տարված հալածանքներից ազատվելու համար նրանք յոթ տարի անօթևան թափառել են

[3] Նույնը, էջ 203—204: Տե՛ս նաև **պրոֆ. Ն. Սագարդա,** Հույն-արևելքի հին եկեղեցական աստվածաբանական գիտությունը, յուր ծաղկման շրջանում (Դ—Ե դդ.), Վաղարշապատ, 1910, էջ 36—37:

[4] **Պրոֆ. Ն. Սագարդա,** նույնը, էջ 37—38: Ս. Աթանասի աստվածաբանության մասին տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1977, № Բ, էջ 26—27:

[5] **Պրոֆ. Ն. Սագարդա,** նույնը, էջ 40:

[6] «Կնիք հաւատոյ», ս. Էջմիածին, 1914, նախաբան **Կարապետ եպս.** (Տեր-Մկրտչյանի), էջ XLV:

[7] **Կիմ Մ. Մուրադյան,** Բարսեղ Կեսարացին և Ըրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976, էջ 270: Նույնի առաջին գլուխը՝ ունի «Բարսեղ Կեսարացու կյանքը» վերնագիրը, էջ 27—54:

[8] **Թորգոմ արքեպ. Գուշակյան,** Սուրբք և տոնք, Երուսաղեմ, 1939, էջ 68:

[9] **Արշակ Ալպոյաճյան,** Պատմություն հայ Կեսարիո, Ա. հատոր, Գահիրե, 1937, էջ 258:

Պոնտոսի անտառներում, զրկվելով իրենց կալվածքներից և զանազան նյութական միջոցներից»[10]:

Ս. Բարսեղ Կեսարացու կյանքի և գործունեության ու նրա վարքագրության մասին մեզ հասել են մի շարք ձեռագիր պատմական, մատենագրական սկզբնաղբյուր վկայաբանություններ, ինչպես օրինակ նրա «Վարք»-ը, թղթերը, նրա մահվան առթիվ նրա բարեկամ ս. Գրիգոր Նազիազանցու խոսած «Դամբանական»-ը և նույնի թղթերն ու նրա՝ իր իսկ ձեռքով գրած «Վարք»-ը: Հայ բանասիրության մեջ ևս կան տպագիր բազում արժեքավոր վարքագրություններ և ուսումնասիրություններ Բարսեղ Կեսարացու կյանքի, գործունեության և մատենագրական վաստակի մասին[11]:

Ի դեպ, այստեղ ամենայն կարևորությամբ պետք է արձանագրել, որ Կ. Մ. Մուրադյանի վերոհիշյալ աշխատությունը խըղճամիտ, լուրջ ու արժեքավոր ուսումնասիրություն է և գիտական ներդրում «Բարսեղագիտության» մեջ ոչ միայն ս. Բարսեղ Կեսարացու «մատենագրության հայերեն թարգմանության ուսումնասիրության ուղղությամբ», այլ նաև «հայ բանասիրության մեջ տասնամյակների ընթացքում Բարսեղ Կեսարացու շուրջ ստեղծված գրականության» և նրա կյանքի ու գործունեության մասին, գործ, «որն արդյունք է երկար տարիների տքնաջան աշխատանքի»[12]:

Բարսեղ Կեսարացին իր նախնական կրթությունն ստանում է իր հորից՝ Բարսեղից, որը ոչ պակաս հռչակված հռետոր էր Պոնտոսի Նեո-Կեսարիա քաղաքում և իր որդուն վարժեցնում էր «ոչ նապաստակ խփելու, ոչ այծ խրտնեցնելու և ոչ էլ եղնիկ որսալու,... այլ ուսուցանում էր գիտության սկզբնական ոլորտները և աստվածասիրություն էր սերմանում... ամենաառաջին դասերով իսկ մղում հետագա կատարելության», ինչպես վկայում է Գրիգոր Նազիազանցին: Բարսեղի հայրը որդին էր սուրբ Մաքրինա Երեցի: Վերջինս աշակերտել էր Գրիգոր Նազիազանցու հորը՝ Գրիգոր Սքանչելագործ եպիսկոպոսին, և տիպար ու կրթված հավատավոր կին էր:

Ըստ վարքագիրների վկայության Բարսեղ Կեսարացու դաստիարակության և ուսումնառության գործում վճռական դեր է կատարել նաև նրա «տատ Մաքրինան», «որը շատ հակամետ էր ճգնավորական կյանք վարելու և յուր այս աշխարհայացքին վարժեցրեց Բարսեղին դեռևս վերջնիս մանուկ հասակում»[13]:

Կեսարացու մայրը՝ Էմիլիան, աղջիկը նույնպես մի մարտիրոսի, բնիկ կապադովկիացի էր: Նրա ծնողներն էլ ծանր չարչարանքներ և զրկանքներ էին կրել ու հաստակվել՝ հանուն իրենց քրիստոնեական հավատի: Էմիլիան ծնունդ էր տվել 10 երեխաների, որոնցից 4-ը տղա, 6-ը՝ աղջիկ: Տղաներից երեքը հետագայում դարձան եկեղեցու նշանավոր հայրեր և եպիսկոպոսներ, ս. Բարսեղը, ս. Գրիգոր Նյուսացին և Սեբաստիայի ս. Պետրոս եպիսկոպոսը, իսկ նրանց Նավկրատիոս եղբայրը եղել է ճարտասանական արտակարգ տաղանդով օժտված մեկը, բայց մահացել է վաղ հասակում: Բարսեղի մեծ քույրը ծանոթ է եղել իր բարեպաշտությամբ, ճգնավորական խիստ կենցաղով և կոչվել է Կույս Մաքրինա Կրտսեր:

Բարսեղը ծնունդով եղել է թույլ և վատառողջ: Նրա մերձ ի մահ հիվանդանալուց հետո հայրը ընտանիքով թողնում է Կապադովկիան և հաստատվում Պոնտոսում: Այստեղ Բարսեղի կրթությամբ զբաղվում է նրա հայրը, իսկ նրա քրիստոնեական դաստիարակությամբ՝ նրա քույրը՝ Մաքրինան:

Բարսեղ Կեսարացու օրով Կապադովկիայում նշանավոր քաղաք էր Կեսարիան, որը հայտնի էր որպես քրիստոնեության և «լուսավորության կենտրոն և կարող էր հպարտանալ գիտնականների շատությամբ»[14]:

Բարսեղ Կեսարացին այնուհետև իր ուսումը 7 տարի շարունակում է հոր թելադրությամբ Կեսարիայում, մինչև 344 թվականը, և ապա Անտիոքում, որը «այն ատեն ավելի նշանավոր էր իբր քրիստոնեական գիտության կեդրոն»[15]: Այնուհետև ուսման մեջ կատարելագործվելու համար նա անցնում է Կ. Պոլիս, «ի թագաւորական քաղաքն Կոստանդնուպոլիս»՝ աշակերտելու նշանավոր հռետոր Լիբանոսին (314—393), երբ ինքն արդեն այդ թվականներին (344—351) «ճարտասան էր ճարտասանների մեջ՝ մինչ նրանց ունկնդրելը, փիլիսոփա էր փիլիսոփաների մեջ՝ մինչ փիլիսո-

[10] **Կ. Մ. Մուրադյան**, նույնը, էջ 28:

[11] Տե՛ս **Հ. Ս. Անասյան**, Հայկական մատենագիտություն, Ե—ԺԸ դդ., հատոր Բ, Երևան, 1976, էջ 1343—1346, 1399—1405: **Կ. Մ. Մուրադյան**, նույնը, «Ներածություն», էջ 5—26: Նաև Բարսեղ Կեսարացու կյանքը, էջ 26—54:

[12] **Վազգեն Հակոբյան**, Պատմա-բանասիրական հանդես, № 1, Երևան, 1977, էջ 251: (Գրախոսություն Կ. Մ. Մուրադյանի գրքի մասին):

[13] **Երվանդ վրդ. Տեր-Մինասյան**, Ընդհանուր եկեղեցական պատմություն, հատոր Ա, ս. Էջմիածին, 1908, էջ 270:

[14] **Կ. Մ. Մուրադյան**, նույնը, էջ 31:

[15] **Թորգոմ արքեպ. Գուշակյան**, նույնը, էջ 68:

փայության դասընթացքն անցնելը», ինչպես վկայում է Բարսեղի մասին ս. Գրիգոր Նազիանզացին:

Իր ուսումնառության տարիներին իսկ Բարսեղը «իր բարք ու վարքին ծանրությամբ կմրցեր նույնիսկ քահանաներուն հետ»[16]:

Բարսեղ Կեսարացին այնուհետև իր ուսումնառության մեջ խորանալու և է՛լ ավելի հմտանալու համար «ցանկայր հմուտ լինել փիլիսոփայական արուեստիցն», երբ արդեն «ԺԵ (15) ամեայ եղեալ», 352 թվականին գնում է Աթենք: «Ատտիկեի մայրաքաղաքը այն ատեն ամեն բանե առաջ համալսարանական քաղաք մըն էր: Իր դըպրոցներու հին փառքն էր որ օտարները իրեն քով կքաշեր: Դեպի անոր բեմերը կվազեին աշակերտները», «ի մայրն իմաստութեանց»: «Դ դարում անհնար էր պատկերացնել ավարտուն ուսումնառություն առանց Աթենքի համալսարանի»[17]:

Աթենքում էր դարձյալ, որ Բարսեղ Կեսարացին հանգամանորեն ուսումնասիրում է քրիստոնեական վարդապետությունը և «Աթենքի համալսարանում ուսանելիս միայն հնարավորություն ունեցավ պատկերացնելու քրիստոնեության բացահայտ առավելություններն ու առանձնահատկությունները, առանց որոնց անհնար կլիներ կողմնորոշվել այն պայքարում, որ այնուհետև տարիներ շարունակ վարեց նա հօգուտ քրիստոնեական տարածման և վերջնական հաղթանակի»[18]:

Աթենքում Բարսեղ Կեսարացին 352—356 թվականներին, ի թիվս այլ նշանավոր դասախոսների, «աշակերտեցավ հայազգի Պրոյերեսիոսին՝ կամ Պարույր Հայկազնին, իրեն դասընկեր ունենալով կայսերազուն Հուլիանոսը, որ ապագային Ուրացողը պիտի ըլլար*: Աթենքի մեջ ս. Բարսեղ հանդիպեցավ իր բարեկամին՝ Գրիգոր Նազիանզացիին, որուն կյանքը և գործը իրենինեն անբաժան պիտի ըլլար»: Կեսարացու և Նազիանզացու «զուսումնակցութիւն և զսիրոյն կապ, որ առ միմեանս, ի մանկութենէէ» էր[19]:

Աթենքում Կեսարացին ծանոթանում է արտաքին գիտություններին, ուսումնասիրում քերականություն, ճարտասանություն, փիլիսոփայություն և մանավանդ ճշգրիտ ու բնական գիտություններ՝ աստղագիտություն, երկրաչափություն, բժշկություն:

Աթենքի ուսումնառության տարիներին Բարսեղ Կեսարացին խորը հիասթափություններ է ապրում «Աթենքի մեջ չգտնելուն համար հաստատուն վայելքներ, զոր երազած էր, այլ անոնց մեջ գտած էր «խաբեպատիր երջանկություն մը, երանության ստվեր մը»... Բարսեղ և Նազիանզացին խնջույքներու, տեսարաններու և աղմկահույզ տոներու տեսարաններեն հեռանալով եկեղեցվո և դպրոցի ճամբաները միայն ճանչցան»[20]: Աթենքում Բարսեղ Կեսարացին սովորում է 352—356 թվականներին: Ապա իր ուսումն ավարտելուց հետո նա թողնում է Աթենքը «ոչ այնքան ուսումնառության ավարտի պատճառով, որքան միջավայրից հակադրված» (Կ. Մ. Մուրադյան) և վերադառնում իր ծննդավայրը, «ուր իրեններն իրեն կսպասեին անհամբեր, մինչ Նազիանզացին Բարսեղի խորհուրդին վրա Աթենքի մեջ իր բնակությունն երկարաձգեց»[21]:

Կեսարիայում Բարսեղը որպես բազմակողմանիորեն պատրաստված և հմուտ անձնավորություն, որպես «գիտությամբ ծանրաբեռնված նավ» (Գրիգոր Նազիանզացի), զբաղվում է մի որոշ ժամանակ հռետորական արվեստի դասավանդությամբ և փաստաբանությամբ:

Այդ տարիներին է, որ Բարսեղ Կեսարացին ապրում է հոգեկան տագնապ և ապա՝ հոգևոր վերածնունդ և իր ողջ կյանքը նվիրում՝ Աստուծո և եկեղեցու անմնացորդ ծառայության նվիրական գործին:

Աթենական ուսումնառության տարիների հեթանոս բարքերն ու իմաստազուրկ կենցաղը խորապես ազդել էին Բարսեղ Կեսարացու հոգեկանին, նրա ներաշխարհի վրա. «Բազմաթիվ քրիստոնյաներու կողմե Աթենք առաջին տեղը կգրավեր այն քաղաքներուն մեջ ուր բնակիլը վտանգավոր էր հավատքի տեսակետե: Բայց կռապաշտության տեսարանը Աթենքի մեջ, ավելի ամրացուց նաև Բարսեղի հավատքը: Անիկա կհրճվեր քրիստոնյա ըլլալուն համար»[22]:

Բարսեղ Կեսարացին հետագայում նկարագրում է իր հոգևոր վերածնունդը այս բա-

---

[16] «Լոյս» շաբաթաթերթ, 1905, Կ. Պոլիս, հատոր Ա, էջ 703: Հոդվածաշարք P. Allard-ի, «Սուրբ Բարսեղ» ֆրանսերեն գրքից, ազատ թարգմանությամբ Տիրայր վարդապետ Մարգարյանի:

[17] Նույնը և **Կ. Մ. Մուրադյան**, էջ 35:

[18] Նույնը:

* «Տեսե՞ք,—ասում էր Բարսեղ Կեսարացին Հուլիանոսի մասին,—ինչպիսի՞ խարազան է պատրաստում իրեն կայսրությունը»:

[19] **Արշակ Ալպոյաճյան**, նույնը, էջ 258:

Quasten, նույնը, էջ 204: «Լոյս» շաբաթաթերթ, նույնը, էջ 730: **Հուսիկ եպս. (Տեր-Մովսիսյան)**, Անապատականներ և վանականություն, Վաղարշապատ, 1906, էջ 44:

[20] «Լոյս» շաբաթաթերթ, էջ 730—731:

[21] Նույնը, էջ 731:

[22] «Լոյս» շաբաթաթերթ, էջ 730:

ռերով. «Շատ ժամանակ փնտրեցի ես հիմարությունների վրա և հասարյա իմ ամբողջ երիտասարդությունը վատնեցի ավելորդ աշխատանքների մեջ, մի իմաստության մեջ խորանալու և նրան նվիրվելու համար, իմաստություն, որը հիմարություն է ըստ Աստուծու (Ա Կորնթ. Ա 20)։ Հանկարծ ես զարթնեցի որպես թե մի խորունկ քնից։ Ես ըմբռնեցի Ավետարանի ճշմարտության զարմանալի լույսը և ճանաչեցի այս աշխարհի իշխանների իմաստության ոչնչությունը, իմաստություն, որը խափանվելու է (Ա Կորնթ. Բ 6)։ Ես արցունքի հեղեղներ թափեցի իմ դժբախտ կյանքի վրա և աղոթեցի մի առաջնորդության համար, որը կարողանար իմ մեջ ստեղծել բարեպաշտության սկզբունքները»[23]։

Հոգևոր այս վերածննդից անմիջապես հետո Բարսեղի առաջին ու վճռական քայլն է հանդիսանում 357 թվականին քրիստոնեական մկրտություն ընդունել Կեսարիայի Դիանիոս եպիսկոպոսից, «հրաժարվիլ հեթանոս գրականությունը մշակելե և նվիրվիլ ամբողջությամբ Աստուծո»[24]։

Այնուհետև Կեսարացին նվիրվում է վանական-անապատական կյանքի խոկումների և ուսումնասիրության. «Քրիստոնեական մկրտությունն ընդունելուն պես նա իրեն նվիրեց ճգնավորական կյանքի։ Նրա այս հայացքին ավելի ուժ էր տալիս այն հանգամանքը, որ հոր մահից հետո նրա մայրն ու քույրն ևս բարեկամուհիների հետ միասին սկսել էին անապատական կյանք վարել»[25]։

358 թվականին Բարսեղը այցելում է Եգիպտոսի, Պաղեստինի, Ասորիքի, Միջագետքի մենաստանները՝ ուսումնասիրելու վանական կյանքը և անձամբ ծանոթանալու անվանի վանական-անապատականների հետ։ Այս ճանապարհորդությունը և վանական կյանքի հետ մոտիկից նրա ծանոթությունը խոր տպավորություն են թողնում նրա վրա։ Կեսարացին հետագայում մեծ հիացումով և հափշտակությամբ էր խոսում իր այցելած մենաստանների և վանականների մասին. «Ես երկյուղածությամբ եմ հիշում վանականների չափավորությունը ուտելիքի մեջ. աշխատանքի մեջ նրանց տոկունության վրա ես հիացել էի. սքանչացել էի աղոթքի մեջ նրանց ջերմեռանդության և ջանասիրության վրա. զարմացել էի թե նրանք ինչպե՞ս հաղթում են քնին. չէին ընկճվում ոչ մի մարմնական կարիքի առաջ. միշտ հոգու արիություն էին պահում քաղցի, ծարավի, ցրտի և մերկության մեջ... Նրանք, հիրավի, ցույց էին տալիս թե ի՞նչ է նշանակում ապրել որպես երկնաբաղաքացի, արհամարհելով աղցավոր աշխարհը։ Այս բոլորը իմ մեջ հիացմունք էր առաջացնում։ Այս մարդկանց կյանքը օրհնված կյանք էր և նրանք իրենց մարմնի մեջ ապրում էին Հիսուսի մահը։ Իմ աղոթքն այն էր, որ ես էլ նրանց նմանվեմ»[26]։

Երբ այս ճանապարհորդությունից հետո, 360-ին, նա վերադառնում է Կեսարիա, Բարսեղն իր ողջ հարստությունը, որը ժառանգել էր իր հորից, բաժանում է աղքատներին և առանձնանում «անտառախիտ և լեռնոտ» Պոնտոս, Իրիս գետի ափին, Անիսայում, ոչ շատ հեռու Նեոկեսարիա քաղաքից, ապրելու համար վանական-միաբանական կյանքով, վանքերի և վանական հաստատությունների միջոցով ամրապնդելու եկեղեցին և պայքարելու արիուսականների դեմ։ Այստեղ Կեսարացու շուրջ հավաքվում է վանական-կրոնական նույն կյանքին նվիրված բարեպաշտ մարդկանց մի հոծ բազմություն։ Դրանց մեջ էր նաև Բարսեղի մայրը։ Նա հաջորդ տարիներին Պոնտոսում մենաստաններ ու եղբայրանոցներ է հաստատում և նրանց ղեկավարության և գործունեության համար կազմում **վանական կանոնադրություններ**՝ արդարորեն համարվելով **մեծ օրենսդիր և կանոնագիր օրթոդոքս վանականության։**

Պոնտոսի այս առանձնության մեջ Բարսեղ Կեսարացին 358 թվականին ընդունում էր այցելությունը իր երբեմնի դասընկեր և բարեկամ Գրիգոր Նազիազանցու, որը եկել էր «բաժանելու իր բարեկամի զրկանքները» և որի հետ կազմում է Որոգինեսի աշխատությունների անթոլոգիան՝ «Ֆիլոկալիա» անունով և թվով 55 վանական կանոնադրություններ։

Բարսեղի և Նազիազանցու կյանքը վերհանիստ այս առանձնության մեջ շրջապատված էր սակայն ծանր դժվարություններով. «Նրանց խրճիթը առանց տանիքի էր և առանց դրան. վառարանը՝ առանց կրակի, պատերը խորշակից այնքան էին չորացել և ճաքճաքել, որ նրա մեջ բնակողները կաթիլքի և անձրևի ժամանակ չէին կարողանում ցեխոտ կաթիլներից պատըսպարվել։ Նրանք այնտեղ կենում էին տանտալոսին դատապարտվածների պես՝ ջրի մեջ՝ ծարավից տանջվելով», վկայում են վարքագիրները։ Բայց նրանք հոգով կայտառ էին և ուժեղ։ Բարսեղ Կեսարացին վանական չարքաշ այդ կյանքը ուրախու-

[23] **Quasten,** նույնը, էջ 205։

[24] **Արշակ Ալպոյաճյան,** նույնը, էջ 259։

[25] **Երվանդ վրդ. Տեր-Մինասյան,** նույնը, էջ 270։

[26] **Հուսիկ եպս. (Տեր-Մովսիսյան),** նույնը, էջ 45։ Նաև **Quasten,** նույնը, էջ 205։

թյամբ և հպարտությամբ անվանում է «Մամբրեի կաղնի, դեպի երկինք բարձրացող սանդուղ, Մաքանայիմի կայարան, Եղիա մարգարեի Կարմելոս, Հովհաննես Մկրտչի անապատ և Զիթենյաց լեռ»:

358—364 թվականները Բարսեղ Կեսարացին Պոնտոսի վանական առանձնության մեջ է անցկացնում իր կյանքը, ստեղծագործական, հոգեշեն մեծ իրագործումներով: Նրա գիտնականության և հոգևորական օրինակելի կյանքի «պայծառ իմաստութեան և հրեշտակական» համբավը հոչակվում էր ողջ Կապադովկիայում:

Այդ թվականներին Կապադովկիայի Եվսեբիոս միտրոպոլիտը աշխատում է օգտագործել «սարկավագապետ» Կեսարացու մեծ տաղանդը իր թեմում, մանավանդ արիոսականների դեմ պայքարելու համար, և նրան հրավիրում Կեսարիա, իր մոտ, որպես «ամենայն ինչ՝ յամենայնի», որպես ուղղափառության ամենաջերմ պաշտպան, որպես բարի և ազնիվ խորհրդական, խելացի օգնական և հմուտ կազմակերպիչ, ս. Գրոց քաջածանոթ մեկնիչ, իր ծերության նեցուկ և գավազան, ավելի վստահելի և արժանավոր անձ, քան իր ողջ հոգևորականությունը, ինչպես վկայում է այս մասին Նազիազանցին[27]:

364 թվականին Բարսեղ Կեսարացին Եվսեբիոս միտրոպոլիտից քահանա է ձեռնադրվում: Ավելի առաջ սարկավագ էր ձեռնադրվել Անտիոքում Մելիտոս եպիսկոպոսից:

Կեսարացին իր քահանայական ձեռնադրությունից հետո էլ 3—4 տարի դարձյալ առանձնանում է Պոնտոս՝ իր հիմնած մենաստանների մեջ, և նվիրվում իր սիրած վանական կյանքի Է'լ ավելի կազմակերպությանը:

Բարսեղ Կեսարացին որպես օրթոդոքս եկեղեցու վանականության հիմնադիր և կանոնագիր համոզված էր, որ վանականները «չպետք է անպայման միայնության մեջ ապրեն և ճգնավորական կյանքի անձնուրացության և անձնաչարչար լինելու չափազանցություններին վերջ դնելու համար կանոններ են պետք: Նա շատ էլ չէր քաջալերում միանձնական ճգնավորությունը: Նա մտածում էր, որ ճգնավորները չափազանց անձնատուր լինելով վերացականության, էլ միջոց չեն ունենում քրիստոնեական սերը վերակենդանացնելու, ուստի վանական և միաբանական կյանքի հիմնադիրը դարձավ Պոնտոսում և Կապադովկիայում: Որքան զորանում էր վանական-միաբանական կյանքը, այնքան թուլանում էր ճգնավորական միայնակեցությունը, և վանքերը քրիստոնեական եկեղեցու կարևոր հաստատությունները հանդիսանալով տարածվեցին ամենուրեք, իսկ վանականությունը դառնում էր եկեղեցու նյութական և բարոյական զարգացման համար հոգևոր զինվորություն»[28]:

Բարսեղ Կեսարացին այսպիսով հիմնադիրն է հանդիսանում նոր տիպի վանականության. «Իր հորինած կանոններուն ազդեցությունը գերիշխող եղավ հետագա ժամանակի կրոնական կենաց կազմության համար, այնպես որ Փոքր Ասիո մեջ «վանական» կյանքը հաղթեց հնագույն «ճգնավորական» (միայնավորական) կենցաղին»[29]:

Վանքերը այնուհետև դադարեցին ճգնարաններ լինելուց և հանդիսացան քրիստոնեական դաստիարակության և արվեստի օջախներ:

370-ական թվականներին մոլեգնում էր արիոսական մոլորությունը, հատկապես Փոքր Ասիայում: Եկեղեցու ներքին խաղաղությունը դարձյալ վրդովվել էր: Վաղես կայսրը (364—378) քաջալերում էր արիոսականներին:

370-ին վախճանվում է Կապադովկիայի Եվսեբիոս միտրոպոլիտը: Այդ փառավոր ու պատմական Աթոռի վրա նրան հաջորդում էր արժանավորապես Բարսեղ Կեսարացին. «Կատարյալ վանականը դարձավ միանգամից մի եռանդուն եկեղեցական», որովհետև նա «սկզբից ևեթ կազմակերպված և հաստատուն բնավորության տեր էր և նրա համար պարզ էր յուր անելիքն ու չանելիքը»[30]:

Կեսարացու միտրոպոլիտության տարիներին նրա իմաստուն, շրջահայաց և հետևողական պայքարի շնորհիվ հիմնովին ջախջախվում է արիոսականությունը Կապադովկիայում: Նրա մեծագույն մտահոգությունը եկեղեցու միության վերահաստատումն էր և ներքին խաղաղության ամրապնդումը: Նրա ջանքերով Կապադովկիայի պատմական Աթոռը փառավորվում է եկեղեցանվեր, հոգևոր, վանական, մշակութային, մարդասիրական հաստատությունների ցանցով և շքեղ ու մնայուն գործերով[31]:

Հայ եկեղեցին միշտ սերտ հարաբերու-

---

[27] Quasten, նույնը, էջ 205:

[28] Հուսիկ եպս. (Տեր-Մովսիսյան), նույնը, էջ 44: Այս հաստատումները Հուսիկ եպիսկոպոսը քաղել է իր աշխատության մեջ Ֆ. Ֆարրարի «Ս. Հարց վարքն ու գործերը» ռուսերեն գրքից:

[29] Արշակ Ալպոյաճյան, նույնը, էջ 262:

[30] Երվանդ վրդ. Տեր-Մինասյան, նույնը, էջ 270:

[31] «Լոյս» շաբաթաթերթ, էջ 1104—1107: Տես նաև Quasten, նույնը, էջ 205—206:

թյան մեջ է եղել Կապադովկիայի Աթոռի հետ, մանավանդ ս. Գրիգոր Լուսավորչի օրերից[32]: Պատմական փաստ է, որ Կեսարիայում, Փոքր Հայքի այդ նշանավոր քաղաքում, ապրում էր հոծ հայություն: Կեսարիան հայաքաղաք էր:

Կեսարիայի դպրոցներում գիտություն և ուսում էին ստանում նաև բազում հայ ուսանողներ, որոնցից ոմանք աշակերտել են նույնիսկ Բարսեղի հորը և իրեն՝ Կեսարացուն:

Մեծն Ներսեսի օրով Հայաստանում բացված մենաստաններն ու դպրոցները, հիվանդանոցներն ու անկելանոցները ղեկավարվում էին նաև մասամբ Բարսեղ Կեսարացու հաստատած կանոններով, «հիշտ այն թվականներուն երբ Բարսեղը նույնը կկատարեր Կապադովկիայի մեջ»[33]:

Փավստոս Բուզանդը «Ս. Բարսղի վարուց և գործունեության վերարտադրությունը պատկերացրել է հանձին նրա մեծ ժամանակակից Մեծն Ներսեսի»[34]:

Հայ եկեղեցու և Կապադովկիայի Աթոռների միջև է՛լ ավելի սերտ հարաբերություններ են եղել Բարսեղ Կեսարացու և Մեծն Ներսեսի օրոք:

Այս երկու պատմական Աթոռների եկեղեցական հարաբերությունների մեջ, սակայն, «անհնար է գործ մը կամ պարագա մը ցուցնել, որով Կեսարիո արքեպիսկոպոսներ Մեծ կամ բուն Հայաստանի վրա իրավասություն կամ հսկողություն կատարած ըլլան: Այնտեղ ստացված ձեռնադրություններն ալ պատվադիր նպատակե անտին չեն անցնիր և երբեք իրավասական նշանակություն չեն կրնար ունենալ»[35]:

Բարսեղ Կեսարացին մահանում է հազիվ հիսուն տարին լրացած, 379 թվականի հունվարի 1-ին, երեքշաբթի օրը[36], «վասնզի էր ծերացեալ և ցաւագար՝ մարմնով»:

Կեսարացին, ինչպես նշվեց, իր ծնունդից սկսած եղել է վատառողջ և թուլակազմ. հետագայում «նա իրեն ճգնավորությամբ թուլացրել էր և հիվանդությունների տեր դարձել»[37]:

«Հիվանդությունը անբաժան է ինձանից, սկսած վաղ հասակից մինչև ծերություն», վկայում է իր մասին Կեսարացին: Այդ իսկ պատճառով «բազում էական գործեր կիսակատար են մնում»[38]:

Բարսեղ Կեսարացու վաղաժամ մահը մեծ կորուստ էր և՛ Կապադովկիայի, և՛ ընդհանրական եկեղեցու համար: Նրա մահվան առթիվ Գրիգոր Նազիանզացին իր արտասանած «դամբանական»-ի մեջ վկայում է. «Ծանր էր կորուստը. նրա համար ամբողջ քաղաքն էր անհանգստացած... Մոռացում էին փրկել նրա հոգին. թվում էր, հնարավոր կլիներ բռնել և բռնությամբ պահել նրան ձեռքերով կամ աղոթքներով. (վիշտը նրանց անմիտ էր դարձրել) և բոլոր դեպքերում եթե միայն հնարավոր էր, պատրաստ էին անգամ իրենց կյանքը տալու»[39]:

Մեր եկեղեցին տարին երկու անգամ ոգեկոչում է հիշատակը ս. Բարսեղ Կեսարացու: Առաջինը նրա մահվան օրը, հունվարի 1-ին, իսկ երկրորդը՝ հոկտեմբերին, եկեղեցու նշանավոր «երկոտասան վարդապետների» տոնին[40]:

Բարսեղ Կեսարացու հիշատակին նվիրված Մանկունք մասնավոր շարականը նրան բնութագրում է այսպես. «Լուսապայծառ իմաստիք... լուսաւորեաց զեկեղեցի աստուածային բանիւն... Սիւն հաւատոյ հաստատութեան... ըստ անմարմնոցն ի մարմնի քաղաքավարեալ առաքինութեամբ ի մանկութենէ»[41]:

(Շարունակելի)

---

[32] **Արշակ Ալպոյաճյան**, նույնը, էջ 271—289:

[33] **Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան**, Ազգային պատմություն, Երուսաղեմ, 1934, էջ 247: Տե՛ս նաև «Լոյս», նույնը, «Ծագումն հայ վանականության», էջ 360, 468, 538:

[34] «Կնիք հաւատոյ», նույնը, էջ XLV:

[35] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, Ազգապատում, Ա հատոր, Ա մաս, Բեյրութ, 1959, էջ 227: Նաև **Օրմանյանի** «Աթոռ Հայաստանեայց», 1972, Սայր Աթոռ, էջ 44—45:

[36] **Վազգեն Հակոբյան**, Պատմա-բանասիրական հանդես, 1977, № 1, էջ 252:

[37] **Երվանդ վրդ. Տեր-Մինասյան**, նույնը, էջ 270:

[38] **Կ. Մ. Մուրադյան**, նույնը, էջ 54:

[39] Նույնը:

[40] Օրացույց Մայր Աթոռի, 1977, էջ 14 և 132:

[41] «Ձայնքաղ շարական», Վաղարշապատ, 1888, էջ 422:

ՆՈՐԱՀՐԱՇ

ԳՐԻԳՈՐ ՓԻՏԷՃԵԱՆ




Ընդ ... թըշ ... ցա ... մի ...
Ց. վա..ր- դա..գոյց
ա ... ռեամ.. բըդ քո
պը .. սա .. կե .. ցեր
Largo
ff adagio maestoso
զե - կե - ղե - ցի
Թա - գա ... ւո ... ռի-ց
զի.. ցու յաղ .. թեալ
Largo misterioso
p
երկցաւո.....
ռ Թա գա .. ւո ... ռի-ց զի ցու յաղ ռեալ
պա .. տե .. - ռա - զ..մի..
Ց. խո .. հա . կաց
ի .... մաս..տու .. թեամբ
խո... հե .. մա - ցեալ
պա .. տե .. - ռա զ..մի..ց.
խո ... հա . կաց - ի .... մաս..տու .. թեամբ

ff a tempo

ա-ճ-ճա - ռա պէս. Խոր . հըր - դա .. կաճ եւ ծա ... ճու --ցեալ

ff a tempo

ա-ճ-ճա - ռա - պէս. Խոր . հըր - դա . կաճ եւ ծա ... ճու - ցեալ

Solo ad libitum
con fuoco

ff a tempo

ա-ճ-ճա - ռա - պէս. Խո ր է..... ճ Խոր . հըր - դա .. կաճ եւ ծա ... ճու - ցեալ

ff a tempo

ա-ճ-ճա - ռա - պէս. Խոր . հըր - դա . կաճ եւ ծա ... ճու - ցեալ

dim.

ա .. ճուճ բա ... րի. Խա - չէ - լոյճ վը ... կայ ե ... ղեալ հեղ .. մամբ ա ... ռեաճ

dim.

ա .. ճուճ բա ... րի. Խա - չէ - լոյճ վը .. կայ ե ... ղեալ հեղ .. մամբ ա ... ռեաճ

dim.

ա .. ճուճ բա ... րի. Խա - չէ - լոյճ վը ... կայ ե .. ղեալ հեղ .. մամբ ա ... ռեաճ

dim.

ա .. ճուճ բա ... րի Խա - չէ - լոյճ վը ... կայ ե .. ղեալ հեղ .. մամբ ա ... ռեաճ

Allegro

պը .. սա ... կէ ... ցաւ

Allegro

պը .. սա ... կէ ... ցաւ

f Allegro accentuato

պը .. սա ... կէ ... ցաւ ըս ... տա .. ցեալ ըզ.... հա .. լա .. տոյ վա .... հաճ. յու . սոյճ զրա...

f Allegro accentuato

պը . սա ... կէ ... ցաւ ըս ... տա .. ցեալ ըզ.... հա .. լա .. տոյ վա .... հաճ. յու . սոյճ զրա...


հիւք ծած .. կեալ. գփըր - կա ... կա ... ցըց սա .. դա .. ւարտ ի գլուխ ե ... դեալ զցը...
հիւք ծած .. կեալ. գփըր - կա ... կա ... ցըց սա .. դա .. ւարտ ի գլուխ ե ... դեալ զցը...
Legato mp
վա - հաց վե .... հ ե ... ռեւեալ որ մաց .. կու - բյամբ նա
Legato mp
վա - հաց վե .... հ ե ... ռեւեալ որ մաց .. կու - բյամբ նա
շաց խա ... չին. մմ
շաց խա ... չին. . մմ
հա .. տա .. կեալ. խա .. չե ... լոյց վը ... կայ ե ... ղեալ պը... ...սա .. կե ... ցաւ ա ...
հա .. տա .. կեալ. խա .. չե ... լոյց վը ... կայ ե ... ղեալ պը... ...սա .. կե ... ցաւ ա ...

rit.
ռեամբն իւ - րով։
a tempo
մմ
rit.
ռեամբն իւ - րով։
a tempo
rit.
f
accentuato
Եր - կո - քում հա ... ռա .. զա - տօք ընտ .... ռե .. լա ... գոյն ճա ....
rit.

հա .. տա - կօք. յա .. ռա ... ջեալ յա ..... մե .. ցե .. ցունց գլուխ եւ ա ... լարտ մար... .

Lagato
ճա - խա - շա - փղ գո... լով բա .. ռեա ց յա .. ռա ... ջա ... դէ .. մրն
տի ... ռո ... սաց.
mp
մմ
mf
մմ


Գա ... ռե ... գին Ըն... կա...լեալ Ըզ... բրա ... բի ..... ո ... ՅԸՆ յաղ...թա ... ՅԱԿ ՅԱ ...


rit.
Հա ... տա - կացեն
Largo
Largo misterioso
p
ff Adagio maestoso
Ա .... մե .... ՅԵ .... ցուՅ
ff Adagio maestoso
Ա .... մե .... ՅԵ .... ցուՅ
ff Adagio maestoso
Ա .... մե .... ՅԵ .... ցուՅ
ff Adagio maestoso
Ա .... մե .... ՅԵ .... ցուՅ
rit.
ու - սու - ցի..... Ց


Եր ... կըր ... պա ... գել քում տէ ... ռու ... թեա Ցդ. հար ... հա ... ռեալք ա .... ռի... ա... բար.
Եր ... կըր ... պա ... գել քում տէ ... ռու ... թեա Ցդ. հար ... հա ... ռեալք ա .... ռի... ա... բար.
Եր ... կըր ... պա ... գել քում տէ ... ռու ... թեա Ցդ. հար ... հա ... ռեալք ա .... ռի... ա... բար.
Եր ... կըր ... պա ... գել քում տէ ... ռու ... թեա Ցդ. հար ... հա ... ռեալք ա .... ռի... ա... բար.

ff a tempo

ընդ...դէմ մա... հու չար հշ - խա - ցիր ի պա - տե - ռազմ զպատ-ռանս չա .. ռին

ff a tempo

ընդ...դէմ մա...հու չար հշ - խա - ցին ի պա - տե - ռազմ զպատ-ռանս չա .. ռին

Solo ad libitum

ընդ...դէմ մա...հու չար հշ - խա - ցին պատ ռաստեա ..... լ ք

ff a tempo

ի պա - տե - ռազմ զպատ-ռանս չա .. ռին

ff a tempo

ընդ...դէմ մա...հու չար հշ - խա - ցին ի պա - տե - ռազմ զպատ-ռանս չա .. ռին

rit.

խա - բա... ցե...ցի..... ց. ջուր կե...ցաց մեզ ա ր .. բու .. ցին ըզ...հուր մե....ղա ..... ցը - ց շի..ջու...ցին։

rit.

խա - բա... ցե...ցի ..... ց. ջուր կե...ցաց մեզ ա ր .. բու .. ցին ըզ...հուր մե....ղա ..... ցը ց շի.. ջու...ցին։

rit.

խա - բա... ցե...ցի .. ց. ջուր կե...ցաց մեզ ա ր .. բու .. ցին ըզ...հուր մե.... ղա ..... ցը ց շի.. ջու...ցին։

rit.

խա - բա... ցե...ցի ..... ց. ջուր կե...ցաց մեզ ա ր .. բու .. ցին ըզ...հուր մե....ղա ... ցը ց շի..ջու... ցին։



ՅՈՒ. Ա. ԹԱՄԱՆՅԱՆ
(Ճարտարապետ)

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

Պատմական կառուցումներով հարուստ Վայոց ձորը վաղուց ի վեր գրավել է և շարունակում է գրավել թե՛ գիտնականների և թե՛ զբոսաշրջիկների ուշադրությունը:

Այդ հանգամանքը նպաստեց վերանորոգման աշխատանքների ընդլայնմանը հատկապես Եղեգնաձորի շրջանում, ուր Սելիմի քարավանատնից և Ամաղուի Նորավանքից հետո մասնակի աշխատանքներ էին կազմակերպվել Հարատեսի վանքի գավթի վրա, Արենիի, Սպիտակավորի եկեղեցիների և, վերջապես, Ալայազի Ձորաց տաճարի և ս. Կարապետ եկեղեցու վերանորոգման ուղղությամբ:

Ալայազ գյուղը[1] (պատմական Եղեգիս), չափազանց հարուստ լինելով հուշարձաններով, միջնադարի արվեստի և ճարտարապետության պատմության համար բացառիկ նշանակություն է ունեցել և իր կոթողներով ներկայացնում է մի փոքր թանգարան բաց երկնքի տակ:

Այստեղ ամեն քայլափոխին կարող ես հանդիպել կառուցումների մնացորդների, խաչքարերի և տապանաքարերի պահպանված և կիսավեր պատառիկների և այլ բեկորների: Այդ կառուցումներից շատ-շատերը մեզ էին հասել կիսավեր, քայքայված վիճակում, ուստի նրանց կյանքի հարատևման հարցը դարձել էր օրակարգի հարց և պահանջում էր անհապաղ միջամտություն: Մոտ ժամանակներս վերականգնման աշխատանքների շնորհիվ վերջնական կործանումից փրկվեց Ձորաց տաճարը: Ապա աշխատանքներն ընթացան ս. Կարապետ եկեղեցու վերականգնման ուղղությամբ և 1976 թվականին ավարտվեցին: Ս. Կարապետ եկեղեցին գտնվում է գյուղի արևելյան մասում, Ձորաց տաճարից արևմուտք, մոտ 250—300 մետր հեռավորության վրա:

Եկեղեցին իր չափերով մեծ չէ: Ուղղանկյուն հատակագծի մեջ տեղավորված է սրահը՝ արևելյան աբսիդով: Գմբեթակիր կամարները հենվում են աբսիդան եզրող պատերի և երկայնական պատերին կից մույթերի վրա, որոնց վրա վեր է խոյանում կլոր թմբուկով և սրածայր վեղարով գմբեթը: Այսպիսով ստացվում է գմբեթային մի

[1] Հ. Ս. Եղիազարյան, Ազիզբեկովի շրջանի կոյուտարայի հուշարձանները, Երևան, 1955, էջ 59:

փոքր կառուցվածք: Արևմտյան պատի և մույթերի միջև ստացվում են փոքր տարածություններ, ուր տեղադրված է մկրտարանը, հյուսիսային պատի մեջ և մի փոքր խորշ հարավային պատում:

Անցումը գմբեթատակ քառակուսուց դեպի կլոր թմբուկն իրականացված է առագաստների միջոցով: Ներսի հարդարանքը, վերից վար ձգվող կիսասյուները, աբսիդան բոլորող գոտին, ճակատների լուծումը հատ-



Նկ. № 1. Ս. Կարապետ եկեղեցին վերանորոգումից առաջ



Նկ. № 2. Ս. Կարապետ եկեղեցին վերանորոգումից առաջ

կապես արևմտյան պատուհանի երեսկալի հետ միասին հաստատում են կառուցվածքի պատկանելությունը Եղեգիսի ծաղկման երկրորդ շրջանին, հատկապես 13-րդ դարի վերջին քառորդին:

Հատակագծային չափերը մեծ չեն, 5,3 և 6,8-ի վրա, սակայն կառուցվածքների վերաբերյալ համաչափությունները (բարձրությունը շուրջ 13 մետր) նույնպես թույլ են տալիս դասելու նրան 13-րդ դարի վերջին կառուցված հուշարձանների շարքը: Հարավային ճակատի պատուհանի պսակի հիմքում տեղադրված է արեգակի ժամացույց՝ թվերի փոխարեն փորագրված տառանշաններով: Իսկ պսակի վերևի մասում քանդակված են երկու օձանման գլուխներ: Արեգակի ժամացույցի վրա փորագրված տառանշանները փաստորեն միակ տառանշաններն են, որոնք պահպանվել են եկեղեցու պատերին:

Մեզ հասած կառուցվածքը հիմնականում կանգուն էր, սակայն նրա ճակատների զգալի մասի քարերը տեղաշարժվել էին և մի մասն էլ բացակայում էր: Թմբուկը ուժեղ ստորգետնյա հարվածի հետևանքով որոշ չափով ոլորվել էր և պատուհաններին մոտ գտնվող երեսապատերը անջատվել էին շաղախից և դուրս փքվել (նկ. № 1 և № 2):

Վեղարի ծածկի ստորին մասերը բավականին լավ էին պահպանվել, և միայն տուժել էր նրա վերին մասը: Ճակտոնների քիվերի և մասամբ երեսապատերի բացակայության պատճառով թափվել էին տանիքների սալերը, և չէին պահպանում կառուցվածքը մթնոլորտային տեղումներից:

Վայր ընկած բոլոր քարերը հեռացվել էին հուշարձանից և օգտագործվել այլ նպատակների համար: Նման երևույթ տեղի էր ունեցել նաև Զորաց եկեղեցում:

Արևմտյան ճակատի վրա նշմարվում էին կրաշաղախի մնացորդների հետքեր, որոնք կարող էին մնացած լինել կից կառուցված սրահից կամ զանգակատնից: Սակայն արտաքինից ոչ մի հետք չէր նշմարվում:

Վերանորոգման նախագիծ կազմելիս մենք օգտագործեցինք ճարտարապետներ Ա. Հարությունյանի, Ն. Պապուշյանի և Գ. Տոնոյանի՝ 1957 թվականին կատարած չափագրությունները և մեր՝ տեղում կատարած ճշտումներն ու մասնակի չափումները:

Ճակատներում արտահայտված բոլոր հորիզոնական քիվերը և ուղղաձիգ նիշերը վերականգնված են ըստ հուշարձանի վրա պահպանված տվյալների: Արևելյան ճակատի վրա պահպանված մի կտոր քիվի շնորհիվ հնարավոր դարձավ վերականգնել ամբողջ ճակատների քիվերը և ոչ միայն ըստ տրամատի, այլ որոշել նրանց նիշերը: Ճակտոնների թեքությունները որոշվում էին նույնպես ըստ պահպանված հետքերի հյուսիսային և հարավային ճակատների վրա: Գմբեթային քառակուսիների (տումբաների) վերականգնումն անհրաժեշտություն էր հուշարձանի համար: Բարդ էր որոշել ցածր լանջերի հորիզոնական քիվերի տեղադրման բարձրությունը և նրանց արևելյան ու արևմտյան ճակատներում արտահայտվող թեքությունները: Այդ հարցի լուծմանը շատ նպաստեց հյուսիսային ճակատի վրա պահպանված երեսապատի մնացորդը, որը հանդիսանում էր անմիջապես քիվի տեղադրման հենարանը: Այսպիսով լուծվեց ցածր լանջերի հորիզոնական քիվերի տեղադրման նիշի հարցը: Նրանց թեքության որոշման հարցն արդեն մեծ դժվարություն չէր ներկայացնում, որովհետև այն սովորաբար զուգահեռ է լինում ճակտոնների քիվերի ուղղությանը:

Նախագծում ընտրած ուղղությունն իսկ և իսկ համընկավ տեղում երեսապատերի վրա պահպանված կրաշաղախի հետքին: Այսպիսով մեր կռահումները միանգամայն արդարացվեցին:

Թմբուկի երեսապատերի հետ տեղի էր ունեցել հետևյալը՝ նրանք մաս-մաս խարխլվել էին և, անջատվելով շաղախից, դուրս փքվել: Նախագծում այդ հարցերը լուծվեցին մասնակի վերաշարումներով:

Թմբուկի պսակող քիվը և նրա տակ երկու շարք երեսապատերը համարյա չէին ենթարկվել դեֆորմացիայի, ուստի այդ մասը մնաց նախագծում առանց փոփոխության, և դրա հետ կապված վեղարի տանիքի սալերի ստորին քարերը նույնպես մնացին իրենց տեղում, առանց փոփոխության:

Նախագիծը նախատեսում էր միայն լրացնել վեղարի ծածկասալերի վերին մասը՝ տեղադրելով խնձորակի քարը:

Արևմտյան ճակատի պատուհանի երեսակալի հարցը լուծվում էր առանց դժվարությունների, սակայն պատուհանի բացվածքին անմիջապես հպվող մասում տեղադրվում էին ձևավոր քարեր, որոնցից տեղում պահպանվել էր ընդամենը մեկը, իսկ մնացածների հարցը պահանջում էր լրացուցիչ ուսումնասիրություններ:

Ներսում խիստ քանդվել էին թմբուկի պատուհանների մոտի երեսապատերը, որոնք նախատեսվում էին վերաշարել և նոր քարերով լրացնել պակասող մասերը: Արևելյան կոնխայի և արևմտյան թաղի մեջ առաջացած քանդված մասերը լրացվում էին նոր քարով: Բեմի ձևավոր մասի քարերից պահպանվել էին մի քանի կտոր քար, և անհրաժեշտ էր վերականգնել այն՝ լրացնելով գոյություն ունեցող շրջանակը, և բեմ բարձրանալու համար տեղադրել աստիճաններ, որոնց տեղը գծագրվում էր:

Նախագծով նախատեսվում էր կատարել ներսի սալահատակումը նոր տաշված բազալտե սալերից, որովհետև հնից ոչ մի նմուշ չէր պահպանվել: Մաքրման աշխատանքների շնորհիվ, որոնք շատ քիչ նյութ տվեցին, այնուամենայնիվ պարզվեց արևմտյան կից կառուցվածքի հատակագիծը, որը մի փոքր սրահ էր ներկայացնում կառուցված անմշակ քարերից և, հավանաբար, շատ ուշ շրջանի գործ էր: Այդ սրահի ճարտարապետական արժեքը բարձր չէ, և նա մնաց հենց այն վիճակում, ինչ վիճակում հայտնաբերվել էր: Սակայն այդ սրահի պատի մեջ, արևմտյան մուտքի մոտ, գտնվեց մի քարե քանդակ, բավական ոճավորված առյուծի կերպարանքով:

Այդ քանդակի բուն նշանակությունը մեզ չհաջողվեց պարզել, սակայն դա արվեստի անվիճելի գործ է, և սխալված չենք լինի, եթե առաջարկենք այն տեղափոխել և պահել թանգարանում: Նկեղեցու արևմտյան շքամուտքի մոտ հայտնաբերվել է իրար կողք-կողքի դրված փոքր խաչքարերից պատ, որը տեղադրված է եղել մուտքի շեմից ցած:

Մաքրման աշխատանքների շնորհիվ հայտնաբերվեց ծածկի սալի մի բեկոր, հատկապես քիվի վրա հենվող սալի, որի վրա արված քառորդ շրջան գոգավորությունը միաձուլվում էր քիվին, և չնայած աճում էր վերջինիս ընդհանուր բարձրությունը, սակայն ավելի թեթև էր դիտվում այն:

Այս բոլոր տվյալները եկան լրացնելու մեր կողմից կազմած վերանորոգման նախագիծը, որից հետո հաջորդեցին արդեն

շինարարական - վերականգնման աշխատանքները: Աշխատանքների կազմակերպման տեսակետից այստեղ միակ հնարավոր ուղին առաջին հերթին թմբուկի ամրացումն էր, որից հետո միայն հնարավոր կլիներ վերականգնել վեղարի ծածկասալերը և ապա մնացած բոլոր նախատեսված մասերը: Թմբուկը վերաշարվեց մաս-մաս, որը հնարավորություն տվեց անաղարտ մասերին ձեռք չտալ և վերականգնել միայն վնասված մասերը՝ հիմնականում վերաշարելով և պահանջվող տեղերում լրացնելով նոր քարով:

Նշված աշխատանքներն ավարտելուց հետո հնարավոր էր ամրացնել աբսիդայի կոնխայի և արևմտյան թաղի քարերը և անցնել ճակտոնների երեսապատերի քիվերի և, վերջապես, ծածկասալերի իրականացմանը:

Վերաշարվող երեսապատերի քանակը շատ չէր: Այդ բացատրվում է նրանով, որ քիչ թե շատ թույլ վիճակում գտնվող քարերը ժամանակի ընթացքում պոկվել և օգտագործվել են այլ նպատակների համար: Ուստի հիմնականում կատարվում էր նոր քարերի տաշի և շարի աշխատանքները:

Նույնը վերաբերվում է հատակի սալերին, որոնք լիովին բացակայում էին:

Հուշարձանի վերանորոգումից հետո կատարվեց պատերի մաքրում ծորած շաղախներից և իրականացվեց ջրհեռացումը (նկ. № 3 և № 4):

Հողին արտաքին թեքություն հաղորդվեց, որը և հանդիսացավ ջրհեռացման միջոցառումը:

Վերանորոգման աշխատանքները կատարում էր Պ. Մարաբյանի քարտաշ-որմնադիրների բրիգադը՝ ճարտարապետ Ա. Աբրահամյանի մասնագիտական ղեկավարությամբ: Հեղինակային հսկողությունը կատարում էին դոկտ.-պրոֆ. Վ. Հարությունյանը և տողերիս հեղինակը: Տաշելու և շարելու բազալտ քարը հիմնականում տեղափոխվում էր Սիսիանից:

Զորաց տաճարից և ս. Կարապետ եկեղեցուց հարավ, ձորի մեջ, թեք լանջի ստորոտի մոտ, հայտնաբերված ճակատակալ քարը, ծածկված բարձրաքանդակներով, իրենից ներկայացնում է որմնափակ խաչքարերից մի մոնումենտալ կառուցվածքի մնացորդ (նկ. № 5):

Ս. Բարխուդարյանն այսպես է բնորոշում

Նկ. № 3. Ս. Կարապետ եկեղեցին վերանորոգումից հետո



Նկ. № 4. Ս. Կարապետ եկեղեցին վերանորոգումից հետո

Նկ. № 5. Որմնափակ զույգ խաչքարեր

այդ կառուցվածքը. «Որմնափակ զույգ խաչքարեր, մեծ և գեղաքանդակ, շրջափակող բոլոր մասերը քանդված են: Կանգուն խաչքարերը կիսով չափ ծածկված են լանջից սահող հող ու քարով: Տեղում է գտնվում նաև կիսակամար ճակատաքարը. արձանագրության պահպանված մասերից կարելի է շարահարել»[2]:

Արձանագրությունից պարզվում է, որ այն կառուցվել է 1273 թվականին, Սմբատի իշխանության օրոք:

Այս որմնափակ խաչքարի վերականգնման համար նախատեսվում է կառուցել հենապատ, որը կարգելակի լանջով հոսող ջրերի ողողումը, ապա հնարավորին չափով եղած քարերով վերականգնել կառուցվածքը: Այս աշխատանքներն արդեն ձեռնարկված են: Ճակատակալ քարն ընկած է իր քանդակազարդ երեսով դեպի վեր և ենթարկվում է բնության ուժերի քայքայմանը, որի հետևանքով եղծված են թե՛ արձանագրության տառերը և թե՛ քանդակազարդերը:

Պատմական հուշարձանների պահպանման Հայկական ընկերության միջոցներով, սկսած 1964 թվականից, վերականգնվել են մեկ տասնյակից ավելի հուշարձաններ:

Այդ փաստը ինքնին խոշոր նշանակություն է ձեռք բերում, հատկապես մեր օրերում, երբ դեռ շատ և շատ փոքր ու մեծ պատմական կառուցումներ անհամբեր սպասում են իրենց վերականգնմանը:

Ահա այդպիսի ժողովրդական միջոցներով վերանորոգվել է նաև ս. Կարապետ եկեղեցին:

[2] Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, հատոր 3, Երևան, 1967, էջ 116:





ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ

ՇՈՌՈԹԻ ԵՎ ԳԱՂԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Պատմական Երնջակ գավառի (այժմ՝ Նախիջևանի ԻՍՍՀ Ջուլֆայի շրջան) միջնադարյան պատմա-ճարտարապետական հուշարձանների վերաբերյալ պատմական աղբյուրներում պահպանվել են շատ սակավ տեղեկություններ: Միջնադարյան Հայաստանի այս նշանավոր գավառի հուշարձաններից շատերը մասնագիտական գրականության մեջ և առհասարակ ծանոթ են միայն մատենագրական, ազգագրական-կրոնական ընդհանուր բնույթի աշխատությունների մեջ պատահականորեն հիշատակված տարեթվերով և կցկտուր նկարագրություններով:

Հոդվածում ներկայացվող հուշարձանները բացառիկ նշանակություն ունեն 17—18-րդ դդ. հայ ճարտարապետության ամբողջական պատմության ուսումնասիրման համար, ինչպես նաև արժեքավոր պատկերացում են տալիս 17—18-րդ դդ. Երնջակ գավառի շինարվեստի զարգացման նոր աստիճանի վերաբերյալ:

Երնջակ գավառի միջնադարյան նշանավոր ավանների թվին է դասվում Շոռոթը (Շոռոտ), որը նշանավոր է նաև իր ճարտարապետական հուշարձաններով: Շոռոթ ավանը, գյուղաքաղաքը (այժմ՝ Ջուլֆայի շրջանի Շոռոթ գյուղ) պատմական սկզբնաղբյուրներում հիշատակվում է 10-րդ դարի Տաթևի վանքի հին վարչական բաժանման հիման վրա Ստ. Օրբելյանի 13-րդ դարի հարկացուցակում[1] և միջնադարյան Հայաստանի մշակութային կյանքում հայտնի է որպես զարգացած, նշանավոր օջախ: Պատմա-հնագիտական մի շարք հուշարձանների, ճարտարապետական այլևայլ շինությունների ավերակները խոսում են տեղի ճարտարապետական բարձր մտահղացումների, միջնադարյան զարգացած վաճառականության ու առևտրի մասին: Շոռոթեցի վաճառականները միջնադարում (14—18-րդ դդ.) լայն գործարքների մեջ էին ոչ միայն Հայաստանի կարևոր նահանգների ու գավառների առևտրական կենտրոնների, այլև Հնդկաստանի, Իտալիայի, Ռուսաստանի, Հոլանդիայի և այլ երկրների հետ: Պատմական աղբյուրների վկայությամբ հայտնի է, որ Շոռոթում հնուց ի վեր ձևավորվել և 15—18-րդ դդ. զարգացման բարձր աստիճանի էր հասել բազմատեսակ արհեստները՝ կավագործությունը, ջուլհակությունը, ներկարարությունը, մետաղագործությունը, բարկոփությունը, ինչպես նաև գրչարվեստը, որմնանկարչությունը և այլն:

Շոռոթն իր բնական դիրքով հովտաձև և ընդարձակ մի գեղեցիկ դաշտի է նման, որի շուրջը երիզում են տասնյակ բլուրներ ու բլրակներ: Շոռոթի դաշտերի մեծ մասը սպիտակագույն են. դա աղանյութի գերակշռող բաղադրությունից է, որի բարակ շերտերը պատել են ամենուր, հողը գրկել

[1] «Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», Մոսկվա, 1861, էջ 225:

Հարկացուցակը 10-րդ դարում կազմված լինելու մասին տե՛ս **Ս. Հակոբյան**, Հայ գյուղացիության պատմություն, Եր., 1957, հատ. 1, էջ 323: **Հ. Ութմազյան**, Սյունիքը IX—X դարերում, Եր., 1958, էջ 234:

բնական գույնից: «Ծոռ ձոր» կամ «Հաղլաղուզ» անվանվող վայրի կավանյութը դարեր ի վեր շոռոթեցիների համար ծառայել է որպես հրաշալի շինանյութ, որի հունցվածքը դիմացկուն է և ունի ամուր շաղախ՝ քարաշեն տների, ջրատար խողովակների համար: Ըստ տարեց շոռոթեցիների բացատրության, գյուղի դաշտերի երեսին պատած աղագույն կավանյութի համար էլ գյուղը կոչվել է Ծոռոթ-Ծոռոտ: Այժմյան Ծոռոթի շրջակայքում գտնվող մի քանի գերեզմանատների, վանքերի ու եկեղեցիների, հնձանների ու ամրոցների, աղբյուրների և այլ շինությունների ավերակներն ապացույցներ են հանդիսանում այս ավանի միջնադարյան բուռն կյանքի մասին, որտեղ բնակվել է մի քանի տասնյակ հազարի հասնող հայ ազգաբնակչություն*: Դեռևս մինչև 19-րդ դարի կեսերը կիսականգուն վիճակում էին գտնվում Ծոռոթի պատմա-ճարտարապետական հուշարձանների մեծ մասը[2], որոնք ժամանակին զարդարել են գեղեցկատես ավանի համայնապատկերը:

Ծոռոթի պատմա-ճարտարապետական հուշարձանների շարքում նշանավոր համալիրներ են հանդիսացել նրա հանրահայտ վեց եկեղեցիներն ու վանքերը, որոնցից այժմ կանգուն են միայն ս. Լուսավորիչ վանքը և ավանի գլխավոր կամ Մայր եկեղեցին՝ ս. Հակոբը: Ս. Հակոբ եկեղեցին, ս. Գրիգոր Լուսավորիչ վանքը, ինչպես նաև ս. Աստվածածին Կուսանաց անապատը միջնադարում նշանավոր գրչակենտրոններ էին նաև: Միայն 17-րդ դարում այդ եկեղեցիների գրչատներում գրչագրվել է ավելի քան 100 ձեռագրեր, որից մոտ 40-ը պահպանվում է Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում: Ծոռոթի ս. Հակոբ գմբեթավոր բազիլիկան, որը կարևոր ճարտարապետական կառույց է հանդիսանում հատկապես 17-րդ դարի հայկական ճարտարապետության համար, կառուցված է ավանի կենտրոնը հանդիսացող բարձրադիր հարթությունում: Ի տարբերություն Նախիջևանի մի շարք հուշարձանների, ս. Հակոբ եկեղեցին մինչխորհրդային շրջանում որոշ չափով հայտնի է գրականության մեջ[3], որի ուսումնասիրման հարցը վերջին 70—75 տարիների ընթացքում անուշադրության է մատնված: Ս. Հակոբ եկեղեցին իր արտաքին կերպարով, վեհապետ և հոյակերտ գմբեթով դեռևս շատ հեռվից է ուրվագծվում որպես գեղեցիկ ճարտարապետական կառույց: Այս եկեղեցին (նկ. 1, 2) կառուցված է «...համակ կոփածոյ քարերով ներքուստ և արտաքուստ... սագալանջ տանիք եկեղեցույն և աղիւսակերտ վայել-



Նկ. 1. Ծոռոթի ս. Հակոբ եկեղեցու արևմտյան և հարավային ճակատների ընդհանուր տեսքը

չաձև կաթողիկէն հաստատուած են չորս մեծամեծ չքնաղաշէն սեանց վերայ, ունի ընդարձակ բեմ և սեղան, և երկու աւանդատուն...»[4]: Ըստ եկեղեցու արձանագրությունների*, այժմյան տաճարը վերստին վերակառուցվել է 17-րդ դարի կեսերին: Այս հուշարձանը հիմնականում կառուցված է բազալտից, գորշա-կապտավուն քարերից և աղյուսից (գմբեթը), որի արտաքին տեսքը խոսուն է, արտահայտիչ: Եկեղեցու պատկերավոր կերպարը ավելի է ընդգծվում արևմտյան ճակատով: Եկեղեցու գլխավոր մուտքը երիզված է երեք շարք գեղեցիկ քանդակազարդ գոտիներով: Մուտքի բարավորը զարդարված է քառանկյունի գեղեցիկ խաչքարի քանդակով: Մեր ուսումնասիրությունների ժամանակ գլխավոր

* Ծոռոթի հայ ազգաբնակչությունը 17-րդ դարից սկսած գաղթել է պատմական Հայաստանի տարբեր գավառներ: Ծոռոթեցի վերջին հայ ընտանիքները Երևան և նրա շրջակայք են տեղափոխվել մինչև 1960 թ., որից հետո այդտեղ բնակություն են հաստատել Սիսիանի շրջանից եկած 20—25 տուն աղբրբեջանցիներ:

[2] **Ի. Шопен**, Исторические памятники Армянской области, СПб., 1852, էջ 325:

[3] **Ա. Սեդրակյան**, Հնութիւնք հայրենեաց ի գաւառին Երնջակու, Վաղարշապատ, 1872, էջ 122—124: **Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 355—356: Ս. Հակոբի լուսանկարը հրապարակված է նաև Մ. Փափազյանի «Գողթան գավառ» ալբոմում, Վաղարշապատ, 1890:

[4] **Ա. Սեդրակյան**, նշվ. աշխ., էջ 122:

* Ս. Հակոբ եկեղեցու արձանագրությունները հրապարակել է Ա. Սեդրակյանը, որոնք հիմնականում ճիշտ են (տե՛ս նշվ. աշխ., էջ 122—125):

մուտքի մոտ գտնվող ավերակներում 1974 թ. արձանագրել և լուսանկարել ենք մի հարթեցված քարի վրա (0,85×1,105 չափսի) կատարված քանդակագործական աշխատանք՝ Աստվածամոր պատկերումը՝ մանուկ Հիսուսը գրկին: Այս բարձրաքանդակը, որի վերին հատվածը վնասված էր, ունի արտահայտիչ դիմագծեր, կոմպոզիցիոն ասելիք և քանդակագործական կատարելություն, որը կարելի է թվագրել 17-րդ դարի առաջին կեսով:

Նկ. 2. Շոռոթի ս. Հակոբ եկեղեցու գմբեթը հյուսիսից

Լուսավոր և բարձր է նաև ս. Հակոբ եկեղեցու ներքին ինտերյերը, որի բազալտե որմերը հիմնականում քիչ են հարդարված: Գեղեցիկ աբսիդը և ավանդատները լուսավորվում են արևելյան որմերում բացված մեկական բավականին լայն լուսամուտներով, իսկ սրահը՝ հյուսիսային և հարավային որմերում բացված երեքական, ինչպես նաև արևմտյան ճակատում, մուտքի կամարից վերև բացված մեկ լուսամուտներով: Սրահին առանձնակի շքեղություն և լուսավորվածություն է հաղորդում կառույցի ընդհանուր ծավալի մեջտեղում, խաչաձև ծածկի վրա, կառուցված աղյուսաշար բարձր գմբեթի (նկ. 2) ութ լուսամուտները (գմբեթի լուսամուտներն այժմ շարված են): Ընդորում սրահի հյուսիսային և հարավային որմերի մեջտեղի լուսամուտները մյուս լուսամուտների համեմատությամբ ավելի մեծ բացվածքներ ունեն և տեղադրված են ավելի բարձր գծի վրա՝ կառույցի միջին նավին ուղղահայաց երկթեք կտուրներով տրանսեպտների բարձունքում, և ունեն ուղղանկյուն բացվածքներ:

Շոռոթի ս. Հակոբ եկեղեցում առանձնակի ուշադրության է արժանի նաև նրա աղյուսաշար թմբուկի և ութանիստ գմբեթի ճարտարապետական լուծումը, որն իր բարձրությամբ գրեթե համահավասար է դահլիճի բարձրությանը: Այս հուշարձանի գմբեթի (որն ըստ արձանագրության կառուցվել է 1664 թ.[5]) համաչափությունները և ճարտարապետական լուծումները, ինչպես իրավացիորեն նշել է ճարտարապետ Մ. Հասրաթյանը, հար և նման են Մեղրու Մեծ Թաղի ս. Աստվածածին եկեղեցու աղյուսաշար գմբեթի ճարտարապետությանը[6]: Ս. Հակոբ եկեղեցու այժմյան շինությունում պարզորոշ նկատելի են տարբեր ժամանակներում կատարված վերանորոգումների հետքեր: 1643 թ. Շոռոթում գրչագրված մի ձեռագրի գրչի՝ Հովհաննեսի հիշատակարանի տվյալներով Երնջակի սբ. Կարապետ վանքի վանահայր Եսայի վարդապետը նորոգել է նաև «եկեղեցիս Շոռոթու, որ կոչի սուրբ Յակոբ նորոգեալ եղև...»[7]: Վերջին (հավանաբար 20-րդ դարի սկզբներին կատարված) նորոգման ժամանակ գմբեթից դեպի արևմուտք կառուցված է նաև մի փոքրիկ զանգակատուն: 1890 թ. Մ. Փափազյանի առաջին անգամ հրապարակած ս. Հակոբ եկեղեցու լուսանկարում, ինչպես նաև Ա. Սեդրակյանի, Ղ. Ալիշանի նկարագրություններում այս զանգակատունը չի արտացոլված, որը և թույլ է տալիս նրա կառուցումը վերագրելու հետագա շրջանին: Այս փոքրիկ զանգակատունը քառանկյունի, աղյուսաշեն և քառանիստ վեղարով պսակված ռոտոնդա է:

Եկեղեցու արևմտյան ճակատին կցված է եղել ուղղանկյուն հատակագծով քառամույթ գավիթը, որը եկեղեցու ընդլայնական երկարությունից քիչ փոքր է եղել: Գավթի չորս մույթերի կամարները նստել են եկեղեցու արևմտյան ճակատի որմնամույթերի վրա: Գավթի մուտքերի և այլ դետալների մասին այժմ ճիշտ եզրահանգումներ անելը դժվար է, որի կառուցման մասին տեղեկություններ չեն պահպանվել: Միայն գավթի մեջ եղած տասից ավելի խաչքար-տապանաքարերի արձանագրություններից կարելի է եզրակացնել, որ այն կառուցված է եղել

[5] **Ա. Սեդրակյան,** նշվ. աշխ., էջ 124:

[6] **Մ. Մ. Հասրաթյան,** Այուձիի XVII—XVIII դարերի ճարտարապետական հուշարձանները, Եր., 1973, էջ 90:

[7] **Ա. Սմբատյան,** Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակու եւ շրջակայից նորա, Տփխիս, 1904, էջ 177:

15-րդ դարում, որը կործանվել է 1841 թ. երկրաշարժից[8]:

Ի տարբերություն ս. Հակոբ եկեղեցու, որը որոշ չափով հայտնի է գրականության մեջ, Շոռոթի մյուս հուշարձանը՝ ս. Լուսավորիչ վանքը, դուրս է մնացել ուշադրությունից և չափազանց քիչ է հայտնի: Ցավոք, ժամանակի ընթացքում փլատակների է վերածվել այս համալիրի բնակելի ու արտադրական շինությունները, դպրատունը, աղբյուրը, ընդարձակ պարիսպները: Խարխլվել է եկեղեցու տանիքը, հարավային որմը և այլն, որի պատճառով մեր ուսումնասիրության ժամանակ հնարավոր եղավ չափագրել միայն եկեղեցին ու գավիթ-սրահը, իսկ մյուս շինությունների մասին՝ պատկերացում կազմել ավերակներից:



Նկ. 3. Շոռոթի ս. Գրիգոր Լուսավորիչ վանքի ընդհանուր տեսքը հարավից

Ս. Լուսավորիչ վանքը, որը Շոռոթի մշակութային կյանքի վաղագույն օջախներից մեկն է հանդիսացել, կառուցված է այժմյան գյուղից մոտ մեկ կիլոմետր դեպի հյուսիս-արևելք՝ փոքր ձորակի աջ կողմում գտնվող բարձր և ընդարձակ սարավանդում, որը դեպի հարավ-արևմուտք ունի թեթևակի թեքություն: Ս. Լուսավորիչ վանքի համալիրի առջև, որը գրավում է ավելի քան 4 հա տարածություն, փռված է պատմական Շոռոթը իր ավերակներով և վաղեմի բերքառատ այգիներով: Ս. Լուսավորիչ վանքի ներկա համալիրը հավանաբար կառուցվել է դեռևս վաղ միջնադարում այդտեղ գոյություն ունեցող մենաստանի տեղում: Այս վանքը 16—18-րդ դդ. Երևանյան գավառի խոշոր կրթա-կրոնական կենտրոններից մեկն է հանդիսացել: Այդ են ապացուցում նաև նրա մեծաքանակ արտադրական, օժանդակ շինությունները, ունեցած հարուստ կալվածքները: Ըստ վանքի շրջակայքում հայտնաբերված վիմագրական տեղեկության, 17—18-րդ դդ. այդ վանքը ունեցել է ԾԱ (51) խալվար (ընդեղենի չափ է, մեկ խալվարը հավասար է 480 կգ) մուլք[9]:

Եկեղեցու զանգակատան վրա պահպանված արձանագրության տվյալներով այն վերանորոգվել է 1708 թ. Շոռոթի ժողովրդի և Գրիգոր վարդապետի կողմից[10]: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս վանքը վերանորոգվել է նաև 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի կեսերին: Ս. Լուսավորիչ վանքի գլխավոր հատակագիծը նման է միջնադարյան Հայաստանի 17—18-րդ դդ. վանքերի համալիրներին. ընդարձակ ուղղանկյուն պարսպի համարյա կենտրոնում կառուցված է եկեղեցին և արևմուտքից կից գավիթ-սրահը: Պարիսպներից ներս, ինչպես նաև դրսի հատվածներում և եկեղեցուն հարևան կառուցված են եղել մոտ 25—30 բնակելի, կոմունալ և այլ շինություններ, որոնցից այժմ միայն ավերակ հետքերն են տեսանելի: Ս. Լուսավորիչ եկեղեցին (նկ. 3, 5) կառուցված է սրբատաշ մուգ կապտավուն բազալտից, որի դրսի շարվածքում օգտագործված է նաև դեղնակարմրերանգ ֆելզիտանման քարեր: Այն ուղղանկյուն հատակագծով (նկ. 4, գծ. 1) կառուցվածք է՝ երկթեք ծածկով բազիլիկա, որը կազմված է դահլիճից, զույգ ավանդատներից և աբսիդից: Բազալտյա կամարները և ծածկը հանգչում են մեկ զույգ խաչաձև կտրվածքով մույթերի և որմնամույթերի իմպոստների վրա: Մույթերի ընդերկայնական կամարների լայնությունը 97 սմ է, իսկ ընդլայնական կամարներինը՝ 77 սմ: Կառույցի միջին նավը լայն է, իսկ կողքի երկուսը՝ նեղ են: Ինչպես ս. Հակոբ եկեղեցում, այնպես էլ այս եկեղեցում արևմտյան ճակատում լայն և բարձր կամարով բացված երեք բացվածքներից կենտրոնականում գտնվում է եկեղեցու միակ մուտքը, որը բացվում է գավիթ-սրահի մեջ:

Ս. Լուսավորիչ վանքի եկեղեցու աբսիդը կիսաշրջանաձև է և պատի մեջ ունի հինգ որմնախորշեր: Աբսիդի բեմը սրահի հատակից բարձր է և ունի չորս աստիճաններ: Երկու ավանդատներն իրենց հատակագծով ուղղանկյուն են և ծածկված են կիսաշրջանաձև թաղով, որմերի մեջ ունեն որմնախորշեր: Ներքին ինտերյերը լուսավորվում է դեպի ներս բավականին լայն բացվածքով լուսամուտներով: Ընդ որում սրահը լուսավորվում է հյուսիսային, հարավային որմերում բացված երկուական և արևմտյան որ-

[8] Ա. Սեդրակյան, նշվ. աշխ., էջ 124—125:

[9] Նույն տեղ, էջ 131:

[10] Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 354—355:

մում, մուտքի կամարից վերև, մեկ լուսամուտներով: Նման լուսամուտներ են բացված նաև աբսիդում և ավանդատներում (արևելյան որմերում, մեկական): Սրահը լրացուցիչ կերպով լուսավորվում է նաև





Նկ. 4, գծ. 1. Ծոռոթի ս. Գրիգոր Լուսավորիչ վանքի եկեղեցու հատակագիծը (չափագրությունը՝ Ա. Այվազյանի)

երկթեք ծածկում կառուցված քառակուսաձև զանգակատան չորս մեծ պատուհաններով: Տաճարի ինտերյերի բազալտյա հարթ պատերը, որոնք զուրկ են դեկորատիվ էլեմենտներից, ավաղված են եղել: 1708 թ. եկեղեցու վերանորոգման ժամանակ հայտնաբերվել է ինտերյերում կատարված նախկին շրջանի որմնանկարները[11]: Այժմ էլ աբսիդում աննշան կերպով նկատելի են որմնանկարների աղավաղված հետքերը:

[11] Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 355:

Ս. Լուսավորիչ վանքի եկեղեցու երկթեք ծածկում կանգնեցված զանգակատունը կառուցված է մույթերից դեպի աղոթասրահի արևմտյան որմը ձգվող կամարների վրա: Ի տարբերություն Նախիջևանի գավառների ճարտարապետական շինությունների ավանդական ծավալա-տարածական հորինվածքի, որտեղ կաթողիկեները և գմբեթները տեղադրված են համարյա կառույցների կենտրոնական հատվածներում, Ծոռոթի ս. Լուսավորիչ վանքի եկեղեցում աղյուսաշար զանգակատունը կառուցված է նկատելի տեղաշարժումով դեպի արևմուտք: Այս հուշարձանում նրա հաստահեղույս բազալտյա խաչաձև կտրվածքով երկու մույթերը քառակուսի հատակագծի հավասար (9,5×10,45 մ) սրահի հորինվածքում զգալի չափով տեղաշարժ են արվել դեպի արևելք՝ աբսիդը: Եթե աբսիդից մինչև մույթերը ընկած տարածքը կազմում է 3,77 մ, ապա մույթերից մինչև եկեղեցու արևմտյան որմը ընկած տարածքը կազմում է 5,22 մ: Այս եկեղեցու հորինվածքով մեկ զույգ մույթերով են կառուցված նաև Գողթն գավառի Բիստի ս. Նշան, Նավուշի ս. Ստեփանոս անապատների եկեղեցիները, որոնց ճարտարապետական առանձնահատկություններին կանդրադառնանք մեկ այլ առիթով: Միայն նշենք, որ այդ հուշարձանները հայ ճարտարապետության 17-րդ դարի հետաքրքիր նմուշներից են:

Ծոռոթի ս. Լուսավորիչ վանքի գավիթ-սրահը կցված է եկեղեցուն արևմտյան կողմից և գրավում է եկեղեցու ամբողջ ճակատը: Ըստ հատակագծի այն ուղղանկյուն կառուցվածք է և ունի քառամույթ հորինվածք: Գավիթ-սրահը, որը հավանաբար կառուցվել է 16-րդ դարի սկիզբներին, այժմ պահպանվում է (նկ. 5) և եկեղեցու երկթեք ծածկից ցածր է: Այն կառուցված է սրբատաշ բազալտից: Մույթերը բավականին զանգվածեղեն են (1,1×1,3 մ): Միջին երկու մույթերն ունեն Т-աձև կտրվածքներ, իսկ անկյունային երկու մուտքերը՝ Г-աձև: Գավթի արևմտյան ճակատը ներկայացնում է չորս կամարակապ մույթերով կառուցված երեք լայն և բարձր բացվածքներ: Գավիթ-սրահի հյուսիսային և հարավային ճակատները ևս կամարակապ ձևով բաց են: Չորս մույթերի դիմաց, եկեղեցու արևմտյան ճակատին կից, կառուցված են համապատասխան որմնամույթեր, որոնց վրա հենվում են կամարները և գավիթ-սրահի ծածկը:

Մեր ուսումնասիրությունների ժամանակ, 1974 թ., արձանագրել և լուսանկարել ենք եկեղեցու ներսում ընկած երկու փոքրիկ գեղաքանդակ խաչքարեր, որոնք ունեն նաև



Նկ. 5. Ծոռոթի ս. Գրիգոր Լուսավորիչ վանքի եկեղեցու գավիթ-սրահը և զանգակատունը հարավից

արձանագրություններ: Խաչքարերից մեկի ներքևի մասում արձանագրված է (փոքրատառերով) այս չորս տողանոց վիմագրությունը՝

1. Խաչս յշատ(ա)կ է
2. համանքասին
3. և որդոյ տօմշուն
4. թվ (ին) Ռ. (1551 թ.)

(Հրապարակվում է առաջին անգամ):

Երկրորդ խաչքարի վրա (փոքրատառերով)՝ երեք տող՝

1. Ս(ու)րբ խաչս կանկնեց ար(բն) ի-(մոց) հոգ(ո)յ .... իանին:
2. Մուքիին Ա
3. թինիս թվն Ռ ... ծա: է

(Հրապարակվում է առաջին անգամ):

Ս. Լուսավորիչ վանքի մյուս շինություններից գրեթե ոչինչ չի պահպանվել: Պարիսպների շարվածքը հյուսիսային և արևելյան հատվածներում տեղ-տեղ պահպանվել է 0,5—0,8 մ չափով: Ըստ որի պարիսպների շարվածքը իրականացվել է հիմնականում քարով, ունեցել է երկու դարբաս արևմտյան և հարավային կողմերից: Բնակելի և այլ շինությունների որոշ հետքեր պահպանվել են եկեղեցու հյուսիսային և հարավային կողմերում, որոնք կառուցվել են քարով, աղյուսով և կրաշաղախով: Երկուերեք սենյակների հետքեր են նկատելի նաև եկեղեցու գավիթ-սրահի արևմտյան ճակատի դիմաց: Հարավային կողմում պահպանված մի շինություն կառուցված է արևելք-արևմուտք ուղղությամբ, լուսամուտները լայն և ուղղանկյուն են եղել և բացվել են դեպի հարավ, մուտքը՝ արևմուտք: Պարիսպներից ներս, եկեղեցու դիմաց և նրա հարավային մասում, գոյություն է ունեցել նաև ընդարձակ այգի, ծառերի պուրակ, որոնց նմուշները մինչև օրս էլ կան: Պարըսպից դուրս, դեպի հյուսիս, տարածված է եղել վանքի գերեզմանատունը, որի այժմյան տապանաքարերը վերաբերվում են 15—17-րդ դարերին: Ս. Լուսավորիչ վանքի մյուս կոմունալ, արտադրական կառուցվածքների հորինվածքն այժմ անհնար է վերականգնել:

Երնջակ գավառի գեղեցկատես և բարձրաբերձ լեռներից մեկի՝ Օձասարի փեշերին հնուց ի վեր ծվարել են գավառի հայտնի գյուղերից մի քանիսը: Այդ հնահիմք գյուղերի թվին է պատկանում նաև գավառի պատմական Գաղ գյուղը, որը փռված է Օձասարի արևելյան քարքարոտ փեշին: Գաղ ավանը, գյուղը (այժմյան Ջուլֆայի շրջանի Գաղ գյուղ) պատմական սկզբնաղբյուրներում հիշատակվում է 10-րդ դարի վարչական բաժանման հիման վրա կազմված Ստ. Օրբելյանի 13-րդ դարի Երնջակ գավառի հարկացուցակում[12]: Դարեր շարունակ բազմած լինելով բարձրադիր և անմատչելի վայրում, այս գյուղը Երնջակ գավառի անցյալում էական դեր է խաղացել և առհասարակ հայտնի է մի շարք ավանդություններով, նշանավոր՝ իր հնություններով: Սակայն Գաղի պատմական անցյալի, ինչպես նաև նրա մեկ տասնյակի հասնող պատմա-ճարտարապետական հուշարձանների մասին, որոնցից այժմ կանգուն է միայն ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, պատմական աղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել: Գաղը և նրա հուշարձանները սոսկ հիշատակվել և մի քանի տողով նկարագրվել է միայն 19-րդ դարի վերջերում լույս տեսած որոշ աշխատություններում[13], որից հետո առ այսօր Գաղը և նրա հուշարձանները դուրս են մնացել ուսումնասիրողների ուշադրությունից:

Դատելով պատմական Գաղի գրված տարածքից, շինությունների ավերակներից և շրջակայքի ուսումնասիրությունից, կարե-

[12] «Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», Մոսկվա, 1861, էջ 377:

[13] **Ա. Սեդրակյան**, Հնութիւն հայրենեաց ի գաւառին Երնջակու, Վաղ-պատ, 1872, էջ 144—146: **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 359:

լի է վստահորեն ասել, որ այդտեղ մարդիկ բնակություն են հաստատել շատ վաղուց: Իսկ վաղ միջնադարից սկսած այստեղ մշակութային կյանքը հարատևել է մինչև ուշ միջնադար, որտեղ բնակություն է հաստատել ավելի քան 700 տուն հայ ազգաբնակչություն: Պատմական Գաղի հայ ազգաբնակչությունը Նադիր Շահի, Շահ Աբբասի ասպատակումներից հետո մասասյաբար գաղթել է հիմնականում Իզմիր, Կ. Պոլիս և այլուր: 1960—1964 թթ. գաղեցի վերջին ընտանիքները տեղափոխվել են Երևան և նրա շրջակայք (Ենգիջա, Զարբախ, Զանգիբասար): 1965—66 թթ. Սիսիանի շրջանի Զոմարթու գյուղից 17—18 ադրբեջանցի ընտանիքներ տեղափոխվել և բնակվում են այժմյան Գաղում:

Դեռևս 19-րդ դարի սկզբներին պատմական Գաղի ավերակներում պարզորոշ տեսանելի էին ճարտարապետորեն կառուցված ավելի քան 700 տների և այլևայլ շինությունների հետքեր[14]: Այսօր էլ ամրակուռ լեռնաշղթայի պարանոցի երկարությամբ (ավելի քան 2,5 կմ) պարզորոշ երևում են բիրտ լեռնաշղթայի կրծքում հին գաղեցիների կերտած-կառուցած երկհարկանի տների, հուշարձանների ավերակները: Հին գյուղի այգիներում կան 3—4 հարյուր տարվա թթենու, ընկուզենու, տանձենու ծառեր: Գյուղի ավերակներում կան նաև մի քանի հնձանների, ջրաղացների ավերակներ: Առանձնակի ուշադրության է արժանի նաև Գաղի գերեզմանատունը, որն այժմյան վիճակով ունի 1000-ից ավելի տապանաքարեր՝ 14—18-րդ դդ. արձանագրություններով: Շատ տապանաքարեր ունեն ուշագրավ և հետաքրքիր կենցաղային բարձրաքանդակներ և խորաքանդակներ:

Գաղի հյուսիս-արևմտյան կողմում գտնվող ձորի երկարությամբ՝ մինչև Օձասարի կուրծքը, որն անվանվում է «Քարհեզների ձոր», գտնվում են Գաղի հուշարձանների մի մասը, որտեղ կան նաև մի քանի ջրհորների հետքեր: Ձորի երկարությամբ գտնվում է ս. Գայանե մատուռը, ս. Հռիփսիմե, ս. Նահատակ եկեղեցիների, ս. Անապատ վանքի ավերակները: Գյուղի շրջակայքում հայտնի են նաև ս. Եղիա, ս. Սարգիս և այլ մատուռների, Գաղի բերդ-ամրոցի ավերակները: Գաղի հուշարձաններից հանրահայտ է ս. Հռիփսիմե եկեղեցու աղբյուրը, որի առջև բազալտե սրբատաշ քարերով կառուցված է (4,5×3 մ) մի գեղեցիկ ջրավազան, որն ունի 1,45 մ խորություն և ժամանակին ունեցել է թաղակապ բարձր ծածկ: Ս. Հռիփսիմե եկեղեցու այս աղբյուրն ունի բուժիչ հատկություններ, որը ժամանակին Նախիջևանի ամբողջ հայության համար ամենասիրելի այցելավայրերից մեկն է հանդիսացել: Հայկական ավանդությունների շարքում ս. Հռիփսիմե եկեղեցու այս աղբյուրը հայտնի է Գաղի Գյալ-Զարաջուր անունով, որը կապված է Կոստանդնուպոլսից Հայաստան եկած և Գաղում ապաստանած կույս Հռիփսիմեի անվան հետ[15]: Ըստ հին գաղեցիների ավանդության, Գաղ անվանումը ծագել է Հռիփսիմե կույսը այդտեղ իր հետ բերած սուրբ մասունքները պահելուց, գաղելուց[16]: Ակնատեսների վկայությամբ ս. Հռիփսիմե եկեղեցու այժմյան ավերակներում մինչև 1975 թ. կար մի գեղեցիկ քանդակազարդ արձանագիր (մոտ 1×1,1 մ չափի), որն ունեցել է 10—12 տող վիմագրություն: 1976 թ. մեր ուսումնասիրությունների ժամանակ երկար որոնումներից հետո ավերակներից հայտնաբերել ենք այդ գեղաքանդակ արձանագրի մի կտորը միայն, որը քարակտորի ամբողջության վերևի բեկորն էր և իր վրա կրում էր վիմագրության առաջին երեք տողերի վերջին բառերը (գլխատառերով)՝

Նկ. 6. Գաղի ս. Գրիգոր Լուսավորիչ վանքի ընդհանուր տեսքը հարավ-արևելքից

1. .... Սուրբ
2. .... Ս. Հռիփսիմէ
3. .... Գաղ գիւղի

Դատելով վիմագրության և գեղեցիկ զարդագոտու տվյալներով, կարելի է են-

[14] «Статистическое описание Нахичеванской провинции», СПб., 1833, էջ 75:

[15] Ա. Դանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 101:

[16] Материалы для описания местностей и племен Кавказа, Тифлис, 1882, вып. 2, II отд., էջ 46:

թադրել, որ այս բեկորը 17-րդ դարի սկզբների քանդակագործական աշխատանք է:

Դժբախտաբար դարերի ընթացքում քանդվել և արդեն իսպառ ավերակների են վերածվել Գաղի մեկ տասնայկի հասնող պատմա-ճարտարապետական հուշարձանները, որոնց համալիրների մասին այժմ ճիշտ պատկերացումներ տալն անհնար է: Միմիայն տարեց գաղեցիների հիշողությունների հիման վրա կարելի է ասել, որ Գաղի ս. Հռիփսիմե, ս. Նահատակ եկեղեցիներն ունեցել են սրահավոր, իսկ ս. Անապատ վանքի եկեղեցին՝ քառամույթ բազիլիկայի հորինվածքներ:

Գաղի ճարտարապետական հուշարձանների շարքում նշանավոր կառույց և հոգևոր կենտրոն է հանդիսանում ս. Գրիգոր Լուսավորիչ վանքը, որն այժմ բարեբախտաբար դեռևս կանգուն է և արժեքավոր տեղեկություններ է տալիս Գաղի ճարտարապետության մասին: Գաղի ս. Գրիգոր Լուսավորիչ վանքը (նկ. 6, 7) կառուցված է վաղեմի գյուղի կենտրոնական թաղամասի բարձրադիր վայրում, ապառաժ լեռնալանջի փեշին, թեքադիր վայրում: Այս վանքը հավանաբար հիմնադրվել է 12—13-րդ դարերում, որի հնագույն ձևի, ժամանակի, ինչպես նաև վերանորոգումների մասին գրավոր աղբյուրներում և վանքի արձանագրություններում բավարար տեղեկություններ չի պահպանվել: Ժամանակի և հատկապես Նադիր Շահի, Շահ Աբբասի ասպատակումների ժամանակ այս վանքը ևս ավերվել է և հետագայում վերակառուցվել մի քանի անգամ: Հայտնի է, որ Գողթնի և Երնջակի մի շարք վանքերի ու եկեղեցիների հետ միասին այս վանքը ևս վերանորոգվել է Մովսես և Փիլիպոս կաթողիկոսների կողմից՝ «...և Շահկերտ գեղջ և Գաղ գեղջ, որք շինեցան յաւուրս տեառն Յակովբ կաթուղիկոսի...»[17]: Ս. Գրիգորին գաղեցի Ավալջանի կողմից նվիրված մի Ավետարանի հիշատակարանից տեղեկանում ենք, որ «ի հիմանէ սկիզբն եղեւ ս. Գրիգոր եկեղեցւոյս Գաղայ, եւ ի գալ միւս ամին աւարտումն եղեւ ի թվին ՌԾ եւ ութին, ի փառս Քի Այ մերոյ»[18]: Ըստ Ա. Սեդրակյանի տվյալների տեղեկանում ենք, որ այս վանքը տուժել է նաև 1841 թ. երկրաշարժից[19]:

Գաղի ս. Գրիգոր Լուսավորիչ վանքի եկեղեցին իր հատակագծով (նկ. 4, գծ. 2) կառուցված է Գողթնի և Երնջակի հուշարձանների ավանդական քառամույթ գմբեթավոր բազիլիկայի հորինվածքով, որի խաչաձև ծածկը նստած է չորս մույթերի և արտաքին պատերի վրա: Այս գեղեցիկ հուշարձանը կառուցված է հիմնականում մաքուր տաշած բաց-կապտավուն բազալտից, բաց-դեղին ֆելզիտից:



Նկ. 4, գծ. 2. Գաղի ս. Գրիգոր Լուսավորիչ վանքի եկեղեցու և գավթի հատակագիծը (չափագրությունը՝ Ա. Այվազյանի)

Ս. Գրիգոր Լուսավորիչ վանքի եկեղեցու արտաքին արտահայտչականությունն ունի պատկերավորություն և ազդեցիկ է: Արև-

[17] «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 353:

[18] Երևանի Մատենադարան, **Մ. Տեր-Մովսիսյան Մագիստրոս,** Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, Ավետարան, 2-րդ թղթ., էջ 823:

[19] **Ա. Սեդրակյան,** նշվ. աշխ., էջ 144:

մընչյան ճակատում, որտեղ բացված է եկեղեցու միակ մուտքը, մուտքի աջ և ձախ կողմերում, բարավորից վերև, բարձունքում, ագուցված են մի քանի հիշատակագրված գեղաքանդակ խաչքարեր, վիմագիր քարեր, որոնք հանդիսանում են մուտքի և արևմտյան ճակատի արտաքին մասի դեկորը: Արտահայտիչ և վեհապանց է նաև եկեղեցու ներքին ինտերյերը: Գեղեցիկ և խոսուն է հատկապես բեմի աբսիդը, որի շարվածքի ամբողջ բարձրությունը երիզված է ընդգծված հաստապալար մանածո զարդանախշով:

Աբսիդի կիսաշրջանաձև շարվածքում (նկ. 7) երկշարք ձևով բացված են գեղեցիկ և բարձր (0,8×1,2 մ) կամարակապ խորշեր, որոնք ավարտվում են սլաքաձև պսակով: Ընդ որում աբսիդի խորշերի առաջին շարքի յոթ խորշերից երկուսը՝ աբսիդի լուսամուտի տակի և հարավային կամարաշարի առաջին խորշը, փոքր են (0,5×0,6 մ) և իրենց բացվածքներով պայտաձև են: Մյուս չորս խորշերի համեմատությամբ 0,6×0,85 մ բացվածք ունի նաև հյուսիսային առաջին խորշը: Աբսիդի երկրորդ շարքի խորշերը բացված են առաջին շարքի յոթ խորշերի ուղղությամբ, որոնք, ի տարբերություն առաջին շարքի խորշերի, երիզված են գեղեցիկ պունաձև կամարազարդերով: Երկրորդ շարքի միջին խորշից դեպի դուրս բացվում է լայն և բարձր լուսամուտը, որը և լուսավորում է գեղեցկատես աբսիդը: Աբսիդի երկու կողմերում տեղադրված են երկհարկանի ավանդատները, որոնք արևելյան պատերում ունեն մեկական լուսամուտներ: Ընդ որում երկհարկանի ավանդատներով հուշարձանները Երնջակ գավառի միջնադարյան (12—17-րդ դդ.) ճարտարապետության համար տարածված ձև է հանդիսացել: Երկհարկանի ավանդատներով են կառուցված գավառի Աբրակունիսի ս. Կարապետ վանքի, Հին և Նոր Փորադաշտ (Փարադաշտ) գյուղերի եկեղեցիները և այլ հուշարձաններ: Ի միջի այլոց Գաղի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ավանդատների երկրորդ հարկեր մուտք գործելը հնարավոր է միմիայն թունելանման թաքստոցների միջոցով, որը բնորոշ է 17-րդ դարի հուշարձաններին: Այս հուշարձանում հարավային առաջին հարկի ավանդատան և աբսիդի միջև եղած բուտոբետոնի զանգվածի մեջ թողնված անցքի միջոցով մուտքը բարձրանում է երկրորդ հարկի ավանդատուն: Երկրորդ հարկի ավանդատան հյուսիսային որմով թունելանման անցքը շրջանցում է աբսիդը և մտնում մյուս՝ հյուսիսային երկրորդ հարկի ավանդատուն, որտեղից էլ իր հերթին աննկատ կերպով կարելի է եկեղեցուց դուրս գալ եկեղեցու հյուսիսային որմում թողնված հատուկ անցքից: Երկրորդ հարկի ավանդատները, ինչպես նաև պատերի մեջ թողնված դատարկ տարածությունները վանքի համար ծառայել են որպես լրացուցիչ պահեստներ, գաղտնի թաքստոցներ,



Նկ. 7. Գաղի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու աբսիդը

որտեղ պահվել են վանքի սրբությունները, ձեռագրերը, պատսպարել մարդկանց:

Գաղի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բարձր սրահը լուսավորվում է հարավային որմում բացված երեք և արևմտյան ճակատում, մուտքի կամարից վերև, թողնված մեկ լուսամուտներով, որոնք արտաքին մասերում ունեն նեղ, իսկ դեպի ներս՝ լայնացող ձև: Թեքադիր վայրում հիմնված լինելու հանգամանքով կառույցի հյուսիսային որմը հենապատի նշանակություն ունի և իր ընդերկայնական հատվածի գերակշռող մասը, 80%-ի չափով, խրված է քարաժայռի կուրծքը: Այս պատճառով էլ եկեղեցին հյուսիսային որմում լուսամուտներ չունի: Ըստ երևույթին այս բացը շտկելու համար եկեղեցու ծածկում, գմբեթից 2—2,5 մ դեպի արևմուտք, երկթեք ծածկի հյուսիսային հատվածում բացված է մի երդիկ: Սրահին առանձնակի լուսավորվածություն է տալիս աղյուսաշար գմբեթի բավականին բարձր և

լայն ութ լուսամուտները, որի ութանիստ թմբուկը կանգնեցված է քառակուսաձև չորս ամրակուռ մույթերի թաղերի վրա: Նախկինում ավերված ավելի մեծ չափի գմբեթի գմբեթատակ տարածության փոքրացման եղանակով վերանորոգումների ժամանակ եկեղեցու խաչաձև ծածկում կանգնեցված այժմյան ոչ մեծ բարձրություն ունեցող գմբեթը, ինչպես նաև ամբողջ եկեղեցին ժամանակին որմնանկարված է եղել: Այժմյան վիճակով որմնանկարների միակ հետքերը գմբեթի սվաղի վրա պահպանված ծաղկազարդ ֆրիզներն են: 20-րդ դարի կեսերից հետո եկեղեցու ներսում պահպանվող պահեստային իրերից բռնկված հրդեհի պատճառով սևացել է շինության ներքին ինտերյերը և իսպառ քայքայել և աղավաղել որմնանկարները: Դատելով գմբեթի ծաղկազարդերի նկարչական արվեստից, ինչպես նաև հենվելով ավանդության վրա, կարելի է ասել, որ այս եկեղեցին ևս որմնանկարված է եղել Գաղին հարևան Ծոռոթ ավանի Հովնաթանյանների տոհմի նկարիչների կողմից, որոնք 18-րդ դարում նկարազարդել են հայրենի Երընջակ և Գողթն գավառների մի շարք վանքերն ու եկեղեցիները[20]:

Ինչպես նշվեց վերևում, ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևմտյան ճակատում տեղադրված են մի քանի վիմագիր խաչքարեր, որոնք վերաբերվում են վանքի 16—17-րդ դդ. վերանորոգումներին: Արևմտյան ճակատի հարավային մասում, գավիթ-սրահի ծածկից քիչ վերև, որմի շարվածքում, պահպանվել է հետագայում այդտեղ դրված մի քանդակազարդ խաչքար, որի ներքևի մասն արդեն քայքայված է: Այդ քանդակազարդ խաչքարի խաչի ներքևի մասում պահպանվել է 4—5 տողից կազմված արձանագրության առաջին երկու տողերը (փոքրատառերով)՝

1. թվին
2. ողղ (1641 թ.) ս(ու)րբ

(Հրապարակվում է առաջին անգամ):

Արևմտյան ճակատի հյուսիսային հատվածի շարվածքում պահպանված մի այլ խաչքարի ներքևի մասում քանդակված է վեց տողանոց վիմագրություն (փոքրատառերով): Այս խաչքարի ներքևի հատվածի ձախ անկյունը կոտրված է, և արձանագրության տառերից մի քանիսը դժվարընթեռնելի են դարձել՝

1. Խաչս յիշատակ (է)
2. տր ա..քն բեկի
3. ..ն մաթէոս
4. մարտիրոսին
5. ...ոին նս
6. ...զէն ....

(Հրապարակվում է առաջին անգամ):

Այս արձանագրության մեջ ա տառը գրված է արձանագրության մյուս տառերի բարձրությանը հավասար, մեկ ուղիղ գծի ձևով: Վիմագրության մեջ նման վիմագրման հանդիպում ենք Հին Ջուղայի գերեզմանատան խաչքարերի արձանագրություններում[21], Ցղնայում, Մեսրոպավանում:

Եկեղեցու մուտքի հարավային կողմում վերանորոգումների ժամանակ ագուցված և գեղեցիկ քանդակների մեջ առնված խաչից ներքև գրված է վեց տողանոց արձանագրություն: Խաչքարի խաչի թևերի մասում քանդակված է՝

1. թիվ ՌԹ (1560 թ.)
2. [յշ]տակ

Սրանից ներքև (փոքրատառերով)՝

1. Ս(ուր)բ խ(ա)չս յի
2. շ(ա)տակ է փա
3. ղլաթին տա
4. ղմիշին խա
5. նբէկէ մկ
6. րտին բէկ թ. ոկ. (1611 թ.)[22]

Այս խաչքարի վրա վիմագրական աշխատանքները տարբեր տարիներում կատարված լինելու փաստն է ապացուցում նաև այդ երկու արձանագրությունների փորագրման խիստ տարբեր ոճերը: Այս վիմագրությունում ևս ա տառը գրված է մեկ գծի եղանակով: Սակայն այստեղ այդ մեկ գիծը փորագրված է հռոմեական մեկ թվանշանի նման, և վերևի ու ներքևի մասերը ունեն եռանկյունաձև խիստ ընդգծվածություն, և արձանագրության տառերի մեջ քանդակված է ա փոքրատառի նորմալ բարձրությամբ:

Մուտքի բարավորից երեք շարք վերև, կամարից երկու շարք ներքև տեղադրված մեկ կտոր քարի վրա չորս տող (գլխատառերով)՝

1. Այս քարս յիշատակ է Մ(ա)հդսի
2. Սայիպշին, կ(ո)ղ(ա)կցին,

[20] Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը XVII—XVIII դարերում, Եր., 1974, էջ 171—173:

[21] С. Тер-Аветисян, Город Джуга, Тифлис, 1937, էջ 127:

[22] Այս արձանագրության հմմտ. տես Ա. Սեդրակյան, նշվ. աշխ., էջ 146: Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 359:

3. թոռան, դստեր Ավդալի և Մարիամայ.
4. թվ ՌՃԵ (1656 թ.)[23]

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևմտյան ճակատի միակ մուտքը բացվում է գավթի մեջ, որը զգալի չափով գավթի հատակից բարձր է և ունի երեք աստիճաններ: Գավթի ուղղանկյուն հատակագիծը, որը եկեղեցու ընդլայնական տարածությանը հավասար է, իրականացված է սրբատաշ ֆելզիտից ու աղյուսից և ունի երկու մույթ, որի արևմտյան ճակատն իրենից ներկայացնում է որպես կամարակապ երեք բացվածքներ (հյուսիսային ճակատը փակ է): Գավիթ-սրահի երկու մույթերի կամարները նստում են մույթերին՝ համապատասխան եկեղեցու արևմտյան ճակատին կից որմնամույթերի, ինչպես նաև գավթի հյուսիսային և հարավային որմի վրա, որոնք և կրում են թաղակապ ծածկը: Երկու մույթերի հորինվածքով կառուցված լինելու հանգամանքով գավիթ-սրահի ընդերկայնական երկարությունը փոքր է և հատակագծում ձգվում է հյուսիս-հարավ: Գավթի կառուցվածքում վերին մասերի ծանրությունը նվազեցնելու համար թաղերի ամբողջ ծածկը իրականացված է աղյուսով: Ժամանակին ամբողջապես սվաղված է եղել նաև գավիթ-սրահի ինտերյերը:

Գաղի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինության ժամանակ հատուկ ուշադրության է արժանացել նաև կառուցվածքի սեյսմակայունության հարցը: Այդ նպատակով ուշադրություն է դարձվել կառույցի տարբեր մասերում ծանրության տեղաբաշխմանը, որի պատճառով էլ վերին հատվածների ծանրության թեթևացման համար շարվածքների մեջ օգտագործված է աղյուս, թողնվել է թունելանման թաքստոցներ (աբսիդի և ավանդատների հատվածում): Աղյուսաշար են մույթերի վերին հատվածները, թաղերը, գմբեթի առագաստային անցումները և այլ մասերը: Տաճարի տանիքը ծածկված է քարե սալերով, որոնք կտրված են 10—12 սմ հաստություն ունեցող բազալտանման քարերից: Սալերը մաքուր տաշված են արտաքին երեսներից և կողերից, իսկ ծածկին և թաղերին նայող երեսները՝ կիսամշակ, որը և նպաստել է շաղախի հետ ամուր կապակցմանը:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գավիթ-սրահի կառուցումից հետո, հետագայում, հավանորեն 18-րդ դարի վերջերին կամ 19-րդ դարի սկզբներին, գավթի հարավային թաղի տակ և նրա շարունակությամբ ևս (8 մ չափով) կառուցվել է միահարկ սենյակներ, որոնք ունեն թաղակապ ծածկերով հարթ կտուրներ և որոնք իրենց բարձրությամբ գավիթ-սրահի ծածկից բավականին ցածր են: Այդ չորս սենյակների մուտքերը բացվում են (այժմ քարով շարված է երեքի մուտքը) գավիթ-սրահի առջև՝ դեպի բակ: Մուտքերի բացվածքներն ունեն գեղեցիկ կամարներ, որոնք բավականին լայն են: Սենյակներից երկուսն ունեն ուղղանկյուն բացվածքներով մեկական պատուհաններ, որոնք բացված են հարավային որմերում: Սենյակների մակերեսները ենթադրել են տալիս, որ դրանք օգտագործվել են որպես բնակելի տարածություններ 2—3 մարդու համար: Ընդ որում բակի կողմից առաջին սենյակն ունի երկու մուտք, որից մեկը բացվում է դեպի բակ, իսկ մյուսը՝ դեպի հարավ: Վերջինս գեղեցիկ է, կամարաձև բարձր բացվածքի մեջ թողնված, որն ըստ երևույթին ծառայել է նաև որպես բակի մուտք: Այս մուտքի ծածկից վերև դեռևս մնում են որմերի շարվածքներ, որոնք ենթադրել են տալիս այլ շինության առկայության մասին:

Ս. Գրիգոր Լուսավորիչ վանքից 25—30 մ հարավ-արևմուտք գտնվում է ուղղանկյուն հատակագծով շինության մեջ բերված հորդահոս աղբյուրը: Այդ շինությունը, որը կառուցված է սրբատաշ քարերից, իր բարձրության 80%-ի չափով կառուցված է գետնի մեջ և ունեցել է թաղակապ ծածկ: Աղբյուր մուտք են գործել շինության հարավային կողմից բացված մուտքով, որն ունի դեպի ցած իջնող քարե աստիճաններ:

[23] Այս արձանագրության հմմտ. տես **Դ. Ալիշան**, նույն տեղ: **Ա. Սեդրակյան**, նշվ. աշխ., էջ 145: Մուտքի մյուս երեք արձանագրությունները տես **Ա. Սեդրակյան**, նույն տեղ, էջ 145—146:



ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ՔԵՆԻԱՅՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 22—27-ը Լիմուրուի (Քենիա, Նայրոբիի մոտ) քրիստոնեական կենտրոնում տեղի ունեցավ Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի Աշխատանքային կոմիտեի այս տարվա առաջին նստաշրջանը՝ Քենիայի ազգային քրիստոնեական խորհրդի հրավերով: Ներկա էին հինգ մայրցամաքների 22 երկրներից 70 պատվիրակներ, դիտորդներ, հյուրեր: Նստաշրջանում Մայր Աթոռը ներկայացնում էր ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Հովհաննես Թոփուզյանը:

Նստաշրջանը բացվեց Տերունական աղոթքով: Քենիայի Ջոն Կամաուն եպիսկոպոսը, հանուն Աֆրիկայի քրիստոնյաների, ողջունեց ներկաներին և հաջողություն ցանկացավ նրանց աշխատանքներին:

Առաջին նիստում ընթերցվեց խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի նախագահ, Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ Նիկոդիմի ողջույնի նամակը՝ ուղղված Աշխատանքային կոմիտեի նստաշրջանի մասնակիցներին: Նկատի ունենալով միտրոպոլիտ Նիկոդիմի առողջական վիճակը և ընդառաջելով նրա ցանկությանը, Աշխատանքային կոմիտեն Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի նախագահի տեղակալ նշանակեց Ուկրաինայի պատրիարքական էկզարխ, Կիևի և Գալիցիայի միտրոպոլիտ Ֆիլարետին, որը պետք է գործի միտրոպոլիտ Նիկոդիմի անձնական ներկայացուցչի հանգամանքով:

Նստաշրջանի գլխավոր թեման էր՝ «Խաղաղություն, արդարություն և ազատագրություն Աֆրիկայում. քրիստոնյաների նպաստը»: Այդ թեմայով լսվեց երկու զեկուցում: Առաջին զեկուցողը՝ Քենիայի արտաքին գործերի մինիստրության քարտուղար Ժ. Բ. Մվաուրան, անդրադարձավ Աֆրիկայում գաղութատիրության վերջին օջախների վերացման հարցին, իսկ երկրորդը՝ համայն Աֆրիկայի եկեղեցիների խորհրդի գլխավոր քարտուղար կանոնիկոս Բուրջես Կարը, կանգ առավ օտար միջամտությունների հետևանքով Զաիրում և «սև մայրցամաքի» այլ երկրներում ստեղծված անհանգիստ վիճակի վրա: Նրանք բարձր գնահատեցին Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի նպաստը Աֆրիկայի ժողովուրդների խաղաղության, արդարության և ազատագրության համար մղվող պայքարում:

Նստաշրջանում լսվեցին Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար դոկտ. Կարոլի Տոթի զեկուցագիրը և բազմաթիվ այլ հաշվետվություններ՝

անցնող վեց ամիսների ընթացքում ԽՔԿ-ի ծավալած գործունեության մասին: Գոհունակությամբ նշվեց, որ զգալի չափով աշխուժացել են Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության, Իտալիայի, Ավստրիայի, Ճապոնիայի, Չեխոսլովակիայի, Հունգարիայի և այլ երկրների ԽՔԿ-ի տեղական կազմակերպությունները, տեղի են ունեցել աստվածաբանական, տնտեսական, քաղաքական և այլ հանձնաժողովների նիստեր, եկեղեցիների, էկումենիկ կազմակերպությունների, Խաղաղության համաշխարհային խորհրդի ներկայացուցիչների հետ դիալոգներ, պատվիրակություններ են ուղարկվել Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի տարբեր երկրներ:

Այնուհետև կազմվեց առաջիկա վեց ամիսների գործունեության ծրագիրը, որի մեջ առավել կարևոր տեղ են գրավում հետևյալ համաժողովները. առաջին՝ այս տարվա դեկտեմբերին Սիերա Լեոնում կգումարվի Աֆրիկայի քրիստոնյաների Խաղաղության համաժողովը, որը կոչված է նոր մղում տալու Աֆրիկայի քրիստոնեական-առաջադիմական ուժերի պայքարին՝ հանուն խաղաղության և արդարության. երկրորդ՝ 1978 թվականի հունիսին Պրագայում կհրավիրվի Խաղաղության համաքրիստոնեական Ե համաժողովը՝ «Աստուծո պատգամը համերաշխության համար. քրիստոնյաները խաղաղության, արդարության և ազատագրության համար մղված պայքարում» բնաբանի ներքո: Որոշվեց այդ հանձնաժողովին հրավիրել 450 պատգամավորներ և 150 դիտորդ, հյուր, լրագրող: Պատգամավորների շուրջ մեկ երրորդը գալու է Աֆրիկայից, Ասիայից և Լատինական Ամերիկայից, մեկ երրորդը՝ Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրներից և Սովետական Միությունից, մեկ երրորդն էլ՝ Արևմտյան Եվրոպայից, ԱՄՆ-ից և Ավստրալիայից:

Նստաշրջանը մի շարք բանաձևեր ընդունեց միջազգային առավել հրատապ հարցերի վերաբերյալ: Այդ փաստաթղթերով պահանջվում է Հնդկական օվկիանոսը վերածել «խաղաղության ավազանի», հարգել Նամիբիայի անկախությունը, չմիջամտել նրա ներքին գործերին, Զիմբաբվեում վերջ դնել ցեղային խտրականությանը և իշխանությունը փոխանցել ճնշող մեծամասնություն կազմող սևամորթ բնակչությանը, Մերձավոր Արևելքի պրոբլեմը լուծել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի վրա՝ հարգելով պաղեստինցի արաբ ժողովրդի ազգային օրինավոր իրավունքները, երաշխավորելով այդ աշխարհամասի բոլոր ժողովուրդների անվտանգ զարգացման իրավունքը:

Աշխատանքային կոմիտեի նստաշրջանի մասնակիցները ընդունվեցին Քենիայի եկեղեցական և պետական իշխանությունների կողմից: Ապրիլի 24-ին, կիրակի օրը, նրանց հնարավորություն ընձեռվեց պաշտամունք կատարելու Նայրոբիի և Լիմուրուի եկեղեցիներում, նրանց պատվին հանդիսավոր ճաշկերույթներ, ընդունելություններ կազմակերպեցին համայն Աֆրիկայի եկեղեցիների խորհուրդը, Քենիայի եկեղեցիների խորհուրդը և Նայրոբիի քաղաքագլուխը:

Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի Աշխատանքային կոմիտեի հաջորդ նստաշրջանը տեղի կունենա այս տարվա նոյեմբերին Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության Առնոլդշեյն քաղաքի Ավետարանական ակադեմիայի դահլիճում:



ՑՍԻՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

Իսկ Ձեզ սիրելեացդ մնայ իւրաքանչիւրոցդ ըստ չափու կարեաց և աստիճանի աջակից և սատար հանդիսանալ նորապսակ Տ. Գիտ Եպիսկոպոսի յամենայն Աստուածահաճոյ և յազգօգուտ գործս, ունկնդիր լինել քարոզութեանց նորին, յորոյ ի վերայ ընդ մեծի պատուոյն զմեծամեծ պարտիս եդաք՝ քարոզել, խրատել, յորդորել և յանդիմանել ըստ խրատու Ս. Առաքելոյն և բանալ զընծայարան:

Այլ Ձեզ են բանք իմ, սիրելի շինականք և գիւղական երկրագործ ժողովուրդ Հայոց, լուր խրատու Հայրապետիս Հայաստանեայց, զոր աւանդեմք Քեզ: Նախ՝ պարտ է Ձեզ միշտ ի մտի ունել, զի դուք ամենեքեան ազգակիցք և հարազատ եղբարք էք միմեանց, ուստի և միշտ պարտ էք կալ և լինել ընդ միմեանս եղբայրաբար, և սիրով, միաբան և համերաշխ ոգւով, ի բաց թոթափել ի Ձենջ զատելութիւն և զներքին թշնամանս, որով աւերէք և կործանէք զտունս և զընտանիս Ձեր: Երկրորդ՝ մի լիցի երբէք Ձեզ խոտորիլ ի լուսաւոր շաւղաց երանելի հարցն Ս. Հայրապետաց Մերոց և մի լիցի մոռանալ Ձեզ զկրօն և զեկեղեցի Հայաստանեայց, զոր բազում տառապանօք վերահաստատեաց լուսատուն հոգւոց մերոց՝ առաջին Հայրապետն Հայաստան աշխարհիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ և որք ընդ նմա Ս. որդիք և թոռունք Նորին և այլ մեծագործ և արդարավաստակ Հայրապետք բարեզարդեցին պայծառացուցին և անփորձ պահելով մինչ ցայսօր Մեզ հասուցին: Գիտէք, որդեակք սիրելիք, զի հիմն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ Միածինն էարկ և քարինք ամենայն ներկեալք և շաղախեալք կան արեամբ նախնեաց և բիւրաւոր անմեղ նահատակաց Մերոց: Ուստի և պարտ է Ձեզ սիրել յամենայն սրտէ, յամենայն մտաց և յամենայն զօրութենէ Ձերմէ զեկեղեցին Հայաստանեայց, հիմունք որոյ հաստատեալ կան նաև ի վերայ անձնազոհ Հայրապետաց և Նահատակաց Ազգիս Հայոց, յիշատակն որոց միշտ և յաւէտ օրհնութեամբ եղիցի:

Դուք սիրելի շինականք, որ հայր էք և ծնող խնամատար, յորդոր կարդացէք զաւակաց և երիտասարդաց Ձերոց՝ լինել միաբան, համերաշխ, մի՛ սիրտ և մի՛ հոգի, որպէս մի՛ ազգ, մի՛ եկեղեցի և մի՛ ընտանիք, զի և Աստուած սիրոյ և խաղաղութեան ի Ձեզ բնակեսցի: Գիտէք, զի ասացաւ զուգութիւն է մայր բարեաց և անզուգութիւն ծնող չարեաց: Ուսարուք ի Փրկչէն, որ ասէ, յայսմիկ ծանիցէ աշխարհ զՁեզ՝ եթէ որդիք էք Հայաստան աշխարհիս և ժառանգ Մօրս Լուսոյ Ս. Էջմիածնի և հարազատք սորին, եթէ սիրեցէք զմիմեանս: Գիտէք, եթէ որքան տուժեցաք և տուժի ազգն Հայոց յերեսաց տգիտութեան, երկպառակութեան և անմիաբանութեան, զի ուր ո՛չ գոյ խաղաղութիւն, անդ ո՛չ գոյ սէր, և ուր չիք սէր, անդէն հեռացեալ է մխիթարիչ Հոգին Աստուած և վա՜յ ժողովրդեան և ազգի, յորմէ հեռացեալ է Աստուած:

Իսկ Ձեզ միաբանից հոչակաւոր Մենաստանի Սևանայ և քահանայից շրջակայ գիւղօրէից յուշ լիցի պատգամն Աստուծոյ, որ առ Եզեկիէլ մարգարէն, եթէ որդի մարդոյ դէտ կացուցի զՔեզ ժողովրդեան իմոյ և հանապազ յիշեցէք, զի Ձեզ յանձնեցաւ քանքարն ըստ Աւետարանին ի Տեառնէ շահիլ և յաւելուլ, ուստի դուք զպարտիս Ձեր կատա-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից և 1977 թվականի № № Գ—Դ-ից:

ինչէք ամենայն Սրբութեամբ և ազատ լերուք ի խղճահարութենէ և ի պատասխանատուութենէ, մանաւորն մեղաց իւրոց պարտական լինցի:

Բաւ համարելով զայս չափ, աղօթեմք վասն Ձեր, զի հանգիցէ ի Ձեզ Հոգի Աստուծոյ, Հոգի ճշմարտութեան, Հոգի սիրոյ և խաղաղութեան, զի կացցիք, մնասցիք, առաքինի վարուք, Աստուածահաճոյ գործովք, բարւոք ընթացիք, խաղաղութեամբ և անդորրութեամբ զամենայն աւուրս կենաց Ձերոց:

Օրհնեսցէ Տէր Աստուած զՁեզ զամենեսեանդ Աստուածային օրհնութեամբ իւրով, եղիցի ձեռն Ամենակալին հովանի և պահապան Ձեզ յելս և ի մուտս՝ ի կալ մնալ անփորձ և անսասան լերևելի և յաներևոյթ թշնամեաց. Ամէն:

(ստորագրություն կաթողիկոսի) Վշտալի Գէորգ Ե. Ծայրագոյն պատրիարք և Կաթողիկոս ամենայն Հայոց

Տուաւ կոնդակս Օրհնութեան
յամի շնորհաց Փրկչին 1922 ամի
յերկրորդում աւուր ամսեան յուլիսի
և ըստ Տօմարիս ՌՑՀԱ (1922 թ.)
ի Հայրապետութեան Մերոյ Ժ ամի
յԱրարատեան Մ. Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ. Թ. 462:

№ 418
ԵՐԳԱՐԱՆ

Թերթերը՝ 66:— **Պրակները՝** 1, որ բաղկացած է 66 թերթից:— **Մեծությունը՝** 23,1×17,9×0,9 սմ.:— **Նյութը՝** դիմացկուն բարակ թուղթ:— **Կազմը՝** հաստ ստվարաթուղթ, որի առաջին երեսի վրա կպցված է գունավոր մի նկար, որ ներկայացնում է վարդի չորս կարմիր կոկոն, վեց սպիտակ մարգարտածաղիկ և մի ձեռք, որ բռնած է առագաստանավի մի նկար:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** զանազան տեսակի, այսպես՝ միապտուն՝ 4բ—5բ, 18բ, 21բ, 23բ, 33բ, 38ա, 39ա և 52բ. երկայնն՝ 6ա—18ա, 19ա—21ա, 22—23ա, 24ա—33ա, 34ա—37բ, 38բ, 39բ—50ա, 51բ—52ա, 53բ—54ա, 56ա—59բ, 61ա, 62ա և 63բ. նուագաւոր՝ 13բ, 20ա, 51ա, 53ա, 54բ—55բ, 60ա—60բ և 62բ—63ա. բառայնն՝ 47բ, 50բ և 61բ:— **Դատարկ թղթերը՝** 1ա: —**Տողերը՝** բոլորովին անհամաչափ, 21—37:— **Գծումները՝** առանց ճնշման:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրությունն՝** ձեռագիրն ունի հատարակ մանրանկարչություն: Թ. 1ա-ում կա երկու ծաղիկով մի ճյուղ: Թ. 4ա-ում կա մի խաչ, փետուր, քնար և ծաղկավոր մի ճյուղ, իսկ թ. 66բ-ում էլ դարձյալ ծաղիկներով մի ճյուղ:— **Գրիչը՝** Եղիակիմ վարդապետ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** շատ հավանաբար գրիչն է:— **Ժամանակը՝** 1910 թ.:— **Վայրը՝** Ամասիա (Արևմտյան Հայաստան):— **Ծանոթություն՝** Զատիկ Արուսյակ Խաչիկյանը սույն ձեռագիրը նվեր է բերել Էջմիածին 1973 թ. ապրիլի 18-ին, իսկ Վեհափառ Հայրապետն այն հանձնել է Ձեռագրատուն 1974 թ. մայիսի 18-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագրում տրված է 140 հոգևոր երգեր: Ամբողջ երգարանը խմորատիպով բազմացված է իր ժամանակին: Ստորև տրվում է վերնագրերի մի մասը միայն:

Թ. 3ա.—Այբուբենական ցանկ երգոց հոգևորաց:
Թ. 5ա.—Ողջոյն քեզ:
Թ. 6ա.—Ստոյգ հաւատամք:
Թ. 7ա.—Ո՞վ զի՞ մեծապանչ:
Թ. 7բ.—Բարձրեալն Աստուած:
Թ. 8բ.—Տէրն ի մեզ:
Թ. 10ա.—Պատուիրանք եկեղեցւոյ:
Թ. 12ա.—Սուրբ Խորհուրդն:
Թ. 14ա.—Միտ դիր:
Թ. 15ա.—Կայ մնայ ինձ:
Թ. 19ա.—Եմ քրիստոնեայ:
Թ. 19բ.—Հոգիդ ստեղծող:
Թ. 21ա.—Անհա այս է:
Թ. 22ա.—Հովիւք աստ:
Թ. 23բ.—Խնդա հովիւ ենք:
Թ. 25ա.—Այսօր մանկունք:
Թ. 26ա.—Ծնաւ Յիսուս:
Թ. 28ա.—Եկէք, օրհնեալք:
Թ. 30ա.—Դուք յիմ կենաց:
Թ. 31ա.—Առ ձեզ, մարդիկ:
Թ. 32բ.—Օրհնութիւն քեզ, Ս. Խաչ:
Թ. 35ա.—Արքայ ես դու:
Թ. 36ա.—Թող որդեակ:
Թ. 37բ.—Եկէք որդիք:
Թ. 39բ.—Սուրբ և մեծ:
Ով փրկարար:
Արդ զխորհուրդ:
Թ. 42ա.—Որդեակ, աշխարհ:
Թ. 43բ.—Ով սիրտ սիրոյն:
Թ. 45ա.—Ով Ս. Սիրտ Յիսուսի:
Թ. 46բ.—Ողջոյն ընդ քեզ:
Թ. 48ա.—Եմ հովուհին:
Թ. 48բ.—Եմ քո որդի, ով Մարիամ:
Թ. 53ա.—Դեռ կեանքերնուդ:
Թ. 54բ.—Խորհուրդ սրբոյ վարդապետին:
Թ. 56ա.—Ով շնորհաբաշխ:
Յիսուս, Մարիամ, Յովսէփ:
Ով քաղցրալից:
Ամենասուրբ:
Թ. 58ա.—Ողջոյն Յովսէփդ:
Թ. 59ա.—Ով Ս. Ստանիսլաս:
Ով Պերքմանս:
Թ. 60ա.—Ով պաշտպան:
Հոիփսիմէ:
Ով Տէր:
Թ. 61ա.—Լիթանիա Ս. Սրտին Յիսուսի:
Թ. 62ա.—Լիթանիա Ս. Յովսէփայ:
Թ. 63ա.—Որպէս ծաղիկ:
Ով Ս. Կոյս:
Թ. 64ա.—Ցանկ նիւթոց:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.—(Ձեռագրի տիտղոսաթերթը)
Երգք Հոգևորք,
երաժշտական չափաւ:
Ուսուցանել և խրատել զմիմեանս...
Երգօք հոգևորօք՝ և շնորհօք
Օրհնել ի սիրտս ձեր՝ զԱստուած:
(առ Կող. Գ. 16)
Ի. Մ. Փ. Ա.
Ամասիա
1910:

Թ. 2ա.—Առ աստուածասէր օրհներգու

Ահա, սիրեցեալդ իմ, փոքրիկ երգարան մը որ քեզ կու գայ երկչոտ ու անգիտակ թէ ինչ ընդունելութիւն պիտի գտնէ իւր ընթերցողներէն: Անոր գալստեան ժպտէ բարեսիրաբար, վասն զի քու սիրոյդ համար յօրինուած՝ ի լոյս գայ նա ի նպաստ հոգւոյդ, և եթէ կարելի չէ քեզ «գալուստդ բարի»ով ողջունել զայն իբր որ և է երկասիրութիւն, գոնէ հաճէ ընդունիլ իբր ձօն բարեկամ ձեռքէ մը նուիրուած:

Հեղինակին դիտումն եղած է միշտ՝ լուսասնունդ մտացդ ընծայել անմոլար խորհուրդներ, սրբազան յուզմունքներ հայթայթել խանդաղատ սրտիդ և բարի խրատներով բարեպաշտ հոգիդ կրթել, զարգացնել և ազնուացնել:

Կար տաղաչափին ստանձնելու և ձեռքէն եկածին չափ ի գլուխ հանելու սա դժուարին գործը. երաժշտական չափին ու թուոյն հետ բանաստեղծական չափը (տաղաչափութեան կանոնները զանց չառնելով) միշտ համաձայնեցնել, այնպէս որ սրբազան գաղափարը՝ որոշ եղանակի մը վրայ ձևանալով՝ առնուրանկէ իւր կերպարանքն ու նկարագիրը, իւր զանազան շարժումներն և ելևէջները, իւր տխրագին կամ բերկրալից արտայայտումը, և այս երկուքին սերտիւ միանալէն յառաջ գար իբր միակ ամբողջութիւն, չափով՝ երգուած մաղթանք մը, այսինքն հոգևոր երգ. ստուգիւ երգուելիք տաղաչափութիւն մը հարկ է այնպէս երգին զուգընթաց յառաջանալ որ երկու լծակից արուեստներն իրար չգայթեցնեն:

Սոյն գործոյս որքան դժուարին ըլլալը կրնան վկայել փորձառու արուեստագէտները, այլ քանի՞օն աւելի դժուարին եթէ հեղինակին մայրենի չէ լեզուն. վասն որոյ ևս առաւել ներողամտութեան կարօտի այնպիսի երկասիրութիւն:

Գործածած լեզուն՝ ինչ ինչ պատճառներով երգէ երգ փոխուած կը գտնես, բայց ոճը միշտ հասկնալի է: Նոյն իսկ իրենց կրած փոփոխություններով՝ դիւրաւ պիտի ճանչնաս 59, 96 և 124րդ երգերուն մէջ մեծահռչակ Հ. Ալիշանի խորհուրդներն և կամ ոտանաւորները: Նմանապէս պիտի նշմարես երկոյս մէջ հոս և հոն մտցուցած լատիներէնէ կամ գաղղիերէնէ թարգմանութիւններ: Առաջիններն ընդհանրապէս ճիշդ են՝ ըստ կարի՝ և հաւատարիմ, երբեմն ալ բան առ բան, իսկ աւելի ազատ՝ վերջիններն և լաւ ևս հետևողութիւն կրնան ստէպ նկատուիլ:

Ահաւասիկ ուրեմն, աստուածասէր ընթերցողդ, թերթավարժ ձեռքիդ գրքոյկ մը զոր՝ ուրախութեան ու տխրութեան ժամերուդ՝ սիրով կարենայ թղթատել: Ահաւասիկ աղօթասէր շրթունքներուդ և մաղթանք և օրհներգ որք ինքնին յամենայն ժամ՝ ընտիր մեղեդիներու թևերով՝ ուղղակի դէպի երկինք ի վեր պիտի սլանան:

Իցի սոյն «Երգք հոգևորք» թէպէտ բազմաթերի և անշնաշ՝ լեռնաբոյս վայրի ծաղկանց նման՝ արձակեն ընդ միշտ մտացդ՝ բուրում մը սենդարար ու կենսատու և սրտիդ՝ սրբայոյզ ու կազդուրիչ անուշահոտութիւն մը: Իցի՞ երկնատեսիչ հոգւոյդ լինին իբր հեռաւոր երկնահրաւիրակ արձագանգ՝ վերինն հայրենեաց քաղցրալուր նուագաց և օրհներգութեանց յաւերժ անլռելի:

Այս է ահա հեղինակին միակ բաղձանքը:

Ամասիա, Յունիս 21, տօնի Ս. Այոզիոսի գոնզակայ:

Եղիակիմ Վարդպ.
Ց. Ը.

Թ. 4ա.—Ամենագով Սուրբ Սրտին Յիսուսի և բազմագորով Սրտին Մարեմայ Սրբոյ Կուսի՝ Անարատ Յղացեալին՝ իւր քնարի հայաբարբառ ձայնահարի զսոյն հնչիւնս վերջին ընդ առաջին թրթռմունս անհերդաշնակ՝ ողորմուկ սրտին զհետ՝ ձօնէ անարուեստ երգողն հեղինակ թերահմուտ հայագէտ:

Թ. 66բ.—Գոհութիւն Աստուծոյ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—(Այստեղ կա լատիներեն ձվաձև մի կնիք, 3,6×2,9 սմ. չափերով, կենտրոնը փոքրիկ խաչով և փոքրիկ երեք ծաղիկներով, որի շուրջ բոլորը գրված է) RESIDENTIA S. I. TOKATENSIS
(իսկ կենտրոնում գրված է) I H S:

Թ. 1բ.—Յիշատակ Արուսեակ Շահնամեանէ
22 օգոստոս 1941 Paris:
(հետագայում այս երկու տողը ջնջված է և տեղը գրված է հետևյալը)
Ի յիշատակ հայրենիք այցելութեան,
Նվէր Էջմիածնի թանգարանին:
18-4-73: Զատիկ Արուսեակ Խաչի(կ)եան:

№ 419
ԽԱՉԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 148:— **Պրակները՝** 8, անհամաչափ, այսինքն Բ և Ը՝ 16, Գ և Է՝ 18, Ա, Դ, Ե և Զ՝ 20 թերթից են:— **Մեծությունը՝** 20,8×13,6×1,9 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հասարակ թուղթ:— **Կազմը՝** հաստ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական դեղին թուղթ:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միապույն:— **Դատարկ թղթերը՝** չունի:— **Տողերը՝** 8:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** բոլորգիր և հայկական նոր խազեր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Սերովբե Սիրունյան, աշակերտ Գրիգոր Մեհրեթյանի:— **Ժամանակը՝** 20-րդ դար:— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս:— **Ծանոթություն՝** ձեռագիրն

ստացվել է Ստամբուլից 1974 թ. ձեռամբ Բագարատ Սեմերճյանի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայկական նոր խազագրության սույն ձեռագիրը գրված և նոտագրված է պոլսահայ անվանի երաժշտապետ Գրիգոր Մեհթերյանի աշակերտ և Գումգաբուի Սուրբ Հարություն եկեղեցու երաժշտապետ Սերովբե Սիրունյանի կողմից: Գրքի գլխավոր վերնագրերը տրվում են ստորև.—

Թ. 1ա.—Հարց Աշխարհամատրան կիրակէին (գձ):
Թ. 3բ.—Մեծացուսցէ (գձ):
Թ. 4ա.—Ողորմեա (գձ):
Թ. 4բ.—Տէր յերկնից (գձ):
Թ. 5ա.—Հարց յարութեան (բկ):
Թ. 9ա.—Հարց երևման խաչի (դձ):
Թ. 18ա.—Հարց Բ-րդ Ծաղկազարդի (դկ):
Թ. 21բ.—Շարական Հոգեգալստեան (բկ):
Թ. 23ա.—Հարց տօն կաթողիկէի (գձ):
Թ. 27ա.—Շարական թափօրի (դկ):
Թ. 41ա.—Կանոն Վարդավառի (աձ):
Թ. 43ա.—Շարական (ստեղի) դկ:
Թ. 51ա.—Տաղ Աստուածածնայ: Պէյաթի. աղբր Սէմայի: Պապա Հ. Լիմոնճ(եան):
Թ. 53բ.—Երգ Աստուածածնայ:
Թ. 55ա.—Կանոն վերացման Ս. Խաչի (աձ):
Թ. 61բ.—Շարական խաչի (գկ):
Թ. 68ա.—Օրհնութիւն Վարագայ Ս. Խաչի (ակ):
Թ. 83ա.—Հարց Գիւտ խաչի (բձ):
Թ. 116ա.—Կանոն Է-րդ աւուր Ծննդեան (բձ):

Ծանոթություն

Ձեռագրում կա գրված վեց թերթիկ, որոնք ներկայացնում են «Կենդանին յաւիտենից Քրիստոս այսօր խնդրի...» շարականը:

Բացի այդ կա նաև նոտագրված երկու թերթիկ, որոնցից մեկը խնկարկության շարականն է:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբում գտնվող պահպանակի վրա գրված է)
Գրեց Սերովբէ Սիրունեան
Աշակերտ Գրիգոր Մեհթերեանի
Վաստակաւոր երաժշտապէտ
Ս. Յարութիւն եկեղեցւոյ
ի Գումգաբու 1940:
(Վերջում գտնվող պահպանակի վրա գրված է)
157 յորժամ ի խաչին.
Ծագումն.
փառաւորելով.
Որ եկեր կամաւ:

№ 420
ԱՂՕԹԱԳԻՐՔ
(Եթովպերեն)

Թերթերը՝ 32:— **Պրակները՝** 4, յուրաքանչյուրը 8-ական թերթից:— **Մեծությունը՝** 7,2×6,3×2,6 սմ.:—**Նյութը՝** դեղնած հաստ մագաղաթ:— **Կազմը՝** հասարակ հաստ տախտակ:— **Պահպանակները՝** սկզբում երկու թերթ դեղնած հաստ մագաղաթ:—**Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 31բ—32բ:— **Տողերը՝** անհամաչափ՝ 8—10:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** ամենարեն:— **Զարդագրություն՝** չունի, սակայն որոշ տեղեր կետադրությունն ու մի շարք վերնագրեր գրված են կարմիր թանաքով:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** 17—18-րդ դարեր:— **Վայրը՝** շատ հավանաբար Եթովպիա:— **Ծանոթություն՝** վեհափառ Հայրապետը սույն ձեռագիրը հանձնել է Ձեռագրատուն 1974 թ. նոյեմբերի 16-ին:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պահպանակի վրա եթովպերեն մի քանի բառ է գրված և մի մարդու հասարակ գլուխ է նկարված մատիտով:

Հետագա շրջանում եթովպերեն որոշ բառեր են գրված հետևյալ էջերում.— թթ. 8բ, 9բ, 11ա, 12բ, 14բ, 21ա, 24ա, 25ա, 25բ, 26ա, 27ա, 28ա, 29ա, 29բ, 31ա, 31բ, 32ա և 32բ:

№ 421
ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ 249:— **Պրակները՝** 26, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԻԶ՝ 2, Ա՝ 4, Ը՝ 6, ԻԴ՝ 7, Գ, Ե, ԺԹ և ԻԲ՝ 8, Զ, ԺԲ և ԺԴ՝ 9, ԺԷ և ԻԳ՝ 10, Բ, Է, ԺԶ, ԺԸ և ԻԱ՝ 11 թերթից են, բոլորն էլ ամբողջավոր: Այսպես ուրեմն 26 պրակի վրա միայն ութն են լրիվ (Դ, Թ, Ժ, ԺԱ, ԺԳ, ԺԵ, Ի և ԻԵ), որոնք ունեն 12-ական թերթ:— **Մեծությունը՝** 15,6×11,1×5,8 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած դիմացկուն թուղթ:— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով նախշեր են նկարված: Երկու բոնիչներն ընկել և կորել են:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** շատ վատ, բազմաթիվ թերթեր (60-ից ավելի) կտրատվել և թափվել են. պակասում է հիշատակարանը:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթեր՝** չունի:— **Տողերը՝** 23:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** ձեռագրում պահպանվել են երեք գլխազարդեր (89բ, 207ա և 236ա), կան մի քանի խաչեր և թռչուններ: Կան բազմաթիվ զարդագրեր, թռչնագրեր և լուսանցազարդեր: Այս բոլորն ունեն միջակ որակի գեղեցկություն:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 16—17-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ: **Ծանոթություն՝** ձեռագիրն ստացվել է Կահիրեից, Եգիպտահայոց թեմի առաջնորդական տեղապահ Զավեն Եպիսկոպոս Չինչինյանի ձեռամբ 1973 թ. նոյեմբեր ամսին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Միջնադարյան այս շարակնոցում օգտագործված են հայկական հին խազերը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Կոնակի կազմի ներսի երեսում կպցված է 4×4 սմ. չափերով փոքրիկ մի պատառիկ, որ պատկանել է

նախապես ձեռագրին: Ըստ երևույթին այն եղել է մատյանի գլխավոր հիշատակարանի մի մասնիկը: Այժմ դեղնել, սևացել և կեղտոտվել է, որով գրեթե անընթեռնելի է դարձել:

Հստակ կարդացվում է մի քանի բառ միայն.—
... սրմայ յիշ ...
զհոգևոր քոյր իմ և զ...
... ընդանիսն ...
և զիմ անարժանութիւ ...
բա ... յիշմամբ ... ա:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

Թ. 1ա.—Թիւ 5:
Թ. 15ա.—Սր. Յովհաննէս:
Թ. 20բ.—Գրչի (և մի քանի տառեր, որպես գրչափորձ):
Թ. 41բ.—արգդեզէրթժիլ:
Թ. 59ա.—ապրգդեզ:
Թ. 102բ.—Մա(դանսը սատկի ամէն:
Թ. 108բ.—(Այբուբենի գրչափորձ):
Թ. 112բ.—Օհանէս (հինգ անգամ)
Գառը կը սատկի
(այբուբենի գրչափորձ):
Թ. 120բ.—Ըստեփան Արդին ժվակ:
Թ. 134բ.—Արդին:
Թ. 144բ.—(Այբուբենի գրչափորձ):
Թ. 156բ.—Խաչարգէուր:
Թ. 168բ.—Մեղս:
Թ. 169բ.—և չափ բնակցութեամբը հիմնայփալ-լեցեր:
Թ. 211ա.—Գալովթ: Վթ:
Սրաբանա:
Թ. 228բ.—Այս գիրը Ըստեփան է:
Թ. 243բ.—Լուլուան ...:

№ 422
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Թերթերը՝ 186:— **Պրակները՝** 20, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Զ՝ 2, Դ՝ 7, Ի՝ 10, Ե, Ը և ԺԶ՝ 11, ԺԷ՝ 14 թերթից են: Բացի այդ Ա, Բ և Գ պրակները լրիվ պակասում են, որով ձեռագրի սկզբից 40—41 թերթ ընկել և կորել են:— **Մեծությունը՝** 14,5×11×3 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով նախշեր են նկարված: Կազմի առաջին երեսը, ինչպես նաև երկու բռնիչներն ընկել և կորել են:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** շատ վատ, պակասավոր, ընկել և կորել են մի քանի պրակ, բազմաթիվ թերթեր և ձեռագրի գլխավոր հիշատակարանը:— **Գրությունը՝** միապյուն:— **Դատարկ թղթեր՝** չունի:— **Տողերը՝** 17:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** ձեռագիրն ունի բազմաթիվ լուսանցազարդեր և թոչուններ, զարդագրեր և թոչնագրեր, ինչպես նաև մի գմբեթ (118ա) և հինգ գլխազարդեր (41բ, 70ա, 101բ, 128ա և 156բ), բոլորն էլ միջակ որակի գեղեցկությամբ:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 17-րդ դար:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** ձեռագիրն ստացվել է Կահիրեից, Եգիպտահայոց թեմի առաջնորդական տեղապահ Զավեն Եպիսկոպոս Չինչինյանի ձեռամբ 1973 թ. նոյեմբեր ամսին:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 2ա.—№ 7:
Թ. 7ա.—Թիւ 7:

№ 423
ՍԱՂՄՈՍԱՐԱՆ

Թերթերը՝ 152:— **Պրակները՝** 14, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Գ՝ 2, ԺԶ՝ 9, Դ, Ը և Թ՝ 11 թերթից են:— **Մեծությունը՝** 12,9×8,8×3,8 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած թուղթ:— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով նախշեր են նկարված: Երկու բռնիչներն ընկել և կորել են:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական թերթ մագաղաթ, լատիներեն գրությամբ, որ հավանաբար 14—15-րդ դարերի կարող է պատկանել: Դժբախտաբար սկզբի պահպանակը կտրատված է, մնում է միայն 1,5×12,5 սմ. չափերով փոքրիկ մի պատառիկ:— **Վիճակը՝** վատ, շատ թերի է, պակասում է սկզբից գրեթե ամբողջական երեք պրակ, նաև վերջից ձեռագրի հիշատակարանն ընկել է:— **Գրությունը՝** միապյուն:— **Դատարկ թղթեր՝** չունի:— **Տողերը՝** 20:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** ձեռագիրն ունի հասարակ հինգ գլխազարդ (9ա, 33ա, 78ա, 100ա և 123ա), մի հատ կենդանագիր (102բ), բազմաթիվ լուսանցազարդեր, թոչնագրեր և զարդագրեր, ինչպես նաև երկու հատ մարդագիր-թոչնագիր (21բ և 73ա):— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 16—17-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** ձեռագիրն ստացվել է Կահիրեից, Եգիպտահայոց թեմի առաջնորդական տեղապահ Զավեն Եպիսկոպոս Չինչինյանի ձեռամբ 1973 թ. նոյեմբեր ամսին:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Թիւ 4:
Թ. 9ա.—Զի ի գիշերի և ի տու:
Թ. 77բ.—Սաղմոսարանս իշ Այվոզին է:
Ասի Կիրակոս գրէ եթէ ...:
Թ. 134ա.—Ա-սուղոս:
Թ. 152բ.—Աաաբրլ:
(Վերջի մագաղաթյա պահպանակի վրա գրված է)
Ի վայելումն Թորունա ...լուին:

(Շարունակելի)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հաղորդագրություն 3

Հայրապետական հանդիսավոր պատարագ Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում 5

Ատվածաշնչական ընթերցումներ 10

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ (ԵՂԻՎԱՐԴ)—Բարի լուրը . . . 12

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 16

ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ—Հայ գրականության մեծ երախտավորը 20

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ—Վարդանանք (հատված) 24

Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Սուրբ Բարսեղ Հայրապետ Կեսարացի 26

ԳՐԻԳՈՐ ՓԻՏԵՃՅԱՆ—Նորահրաշ (նոտա) 33

ՅՈՒ. Ա. ԹԱՄԱՆՅԱՆ—Վայոց ձորի ս. Կարապետ եկեղեցու վերանորոգումը . . 40

ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ—Շոռոթի և Գաղի եկեղեցական ճարտարապետական հուշարձանները 46

Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի Աշխատանքային կոմիտեի նստաշրջանը Քենիայում 57

Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 59

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 16.5.1977 թ.: Ստորագրված է տպագրության 20.6.1977 թ.:
Տպագրական 4 մամուլ + 1 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 363:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1977 թ.

ՀՍՍՀ ԱԿԱ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻՆՅԱՍՆՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ